

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(SCIENTIFIC JOURNAL)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)

1 (26)

Թ՞ԵԸԱԱ ԶԸԹ. ԶԻՕ՞ԶՍ
Թ՞Ի՞ՍՍԻԶԸ
241



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
241

ԵՐԵՎԱՆ
2023

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), Ա.Ի. Շահնազարյան (գլխավոր խմբագիր), Ա.Ռ. Խոսրոնա (ԱՄՆ), Ա.Վ. Դումիկյան (ԱՄՆ), Խ.Ր. Գազեր (ԳՖՀ), Ի.Վ. Կրյուչկով (ՌԴ), Հ.Ղ. Մուրադյան, Ռ.Օ. Սահակյան, Վ.Հ. Թորոսյան, Ն.Ս. Ադամյան (պատ. քարտուղար)

Редакционная коллегия

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель председателя), А.И. Шахназарян (главный редактор), А.Р. Хосроева (США), А.В. Думикян (США), Х.Р. Газер (ФРГ), И.В. Крючков (РФ), А.Г. Мурадян, Р.О. Саакян, В.Г. Торосян, Н.С. Адамян (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonyan (chairman of the board), K.H. Khachatryan (deputy chairman of the board), A.I. Shahnazaryan (editor-in-chief), A.R. Khosroeva (USA), A.V. Dumikyan (USA), H.R. Gazer (FRG), I.V. Kryuchkov (RF), H.Gh. Muradyan, R.O. Sahakyan, V.H. Torosyan, N.S. Adamyan (executive secretary)

Պարբերականի հերթական համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Տպ. - ISSN 1829-4596


Էլ. - ISSN 2953-8084

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2023

ՎԱՇ Ը. ԹՈՐՈՍՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

vahetorosyan7@gmail.com

 0000-0002-0717-552X

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-3

ՀԱՅ-ԼԱՏԻՆ ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1230-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԻՆ ԵՎ 1240-ԱԿԱՆ ԹԹ.*

*Քանայի բառեր*¹ Կիլիկյան Հայաստան, Կոստանդին Ա Բարձր-բերդցի, Գրիգոր IX, Գերմանոս II, Հայոց կաթողիկոս, Հռոմի պապ, Կոստանդնուպոլսի պատրիարք:

Ներածություն

1230-ական թթ. վերջին և հաջորդ տասնամյակում հայ-լատին և հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները նկատելիորեն ակտիվ էին: Ինչպես ցույց է տալիս այդ մասին վկայող վավերագրերի ուսումնասիրությունը, խնդրո առարկա հարաբերությունները եղել են փոխկապակցված: Հակադարձելու համար Անտիոքի լատին պատրիարքության գերագահությունն ընդունելու պահանջին, որը Հայոց կաթողիկոսությանը ներկայացվել էր Հռոմի պապից, Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցին (1221–1267), Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ը

* Ներկայացվել է 15.V.2023 թ., գրախոսվել է 18.V.2023 թ. և 19.V.2023 թ., ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

(1226–1270) ու Ջաբել թագուհին եկեղեցական միության շուրջ բանակցություններ են սկսում Նիկիայի կայսեր և Կոստանդնուպոլսի հույն պատրիարքի հետ: Հայկական կողմի դիվանագիտական ջանքերը պսակվում են հաջողությամբ, քանզի հայ-բյուզանդական եկեղեցական հնարավոր մերձեցմամբ մտահոգ՝ Հռոմի պապն ի վերջո հրաժարվում է իր պահանջից:

Հայ-բյուզանդական եկեղեցական միության փորձերը 1230-ական թթ. վերջին – 1240-ական թթ.

Ինչպես հայտնի է հայ-բյուզանդական հարաբերությունների նախընթաց շրջանի պատմությունից, եկեղեցական միությամբ մեծ մասամբ շահագրգռված են եղել բյուզանդական արքունիքն ու Կոստանդնուպոլսի պատրիարքությունը: Ուշագրավ է, որ քննվող ժամանակամիջոցում նախաձեռնողը հայկական կողմն էր: Այդ են վկայում Կոստանդնուպոլսի Գերմանոս II (1222–1240) և Մանուել II պատրիարքների (1244–1255) նամակները Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցուն և թագավոր Հեթում Ա-ին: Այս վավերագրերն ականավոր բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանի հայերեն թարգմանության շնորհիվ առավել հասու դարձան հայագետներին¹: Նամակներից պարզվում է, որ Հեթում Ա-ը հայոց և հունադավան եկեղեցիների միություն ստեղծելու նպատակով՝ 1239 թ. կամ ավելի վաղ (հավանաբար նախորդ տարում) Անտիոքի հույն պատրիարքի միջոցով դիմել է Բյուզանդիայի կայսր Հովհաննես Վատացեսին (1222–1254) և Կոստանդնուպոլսի Գերմանոս II պատրիարքին: Հեթում Ա-ի առաջարկից ոգևորված՝ պատրիարքը, կայսեր իմացությամբ, Կիլիկյան Հայաստան է ուղարկում Մելիտենեի Հովհաննես մետրոպոլիտին, որը Կոստանդին Ա Բարձրբերդցուն փոխանցում է Գերմանոս II-ի նամակը: Ի պատասխան՝ հայկական

¹ **Բարթիկյան** 2006, 27–63: Նամակների մասին տե՛ս նաև **Բոզոյան** 2016, 66–75:

կողմը հայտնում է, որ Հեթում Ա-ը շուտով պատվիրակներ է ուղարկելու Նիկիա՝ միության խնդիրը քննարկելու: Սակայն, մինչ հայկական պատվիրակությունը կհասներ այնտեղ, Գերմանոս II-ը մահանում է (1240 թ.): Չնայած դրան՝ կայսրը եպիսկոպոսների ժողով է հրավիրում, որն էլ որոշում է դեսպանություն ուղարկել Կիլիկյան Հայաստան: Սակայն, երբ կայսեր ներկայացուցիչները հասնում են Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաք Սիս, պարզվում է, որ Հայոց կաթողիկոսն այնտեղ չէ՝ մեկնել է Հռոմկլա: Հեթում Ա-ը բյուզանդական պատվիրակությանը հայտնում է, որ եկեղեցիների միությունը, առանց Հայոց կաթողիկոսի և մյուս եպիսկոպոսների համաձայնության, չի կարող կայանալ: Այս ամենը հարուցում է բյուզանդացիների զարմանքն ու տարակուսանքը. «Քիչ ժամանակ անց քո (Հեթում Ա-ի – Վ.Թ.) պատուիրակները հաւատոյ խոստովանութեան գրով ժամանեցին մեր հզօր, Աստուից իմաստնացած սուրբ կայսեր մօտ: Նրա սուրբ թագաւորութիւնը հրաւիրեց մեր ազգի բոլոր եպիսկոպոսներին, քանի որ սուրբ պատրիարք տէր Գերմանոսը մահկանացուն կնքել էր, ծանօթացրեց ձեր հաւատոյ խոստովանութիւնը բովանդակող գրի հետ եւ բոլորի հաւանութեամբ Մելիտենէի սրբազնագոյն մետրոպոլիտին եւ պատրիարքական իշխանաւորներից մէկին թագաւորական ու ժողովական գրութիւններով ուղարկեց՝ իրականացնելու հաւատոյ միութիւնը: Սակայն քեզ մօտ ժամանողները եւ նամակները քեզ յանձնողները փոքր անց ձեռնունայն վերադարձան: Պատճա՛հը: Քո ասելով՝ ձեր կաթողիկոսը բացակայում է, նա Հռոմկլայում է եւ առանց նրա եւ ձեր բոլոր եպիսկոպոսների կամքի չէք կարող միութիւնն իրականացնել»², - կարդում ենք Մանուել II-ի նամակում:

Քանզի, հազիվ թե Կոստանդին Ա Բարձրբերդցին անտեղյակ լիներ բյուզանդական պատվիրակության մոտալուտ այցից, սխալ չի լինի կարծել, որ Սսից նրա բացակայելը եղել է կանխամտած-

² Բարթիկեան 2006, 57:

ված: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ հայկական կողմը, նախաձեռնող լինելով հանդերձ, ամեն գնով ձգտել է դադարեցնել ընթացք ստացած բանակցությունները: Ի՞նչ դրդապատճառ(ներ)ով: Գուցե՝ քաղաքական, կամ զուտ եկեղեցական հանգամանքների ազդեցությամբ, թե՛ երկուսը միասին:

Անշուշտ, ստույգ է, որ ինչպես հայ-լատին, այնպես էլ՝ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները գրեթե միշտ ունեցել են քաղաքական ենթահող, առավել ևս՝ այդ շրջանում: Ամենևին դժվար չէ մատնացույց անել հայկական կողմի քաղաքական շահախնդրությունը հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների այս փուլում, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Հովհաննես Վատացեալը նկատելիորեն ամրապնդել էր կայսրության դիրքերը³: Սակայն դրանց կասեցմանն ուղղված ակնհայտ քայլերը ստիպում են կարծել, որ հայկական կողմն առաջնորդվել է այլ դրդապատճառ(ներ)ով:

Հեթում Ա-ին և Կոստանդին Ա Բարձրբերդցուն Մանուել II պատրիարքի հղած նամակից պարզ է դառնում, որ հայերը 1247–1248 թթ. ձմռանը եկեղեցիների միության առաջարկով կրկին դիմել են Բյուզանդիայի կայսրին և Կոստանդնուպոլսի պատրիարքին, որոնք, ինչպես նախորդ անգամ, անթաքույց ոգևորությամբ ընդունել են այն: Նա գրել է. «Այդ ժամանակուանից (նկատի ունի Կոստանդին Ա Բարձրբերդցու նախաձեռնած եկեղեցական միության առաջին փորձը – Վ.Թ.) ցայժմ անցան տարիներ եւ, ինչպէս տեսնում ենք, հաւատոյ [միութիւնն էք վերստին խնդրում. հաւատոյ] համափառ գրութեամբ մեր հզօր եւ Աստուծով կառավարող սուրբ կայսեր մօտ ձեր ուղարկած պատուիրակները ժամանեցին: Մենք հարցը անուշադրութեան չմատնեցինք, խառն իրավիճակի վրայ ուշադրութիւն չդարձրեցինք, նրա քննարկումը չձգձգեցինք...»⁴: Հե-

³ Նիկիական կայսրության մասին տե՛ս **Жаворонков** 1974, 100–121.

⁴ **Բարթիկեան** 2006, 57:

տաքրքրական է, որ պատրիարքի այս նամակին ժամանակային առումով մոտ է Հեթում Ա-ին Հռոմի Ինոկենտիոս IV պապի (1243–1254) հղած պահանջն իր գերագահությունն ընդունելու և Հայոց եկեղեցում ծիսական ու դավանական բնույթի փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Այդ մասին տեղեկանում ենք Հեթում Ա-ին 1248 թ. Կոստանդին Ա Բարձրբերդցու հղած թղթից, որը Կիլիկյան Հայաստանի թագավորին Հռոմի պապի 1246 թվակիր գրության պատասխանն է և որով կտրականապես մերժվում են Հայոց եկեղեցուն ներկայացված պահանջները⁵:

Այս ամենը հաշվի առնելով՝ Հրաչ Բարթեկյանը հռետորական հարց է բարձրացնում՝ իրավացիորեն կապ տեսնելով հայ-լատին ու հայ-բյուզանդական գրեթե համաժամանակյա հարաբերությունների միջև՝ գրելով հետևյալը. «Արդեօ՞ք 1248 թ Բիզանդիայի եւ Հռոմի՝ Կիլիկիայում միաժամանակ ծաւալած, կարելի է ասել, դիւանագիտական քայլերը (որոնց նախաձեռնողը Կիլիկիայի աշխարհիկ եւ եկեղեցական ղեկավարներն էին) ժամանակի առումով պատահական զուգադիպութիւն էին կամ մէկը միւսին կանխելու եւ երկրում իրենց ազդեցութիւնը տարածելու փորձեր, թե՞ Կիլիկիայի հայոց ղեկավար աւագանու դիւանագիտական քայլեր»⁶: Կարծում ենք՝ փոխկապակցված պետք է համարել հայ-լատին և հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների ոչ միայն 1246–1248 թթ., այլ նաև 1230-ական թթ. վերջի դրվագը:

Անտիոքի լատին պապրիարքության գերագահական նկրտումները Հայոց կաթողիկոսության նկատմամբ

1230-ական թթ. վերջի հայ-լատին եկեղեցական հարաբերությունները քանիցս արծարծվել են մասնագիտական գրականության մեջ: Այդ մասին վկայող վավերագրերը, որոնք մի կողմից՝

⁵ Գիրք թղթոց 1901, 503–509:

⁶ Բարթեկյան 2006, 35:

Հռոմի Գրիգոր IX պապի (1227–1241), մյուս կողմից՝ Կոստանդին Բարձրբերդցու, Հեթում Ա-ի և Ջաբել թագուհու փոխանակած նամակներն են, հայերեն թարգմանությամբ առաջին անգամ շրջանառության մեջ է դրել թեանտինյան հայտնի քարոզիչ Կղեմես Գալանոսը տակավին XVII դարում⁷: Դրանցից պարզվում է, որ Անտիոքի լատին պատրիարքը 1238 թ. դիմել է Հռոմի պապին՝ խնդրելով Հայոց կաթողիկոսին հարկադրել՝ ընդունելու իր գերազահությունը: Գրիգոր IX-ը բավարարել է այդ խնդրանքը: Այդ մասին տեղեկանում ենք Ապամեայի և Մամեստիայի արքեպիսկոպոսներին նրա հղած նամակից, որով Հռոմի պապը նրանց գործուղել է Հայոց կաթողիկոսի մոտ՝ հորդորելով ենթարկվել Անտիոքի լատին պատրիարքի պահանջին, իսկ մերժման պարագայում՝ հիմնավորել այն⁸:

Հաջորդ վավերագիրը, որին անդրադառնում է Կղեմեսու Գալանոսը, Հեթում Ա-ին և Ջաբել թագուհուն Հռոմի պապի հղած պատասխան նամակն է, որը հայտնում է ծիսական փոփոխություններ կատարելու հայկական կողմի պատրաստակամության մասին⁹: Խոսքն այնպիսի ծեսերի մասին է, որոնք նախկինում առկա էին եղել Հայոց եկեղեցու ծիսակարգում, սակայն ինչ-ինչ պատճառներով դադարել էին կատարվել:

Քննության առարկա թեմային վերաբերող վերջին փաստաթուղթը, որն առկա է Կղեմես Գալանոսի երկում, Գրիգոր IX-ի պատասխան նամակն է Կոստանդին Ա Բարձրբերդցուն՝ նրան պալիում, խույր և մատանի շնորհելու վերաբերյալ¹⁰:

⁷ Կղեմես Գալանոս 1650, 373–376:

⁸ Կղեմես Գալանոս 1650, 374: Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 319.

⁹ Կղեմես Գալանոս 1650, 374–375: Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 333.

¹⁰ Կղեմես Գալանոս 1650, 375–376: Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 335–336.

Կղեմես Գալանոսի հրապարակած վավերագրերից ամենևին պարզ չի դառնում, թե ինչ հանգուցալուծում է ստացել Անտիոքի պատրիարքի հարուցած խնդիրը. Հայոց կաթողիկոսն ընդունե՞լ է նրա գերագահությունը, թե՞ ոչ: Մինչդեռ, Ապամեայի և Մամեստիայի եպիսկոպոսներին Գրիգոր IX պապի հասցեագրած նամակից հետո Հեթում Ա-ին և Զաբել թագուհուն նույն պապի հղած պատասխանի, ինչպես նաև Կոստանդին Ա Բարձրբերդցուն իշխանական տվչություն խորհրդանշող պալիումի, խույրի և մատանու փոխանցումը հավաստող նամակի վկայակոչումը կարող է տպավորություն թողնել, որ Հայոց կաթողիկոսը, կարծես, ընդունել է Հռոմի պապի պահանջն Անտիոքի լատին պատրիարքի գերագահությունը ճանաչելու վերաբերյալ:

Ծանոթ լինելով միայն Կղեմես Գալանոսի հրապարակած նամակներին և վստահ լինելով, որ Հայոց կաթողիկոսը, այդուհանդերձ, արձագանքել է¹¹ Գրիգոր IX պապին, Մաղաքիա Օրմանյանը կարծել է, որ նրան ուղղված պատասխանը հայտնի «Դաշանց թողթն» է¹²: Այս կարծիքի համար հիմք է ծառայել Հեթում Ա-ին և Զաբել թագահուն Հռոմի պապի հղած նամակում «Դաշանց թղթի» գլխավոր կերպարներից Գրիգոր Լուսավորչի և Սեղբեստրոս պապի (314–334) վկայակոչումը: Բացի այդ, «Դաշանց թղթուն» արձանագրված է Արևելքի պատրիարքությունների (այդ թվում՝ Անտիոքի) շրջանում Հայոց կաթողիկոսի զբաղեցրած գերագահ դիրքի մասին¹³, որը, փաստորեն, Անտիոքի լատին պատրիարքի պահանջի

¹¹ Հայոց կաթողիկոսի պատասխանը հայտնի չէ: Ամենևին բացառված չէ, որ այն չի եղել, և հարցի արձարծումն ավարտվել է Կոստանդին Ա Բարձրբերդցուն և Ապամեայի ու Մամեստիայի եպիսկոպոսների միջև տեղի ունեցած քննարկմամբ:

¹² **Օրմանեան** 2001, սյունակ 1887:

¹³ Նկատի ունենք վավերագրի հետևյալ հատվածները. «...*ձեռնադրեցաք (Սեղբեստրոս պապը – Վ.Թ.) զկաթողիկոսն հայոց զսուրբն Գրիգոր՝ պապ և պատրիարք և հայրապետ, հրամանահան փիեղերական ժողովս, համապատիւ մեր հզար աթոռոյս և Երուսաղէմացոյն և Անփիոքացոյն և Աղէքսանդրա-*

մերժումն է: Այս ամենը հաշվի առնելով՝ Մաղաքիա Օրմանյանը կարծում է, որ «Դաշանց թուղթը» գրվել է հենց այս խնդրի առթիվ¹⁴:

Մասնագիտական գրականության մեջ քաղաքացիություն ստացած տեսակետի համաձայն՝ «Դաշանց թուղթը» ստեղծվել է Լևոն Ա Մեծագործի (1187–1219) գահակալության շրջանում՝ արտացոլելով այդ ժամանակվա իրողությունները¹⁵: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ այն, որպես Հռոմի պապին ուղղված պատասխան, կամ հայ-լատին եկեղեցական միության վերաբերյալ Հայոց եկեղեցու դիրքորոշման արտահայտություն, չէր կարող ներկայացվել նաև 1230-ական թթ. վերջին: Ի դեպ, Գրիգոր IX-ի նամակում Գրիգոր Լուսավորչի և Սեդեքստրոս պապի վկայակոչումը հիմք է տալիս պնդելու, որ «Դաշանց թուղթն» այդ ժամանակ, այդուամենայնիվ, ներկայացվել է, կամ՝ ծանոթ է եղել Հռոմի պապին: Գոյություն ունի այս տեսակետը հաստատող մեկ այլ կրված ևս, որին կանդրադառնանք ստորև: Ի դեպ, «Դաշանց թուղթը» հայ եկեղեցական ու քաղաքական շրջանակներում պահպանվել է բավական երկար ժամանակ և պարբերաբար վկայակոչվել-օգտագործվել՝

ցոյն» (Pogossian 2010, 392), «Եւ պապրիարգարանքն երեքին՝ Երուսաղէմիի և Անպիոքլայի և Աղէքսանդրիայ, յորժամ պապրիարգ ձեռնադրեն, կամաւք և ընտրութեամբ հայոց հայրապետին լինիցի: Եւ որ ոք նոր նստցի յաթոռ պապրիարգութեան, զդասնութիւն հաւարոյն իւրոյ, զոր պարտ էր մեզ ծանուցանել, զայն հայոց հայրապետին ծանուցէ, զի զնա (Սբ Գրիգոր Լուսավորչին – Վ.Թ.) կարգեցաք մեզ (Սեդեքստրոս պապի – Վ.Թ.) գլխաւորիսան և հրամանահան ի վերայ ամենայն ասիական միջնաշխարհիդ, և յելս արևու...» (Pogossian 2010, 396):

¹⁴ **Օրմանեան** 2001, սյունակ 1887: Այս տեսակետը տե՛ս նաև Անապատական 1973, 140–141:

¹⁵ Այս հարցի քննությունը տե՛ս **Բարթիկյան** 2004, 65–116: **Sirinian** 2003, 79–99. **Շիրինյան** 2006, 53–77: **Halfter** 1996: **Halfter** 2009, 71–74: «Դաշանց թղթի» քննական հրատարակությունն արժեքավոր ուսումնասիրությամբ տե՛ս Pogossian 2010:

Հռոմի պապական աթոռի հետ Հայոց կաթողիկոսների վարած բանակցություններում¹⁶:

Գրիգոր IX պապի «անհայտ» նամակները Հեթում Ա-ին, Ջաբել թագուհուն և Կոստանդին Ա Բարձրբերդցուն

Վերադառնալով Կղեմես Գալանոսի վկայաբերած նամակներին՝ նշենք, որ դրանք խնդրին վերաբերող միակ վավերագրերը չեն: Նա, անշուշտ, քաջաճանոթ էր Հռոմի պապական դիվանի փաստաթղթերին, սակայն, կամա թե ակամա, չի անդրադարձել Անտիոքի լատին պատրիարքի հարուցած խնդրին առնչվող մյուս վավերագրերին, որոնք քննության առարկա հարցի լիարժեք ուսումնասիրման բանալի են: Դրանց շարքում հատկապես կարևոր են Գրիգոր IX պապի նամակները՝ հասցեագրված Անտիոքի լատին պատրիարքին, որոնք մեծապես նպաստում են հարցի համակողմանի ու լիարժեք քննությանը¹⁷:

Այսպես, այդ վավերագրերից պարզ է դառնում, որ Անտիոքի լատին պատրիարքի գերագահությունն ընդունելու պահանջը ներկայացվել է ոչ միայն Հայոց կաթողիկոսին, այլև այդ պատրիարքությունում գործող հույն, հայ ու վրացի հոգևորականներին: Նրանց հասցեագրած 1238 թ. հունիսի 26-ի նամակում Գրիգոր IX պապը հորդորում է անվերապահորեն ճանաչել տեղի լատին պատրիարքի իշխանությունը¹⁸: Դատելով մյուս վավերագրերից՝ Գրիգոր IX-ի և Անտիոքի լատին պատրիարքի թիրախում նախ և առաջ եղել է Անտիոքի հույն պատրիարքությունը, քանի որ հենց նա էր լատին պատրիարքի իշխանության գլխավոր սպառնալիքը: Նույն օրը՝

¹⁶ Հովհաննիսյան 1957, 58–92:

¹⁷ Այս նամակներին, առանց նրանց բովանդակությունը մանրամասն ներկայացնելու, անդրադարձել է Շառլ Ֆրաեզեն՝ եզրակացնելով, որ խնդիրը հանգուցալուծվել է հօգուտ հայկական կողմի (հայկական անկախության), այսինքն՝ Հայոց կաթողիկոսությունը պահպանել է իր ինքնիշխանությունը (Fraxzee 1976, 40).

¹⁸ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 320.

1238 թ. հունիսի 26-ին գրված մեկ այլ նամակով՝ Հռոմի պապը հայտնում է, որ նախկինում Անտիոքի հունադավան պատրիարքությանը պատկանող տարածքները, նաև նրանք, որոնք ազատագրվելու են մուսուլմաններից, պետք է ենթարկվեն լատին պատրիարքի իշխանությանը¹⁹:

Փաստորեն Անտիոքի լատին պատրիարքության դեմ պայքարում հունական պատրիարքության և Հայոց կաթողիկոսության շահերը համընկնում էին, ինչը, անշուշտ, կարող էր նպաստել նրանց համագործակցությանը: Ուստի, սխալ չի լինի կարծել, որ հենց այս հանգամանքը հաշվի առնելով է Կոստանդին Ա Բարձրբերդցին, անշուշտ, Հեթում Ա-ի համաձայնությամբ, եկեղեցիների միության առաջարկով դիմել Նիկիայի կայսր Հովհաննես Վատացեսին ու Կոստանդնուպոլսի Գերմանոս II պատրիարքին: Ասվածն անուղղակի հաստատվում է նաև այն հանգամանքով, որ Հայոց կաթողիկոսն իր առաջարկը Հովհաննես Վատացեսին և Գերմանոս II պատրիարքին ուղարկել է հենց Անտիոքի հույն պատրիարքի²⁰ միջոցով:

Այժմ անդրադառնանք վերին արված այն հարցադրմանը, թե ինչու հայկական կողմը հայ-բյուզանդական եկեղեցական միության բանակցությունները նախաձեռնելով հանդերձ, դադարեցրեց դրանք: Այս առթիվ Հրաչ Բարթիկյանը գրում է. «Ինչպես երեւում է (նամակների ուսումնասիրութիւնից – Վ.Թ.), դիմելով Բիւզանդիային եկեղեցիների միութեան խնդրով, լինելով հարցը բարձրացնողներն ու նախաձեռնողները, հայերը զգուշանում էին բիւզանդական կողմի խիստ միակողմանի դիրքորոշումից: Յոյները որեւէ դաւանական զիջման չէին գնում եւ հայերին համարում էին հերետիկոսներ, որոնք պէտք է անվերապահօրէն ընդունեն Քաղկեդոնը: Հայե-

¹⁹ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 321.

²⁰ Հրաչ Բարթիկյանը ենթադրում է, որ խոսքը Դորոթեոսի (1219–1254) մասին է: Սակայն, որպես Անտիոքի հույն պատրիարք, այդ ժամանակ հիշատակվում է նաև Սիմեոն Բ-ը (**Ղազարյան** 2020, 398):

րը, տեսնելով բիզնեսական կողմի կարծի դիրքորոշումը դաւանական խնդիրներում եւ գիտակցելով սեփական դաւանութեանը հարազատ մնալու անհրաժեշտութիւնը, յոյս էին տածում փոքր զիջումների գնով գոնէ ժամանակաւորապէս ապահովել տուեալ պահի իրենց քաղաքական ու ռազմական պահանջները: Էական զիջումների մասին խօսք անգամ լինել չէր կարող: Դարեր շարունակուող դաւանական պայքարն առաւել եւս ամրապնդել ու բիւրեղացրել էր սեփական արժէքների համակարգը հայ հասարակութեան ամենատարբեր խաւերի մէջ եւ որեւէ մէկը, ով կը փորձէր գնալ յոյն կամ լատին եկեղեցիներին ենթարկուելու քայլին, նախօրոք դատապարտուած էր կատարեալ ճախողման»²¹: Իրապես, թե՛ Գերմանոս II-ի և թե՛ Մանուէլ II-ի նամակներում կային Հայոց եկեղեցուն հասցեագրված քրիստոսաբանական բնույթի մեղադրանքներ և «երկու կամքի և երկու ներգործության» վարդապետությունն ընդունելու պահանջ²², որին Հայոց եկեղեցին կտրականապես դեմ էր: Այս ամենը, անշուշտ, ընթացք ստացած բանակցությունները միակողմանի դարեցնելու բավարար հիմք էր, սակայն, ինչպես ստորև կ'տեսնենք, կային նաև այլ, ոչ պակաս զորեղ դրդապատճառներ:

Հրաչ Բարթիկյանը կարծում է, որ հայկական կողմը, հաշվի առնելով այդ ժամանակ Կոստանդնուպոլսի պատրիարքության տկար վիճակը, հույս է ունեցել, որ Բյուզանդիան կնահանջի եկեղեցիների միությանը վերաբերող իր կարծի դիրքորոշումից և կգնա փոխզիջման, ինչը, փաստորեն, տեղի չունեցավ²³: Այդ դեպքում, ի՞նչ անկալիքով է հայկական կողմը երկրորդ անգամ դիմել Նիկիայի կայսրին և Կոստանդնուպոլսի պատրիարքին: Գերմանոս II-ին և Մանուէլ II-ին Կոստանդին Ա Բարձրբերդցու ուղարկած նա-

²¹ Բարթիկյան 2006, 33–34:

²² Բարթիկյան 2006, 39–61:

²³ Ի դեպ, գրեթէ նույն պատճառով (նկատի ունենք փոխզիջում չկատարելը) ապարդյուն անցավ նաև 1230-ական թթ. լատին ու հունաղական եկեղեցիների միության փորձը (**Жаворонков** 1974, 106–108).

մակները, ցավոք, չեն պահպանվել, ուստի, դժվար է ստույգ ասել, թե Հայոց կաթողիկոսն ինչ առաջարկներ է ներկայացրել այդ պատրիարքներին: Չնայած դրան՝ մեկ բան աներկբա է. հայ-բյուզանդական եկեղեցական միությունը չէր ստեղծվելու Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը սահմանափակելու հաշվին, այսինքն՝ Հայոց կաթողիկոսի կողմից Կոստանդնուպոլսի հույն պատրիարքի գերագահությունն ընդունելով:

Իրապես, իմաստազուրկ կլիներ Անտիոքի լատին պատրիարքի պահանջին հակադարձել քաղկեդոնական մեկ այլ պատրիարքության գերիշխանությունն ընդունելով: Գուցե, ինչպես 1165–1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ժամանակ, այս անգամ ևս Հայոց կաթողիկոսությունը ձգտել է իշխանություն ստանալ Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ: Ներսես Լամբրոնացուն վերագրվող «Գլխադրութիւնք հռոմոց զորս պահանջեն առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան, ընդ որս եւ լուծմունք աղընթեր եղեալ» վերտառությամբ վավերագրում կարդում ենք. «*Եւ կալցէ զաթոռն Անտիոքայ կաթողիկոսն Հայոց. եւ զոր ինչ եկեղեցիք եւ սահմանք են ընդ իշխանութեամբ նորա յԱրևելս եւ յԱրևմուտս. եւ նոյն յաջորդեսցէ հրամանաւ թագաւորիդ զՀայոց սեռն, այլ՝ մինչև ի սպար*»²⁴:

Լամբրոնացին այդ առաջարկը, ի թիվս այլ դրույթների, պետք է ներկայացնէր Հռոմկլայի 1178 թ. եկեղեցական ժողովում ի պատասխան բյուզանդական կողմի ներկայացրած ինը պահանջների²⁵: Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ գերագահությամբ, անշուշտ, կամրագրվեր Հայոց կաթողիկոսի իշխանությունն Ընդհանրական եկեղեցու նվիրապետական աստիճանակարգի առաջին՝ պատրիարքական աթոռներին վերապահված տեղում²⁶: Ի

²⁴ Պալճեան 1878, 266, հմմտ. Բոզոյան 1995, 204:

²⁵ Բոզոյան 1995, 204–205:

²⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Հարությունյան 1999, 250–260:

դեպ, խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի նվաճումից հետո Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ գերագահություն ստանալու համար իրադրությունը բարենպաստ էր, եթե հաշվի առնենք, որ Սիմեոն II պատրիարքը (1206–1242) ժամանակավորապես ապաստանել էր Կիլիկյան Հայաստանում²⁷: Սակայն, 1230–1240-ական թթ. Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ գերիշխանության հասնելը, եթե հաշվի առնենք այդ ժամանակ Նիկիական կայսրության հզորացումը, առավել դժվար էր, եթե ոչ՝ անհնարին:

Այս պարագայում արդեն միակ հիմնավոր դրդապատճառը, որը Հայոց կաթողիկոսին մղել է եկեղեցիների միության առաջարկով դիմել Նիկիայի կայսրին ու Կոստանդնուպոլսի պատրիարքին, եղել է Հռոմի պապի և Անտիոքի լատին պատրիարքի դեմ հակալշիռ ստեղծելը:

Ինչպես վերը նշեցինք, Կղեմես Գալանոսը հրապարակել է այդ խնդրին վերաբերող վավերագրերից միայն մի քանիսը, մինչդեռ պահպանվել է քննության առարկա հարցին առնչվող ևս երկու նամակ, որոնք սույն թեմայի լիարժեք քննության համար առանցքային կարևորություն ունեն: Խոսքը վերաբերում է 1239 թ. մարտին Հեթում Ա-ին և Զաբել թագուհուն, ինչպես նաև Կոստանդին Ա Բարձրբերդցուն Գրիգոր IX պապի հղած նամակներին:

Այսպես, արքային և թագուհուն հասցեագրած նամակում Գրիգոր IX-ը գրում է. «Նրանց, որոնց պատշաճում է քարոզելու իրավունք Հայոց թագավորության մեջ:

Նույնպես նաև Հայոց թագավորին և թագուհուն:

Քանզի որևէ մեկին, բացի նրանից, ով կանչվում է Աստծո կողմից ինչպես Ահարոնը, օրեն չէ պաշտոն ստանձնել և քարոզել հավատացյալներին, եթե նա ուղարկված չէ ժողովրդի մոտ, մենք ներկաների իշխանությամբ խստորեն արգելում ենք, որ չլինի թե մեկը Հայոց թագավորության մեջ առանց Առաքելական Աթոռի կամ կա-

²⁷ Ղազարյան 2020, 398:

թողիկոսի և կամ այս նույն թագավորության այլ բարձրաստիճան հոգևորականների կարգադրության, հատուկ թույլտվությամբ, ինչպես նրանցից յուրաքանչյուրը, որ արտոնելու իրավունք ունի իրեն ենթակա տարածքներում, ստանձնի քարոզելու ծառայություն»²⁸:

Կոստանդին Ա Բարձրբերդցուն հասցեագրած նամակով Հռոմի պապը հաստատում է Հայոց կաթողիկոսության իրավունքները Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի²⁹ և, որ ամենակարևորն է քննվող խնդրի տեսանկյունից, Ասորիքում (իմա՝ Անտիոքի պատրիարքությունում) ունեցած տարածքների, այսինքն՝ հայկական թեմերի վրա, որոնք, ինչպես նամակում նշված է, նախկինում ևս պատկանել են Հայոց եկեղեցուն³⁰:

Այս երկու նամակներով Հռոմի պապական աթոռը, փաստորեն, ճանաչում էր Հայոց կաթողիկոսության իշխանությունը Կիլիկիայի հայկական թագավորությունում, ինչպես նաև Ասորիքում գտնվող հայկական թեմերի վրա: Սա նշանակում է, որ Հռոմի պապը հրաժարվում էր Անտիոքի լատին պատրիարքին տված հավասար

²⁸ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 334. Լատիններեն տեքստի թարգմանության համար շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի և ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Տիգրան Սիրունյանին:

²⁹ Գրիգոր IX-ը գուցե կարող էր բավարարվել միայն Անտիոքի հայկական թեմերի նկատմամբ Հայոց կաթողիկոսության իշխանության ճանաչմամբ և շրջանցել Երուսաղեմում Հայոց եկեղեցուն պատկանող սրբատեղիների հարցը, սակայն նամակում հատուկ նշվում է Սրբոց Հակոբյանց վանքի նկատմամբ հայոց կաթողիկոսի իշխանության ճանաչումը: Դա լրացուցիչ և հիմնավոր փաստարկ է այն տեսակետի օգտին, որ 1230-ական թթ. վերջին «Դաշանց թուղթը» կրկին ներկայացվել է Հռոմի պապական աթոռին: Բանն այն է, որ «Դաշանց թուղթում» արձանագրված են Երուսաղեմի որոշ սրբատեղիների, այդ թվում՝ Սրբոց Հակոբյանց վանքի նկատմամբ Հայոց եկեղեցու իշխանությունը (Pogossian 2010, 109–112, 406, 408):

³⁰ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 334. Անտիոքի պատրիարքությունում գտնվող հայկական թեմերի մասին տե՛ս **Ղազարյան** 2020, 389–416:

տիացումից, որ կնպաստի Հայոց կաթողիկոսության նկատմամբ նրա գերագահության հաստատմանը (նկատի ունենք Ապամեայի և Մամեստիայի եպիսկոպոսներին հղած նամակը):

Այսինքն, եթե հիմնավոր է այն տեսակետը, որ հայ-բյուզանդական եկեղեցական միության բանակցությունները նախաձեռնելու գլխավոր դրդապատճառն Անտիոքի լատին պատրիարքության ներկայացրած պահանջի դեմ հայ-բյուզանդական հակակշիռ ստեղծելն էր, ապա այս պարագայում դրանք դառնում են ոչ նպատակահարմար: Ստեղծված իրավիճակում հայկական կողմին չէր մնում այլ բան, քան հնարավորինս շուտ դադարեցնել արդեն իսկ ընթացք ստացած հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունները:

Եզրակացություններ

1239 թ. մարտին Հեթում Ա-ին և Զաբել թագուհուն, ինչպես նաև Կոստանդին Ա Բարձրբերդցուն Գրիգոր IX-ի հղած նամակներով, որոնք բացակայում են Կղեմես Գալանոսի հայտնի աշխատությունում, ամբողջանում է իրադարձությունների շղթան, իսկ դրանց տրամաբանական կապը՝ դառնում առավել հստակ:

Եթե նամակագրությունում վկայված գործողությունները դասավորենք ժամանակագրական հաջորդականությամբ, ապա կստանանք հետևյալ պատկերը.

- 1238 թ. Անտիոքի լատին պատրիարքը դիմում է Հռոմի պապին՝ Հայոց կաթողիկոսից պահանջելու ընդունել իր գերագահությունը:

- Դրան ի պատասխան՝ Կոստանդին Ա Բարձրբերդցին 1238 թ. եկեղեցիների միության շուրջ բանակցություններ է սկսում Նիկիայի կայսրության և Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ՝ որպես հակակշիռ Անտիոքի լատին պատրիարքի և Հռոմի պապի պահանջի:

▪ Միևնույն ժամանակ, հայկական կողմը շարունակում է անմիջական կապը Հռոմի պապական աթոռի հետ՝ փորձելով փոխզիջումներով հասնել խնդրի հանգուցալուծմանը: Հենց այդ նպատակին են ծառայել Գրիգոր IX-ին Հեթում Ա-ի և Զաբել թագուհու հղած նամակը Հայոց եկեղեցում ծիսական փոփոխություններ կատարելու պատրաստականության մասին և կաթողիկոսի դիմումն իրեն պալիում, խույր և մատանի շնորհելու վերաբերյալ³¹: Զարուհի Պողոսյանը կարծում է, որ Հռոմի պապն իր դիրքորոշումն այս հարցում վերանայել և հոգուտ Հայոց եկեղեցու որոշում է կայացրել Հեթում Ա-ի և Զաբելի խնդրանքով³²: Ի դեպ, Հեթում Ա-ին և Կոստանդին Ա Բարձրբերդցուն Գրիգոր IX-ի հղած վերոնշյալ երկու նամակները թվագրվում են 1239-ի մարտի առաջին տասնօրյակով, ինչը նշանակում է, որ հայկական կողմի առաջարկներն արվել են միաժամանակ (արդի տերմինաբանությամբ՝ մեկ փաթեթով)՝ կա՛մ նույն թվականի սկզբին, կա՛մ նախորդ տարվա երկրորդ կեսին:

▪ Հայ-բյուզանդական եկեղեցական մերձեցումը կանխելու համար՝ Հռոմի պապը հրաժարվում է Հայոց կաթողիկոսին ներկայացրած պահանջից և ճանաչում նրա գերագահ իշխանությունը Կիլիկյան Հայաստանում ու Ասորիքի հայկական թեմերի վրա: Ռազ-

³¹ Հայոց կաթողիկոսների կողմից Հռոմի պապից իշխանական տվչությունը խորհրդանշող պալիում, խույր և մատանի խնդրելու դրդապատճառները քննել ենք մեր՝ «Ո՞ր կաթողիկոսին է Դաշանց թղթում կերպավորել Սբ Գրիգոր Լուսավորիչը» վերտառությամբ հոդվածում (**Թորոսյան** 2021): Այս պարագայում ևս Կոստանդին Ա Բարձրբերդցին առաջնորդվել է քաղաքական դրդապատճառներով: Որ այս տեսակետը հիմնավոր է, փաստվում է, թեկուզ, հենց այն իրողությամբ, որ արդեն 1248 թ., նոր աշխարհաքաղաքական իրողությունների ազդեցությամբ (նկատի ունենք մոնղոլական արշավանքները, հատկապես՝ հայ-մոնղոլական դաշինքի նախապատրաստությունը), Հայոց եկեղեցին, ի դեմս նույն հայրապետի, կտրականապես մերժում է Հռոմի պապի գերագահությունն ընդունելու պահանջը՝ առաջ քաշելով առաքյալների համապատվության թեզը (Գիրք թղթոց 1901, 503–509):

³² **Pogossian** 2010, 98.

մաքաղաքական իրադրությունը նպաստավոր էր հայկական կողմի համար: Բանն այն է, որ 1239 թ. Գրիգոր IX պապն ակտիվորեն զբաղված էր խաչակրաց հերթական արշավանքի կազմակերպմամբ և, բնականաբար, չէր կարող սրել հարաբերությունները Կիլիկիայի հայկական թագավորության հետ:

- Չեզոքացնելով Անտիոքի պատրիարքից եկող սպառնալիքը՝ հայկական կողմը դադարեցնում է իր նախաձեռնած հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անապատական 1973, Համառոտ պատմություն հայ-լատին յարաբերութեանց (սկիզբէն մինչեւ 1382), Անթիլիաս-Լիբանան, 227 էջ:

Բարթիկյան Հ. 2004, «Դաշանց թողոթ». կազմը, սրբեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, էջ 65–116:

Բարթիկյան Հ. 2006, Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնները փաստաթղթերում, Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս II-ի (1222–1240) եւ Մանուէլ Բ-ի (1244–1255) թղթերը Հեթում Ա թագաւորին եւ Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսին, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Գ, Երևան, էջ 27–63:

Բոզոյան Ա. 1995, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178 թթ.), Երևան, 256 էջ:

Բոզոյան Ա. 2016, Կիլիկյան Հայկական պետությունը Բյուզանդիայի կայսերական և պատրիարքական վավերագրերում (ընդհանուր ակնարկ), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորումների ընկալումներում», Երևան, էջ 66–75:

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, 584 էջ:

Թորոսյան Վ. 2021, Ո՞ր կաթողիկոսին է «Դաշանց թղթում» կերպավորել Սբ Գրիգոր Լուսավորիչը, «Էջմիածին», 2021, թիվ 2., էջ 74–92, թիվ է., էջ 61–73:

Կղեմէս Գալանոս 1650, Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցոյն Հռովմայ, հ. Ա, 531 էջ:

Հարությունյան Գ. 1999, Եկեղեցական աթոռների գահերեցության խնդիրը Աքքայի ժողովում (1263 թ.), «Պատմաբանասիրական հանդես», № 2, էջ 250–260:

- Հովհաննիսյան Ա.** 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա., Երևան, 524 էջ:
- Ղազարյան Գ.** 2020, Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե-ԻԴ), «Արևելյան աղբյուրագիտություն», հ. 2, Երևան, էջ 389–421:
- Շիրինյան Է.Մ.** 2006, «Սեդրեստրոսի Վարքը» և «Դաշանց թուղթը», «Բանբեր Մատենադարանի», հ. 17, Երևան, էջ 53–77:
- Պալճեան Ա.** 1878, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութեան նոցա ընդ հռոմեական եկեղեցոյ ի Փլորենտեան սինոդիոսի, Վենետիկ, 333 էջ:
- Օրմանեան Մ.** 2001, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմաւած, հ. Բ, Սբ. Էջմիածին, սյունակ 1871–3894:
- Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241), e registris Vaticanis aliisque fontibus collegit, Aloysius L. Tautu, Canonicus Magnovaradinen. Rumenorum e pontificia commissione ad redigendum C.I.C.O., Fontes series III, vol. III, Vaticanis, 1950, p. 400.
- Frazzee Ch.** 1976, Church and State in the Kingdom of Cilician Armenia. 1198–1375, Byzantine Studies/Etudes Byzantines, 3, part 2, p. 30–58.
- Halfter P.** 2009, L'Église arménienne entre la Papauté et les Byzantins aux XII^e et XIII^e siècles, "L'Église arménienne entre Grecs et Latins fin XI^e – milieu XV^e siècle", Paris, S. 361.
- Halfter P.**, Das Papsttum und die Armenier im Frühen und Hohen Mittelalter: Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198, Böhlau, Verlag, Köln, Wien, Weimar, 1996, S. 361
- Pogossian Z.** 2010, The letter of Love and Concord, A Revised Diplomatic Edition with Historical and Textual Comments and English Translation, Leiden • Boston, p. 475.
- Sirinian M.E.** 2003, "The Letter of Love and Concord" between Rome and Armenia. A Case of Forgery from the Crusaders Period. Orientalia Lovaniensia Analecta, 125. East and West in the Crusader States, Context - Contacts - Confrontations, III, edited by K. Ciggaar and H. Teule, Leuven, p. 79-99.
- Жаворонков П.И.** 1974, Никейская империя и Запад: (Взаимоотношения с государствами Апеннинского полуострова и папством), «Византийски й временник», т. 36, с. 100–121.

**Ваге Г. Торосян, Институт Истории НАН РА, к.и.н.,
Армяно-латинские и армяно-византийские церковные
отношения в конце 1230-х – начале 1240-х гг.**

Резюме

В 1230–1240 гг. армяно-латинские и армяно-византийские церковные отношения заметно активизировались. Об этом свидетельствует переписка Папы Римского Григория IX, патриарха Константинопольского Германа II и Мануила I с Католиком Всех Армян Костандином I Бардзбердци, королем Киликийской Армении Хетумом I и королевой Забел. Изучение этих документов показывает, что рассматриваемые отношения были взаимосвязаны. Чтобы противостоять требованию Григория IX принять главенство латинского Патриархата Антиохии, которое было представлено армянскому католику, Костандин I Бардзбердци и Хетум I начинают переговоры о церковной унии с императором Никейским и с греческим патриархом Константинополя. Дипломатические усилия армянской стороны в итоге увенчались успехом, поскольку Григорий IX, обеспокоенный армяно-византийским сближением, отказался от своего требования.

Ключевые слова: Киликийская Армения, Костандином I Бардзбердци, Хетумом I, Григория IX, Герман II, Мануила I, Католикос Всех Армян, Папа Римский, Патриарх Константинополя.

Vahe H. Torosyan, *Institute of History of the NAS RA, PhD in History*, **Armenian-Latin and Armenian-Byzantine Church Relations at the end of the 1230s – the beginning of the 1240s**

Summary

Armenian-Latin and Armenian-Byzantine church relations became noticeably more active in 1230–1240. This is evidenced by the correspondence between Pope of Rome Gregory IX, Patriarch Germanus II of Constantinople and Manuel I with Catholicos of All Armenians Kostandin I Bardzberdtsi, King of Cilician Armenia Hethum I and Queen Zabel. As the study of documents shows, Armenian-Byzantine and Armenian-Latin church relations were interconnected at that time. In order to resist the Pope's demand to accept the primacy of the Latin Patriarchate of Antioch, which was presented to the Armenian Catholicos, Kostandin I Bardzberdtsi and Hethum I began negotiations on an ecclesiastical union with the Emperor of Nicaea and with the Greek Patriarch of Constantinople. The diplomatic efforts of the Armenian side was crowned with success, as Gregory IX, worried about the Armenian-Byzantine rapprochement, withdrew his demand.

Key words: Cilician Armenia, Kostandin I Bardzberdtsi, Hethum I, Gregory IX, Germanus II, Manuel I, Catholicos of All Armenians, Pope of Rome, Patriarch of Constantinople.

ԿԱՐՈՒԼԻՆԱ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, գիտաշխատող
csahakyan@gmail.com

 0009-0008-0142-3802

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-23

ԱՆՄԵԴ ԶԵՎԴԵԹ ՓԱՇԱՅԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Քանալի բառեր¹ Հայկական հարց, հայեր, լյայիհա, Արդուվ Հա-
միդ, Ահմեդ Ջևդեթ, բարեփոխում, Անգլիա:

Ներածություն

XVI դ. կեսերից մինչև անկումը (1922 թ.) Օսմանյան կայսրույթ-
յունում պահպանվում էր զեկուցագիր՝ *լյայիհա* (արաբերեն՝ մտա-
ծածը գրավոր տեսքի բերել)¹ գրելու պրակտիկան: Այդ զեկուցա-
գրերն արժեքավոր պատմական աղբյուրներ են՝ գրված աստվածա-
բան-օրենսգետների ու պետական գործիչների կողմից և պատկե-
րացում են տալիս ժամանակի քաղաքական, ռազմական, սոցիալ-
տնտեսական և մշակութային կյանքի ու այդ ամենի վերաբերյալ
դրանց հեղինակների տեսակետների մասին:

Զեկուցագրերը բաժանվում էին մի քանի խմբի: Դրանք լինում
էին որևէ հանձնարարության կամ ստուգայցի արդյունքում ի հայտ

* Ներկայացվել է 25.IV.2023 թ., գրախոսվել է 05.V.2023 թ. և 05.V.2023 թ.,
ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

¹ Kütükoğlu 2003, 116.

եկած խնդիրների, օտարերկրյա ծառայությունից հետո պաշտոնյաների տպավորությունների և բարեփոխումների վերաբերյալ²:

Բարեփոխման լյայիհանների քանակը և ընգրկված թեմաների շրջանակը կտրուկ աճեց հատկապես Աբդուլ Համիդ II-ի (1876–1909) օրոք: Նա հսկայածավալ տերության խնդիրներին ծանոթանալու և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկներ ստանալու նպատակով համապատասխան պետական պաշտոնյաներից և օտարերկրյա խորհրդականներից պարբերաբար պահանջում էր այս կամ այն թեմայով զեկուցագրեր ներկայացնել³: Դրանց շարքում ուրույն տեղ ունեն Օսմանյան կայսրության բարձրաստիճան պետական պաշտոնյա, օրենսգետ և պաշտոնական տարեգիր՝ *վաքա-ի նյուվիս*⁴, Ահմեդ Ջևդեթ (Լոֆչացի)⁵ փաշայի (1822–1895) լյայիհաները: Մոտ երեք տասնյակի հասնող այդ զեկուցագրերում Ջևդեթը կարծիք է հայտնում ինչպես երկրի ընդհանուր վիճակի, այնպես էլ կրթության, արդարադատության, մարդահամարի, տարբեր վիլայեթներում տիրող իրավիճակի, Հնդկաստանի, Եվրոպայի և այլ հարցերի մասին՝ նշելով դրանց լուծման իր տարբերակները⁶:

Ջևդեթ փաշան վայելել է Աբդուլ Համիդ II-ի վստահությունը և արժանացել բարձր գնահատանքի⁷: Սուլթանի հրամանով նա գրել է իր հայտնի «Ջեկուցագրեր» (*Ma'rûzât*)⁸ աշխատությունը, որն

² **Kütükoğlu** 2003, 116; **Karaca** 1993, 79–157; **Oğuz** 2007, 3; **Kütükoğlu** 1998, 337.

³ Մանրամասն տե՛ս՝ **Oğuz** 2007.

⁴ **Kütükoğlu** 2003, 116.

⁵ Ջևդեթի մասին տե՛ս՝ **Aliye** 1995; **Chambers** 1973, 4, 440–464. **Ebül'ula** 1947, 911–940.

⁶ **Oğuz** 2009, 90–100.

⁷ Աբդուլ Համիդ II-ի օրոք եղել է կրթության, արդարադատության, ներքին գործերի, առևտրի նախարար և պետական խորհրդի նախագահ, զբաղեցրել Սիրիայի նահանգապետի պաշտոնը:

⁸ **Ahmed Cevdet Paşa** 1980.

ընդգրկում է 1839–1876 թթ. պատմությունը և համարվում է XIX դ. Օսմանյան կայսրության պատմության սկզբնաղբյուրներից մեկը⁹: Բացի այդ, Ջևդեթ փաշան եղել է Աբդուլ Համիդ II-ի հրավիրած գաղտնի ժողովի երեք մասնակիցներից մեկը¹⁰: Ժողովի նպատակն էր քննարկել Օսմանյան կայսրությունում առկա քաղաքական խնդիրները և գտնել հնարավոր լուծումներ: Փաշայի հայացքների ու մտքերի ազդեցությունը նկատվում է Աբդուլ Համիդ II-ի գործունեության վրա¹¹: Սուլթանի վերաբերմունքն արտահայտված է նաև նրա անձնական բժիշկ Աթըֆ Հուսեյն բեյի հուշերում. «Ջևդեթ փաշան ուսյալ մարդ էր: Ինչպես արաբերեն էր դասավանդում, այնպես էլ այլ գիտություններում էր ուսյալ: Ես նրանից, նրա գիտելիքից շատ եմ օգտվել»¹²:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարևոր ենք համարում անդրադառնալ Թուրքիայի հանրապետության նախագահին կից պետական արխիվում (TC Cumhurbaşkanlığı Devlet Arşivi)¹³ պահվող զեկուցագրերից մեկին¹⁴: Սևագիր տարբերակով, 4 էջից բաղկացած և առանց տարեթվի այդ լրագրագրությունը Ջևդեթ փաշան ներկայացնում է Օսմանյան կայսրության ընդհանուր վիճակը՝ «hâl-i hazır durum» XIX դ. վերջին՝ անդրադառնալով Օսմանյան կայսրությունը մասնատելու մեծ տերությունների ծրագրերին: Նա առաջարկում է չեզոքու-

⁹ Տե՛ս **Հովհաննիսյան** 2008, 78–84: **Շիրոյան** 2011, 233–241:

¹⁰ Ժողովը հավանաբար տեղի է ունեցել 1886–1890 թթ. միջակայքում, երբ Ջևդեթ փաշան զբաղեցնում էր Արդարադատության նախարարի պաշտոնը (Bowen 1960, 285–286).

¹¹ **Oğuz** 2009, 153.

¹² “Cevdet Paşa âlim bir adam idi.. Arabide müderris olduğu gibi diğer ulûm ve fûnûnda da âlim idi. Ben ondan onun ilminden çok istifade ederdim”. Տե՛ս **Hülagü** 2003, 267.

¹³ Մեր մուտք գործելու ժամանակ՝ Թուրքիայի վարչապետին կից Օսմանյան արխիվ (TC Başbakanlık Osmanlı Arşivi - BOA), ուստի հղումներում «BOA» հապավումն ենք օգտագործում:

¹⁴ YEE, 38/95, 3.

թյուն պահպանել և ուշադրություն դարձնել կայսրության ներքին կյանքում ու արտաքին գործերում բարեփոխումներ իրականացնելուն, որպեսզի բացառի նրանց միջամտությունը երկրի ներքին կյանքին¹⁵:

Ահմեդ Ջևդեթը Հայկական հարցի վերաբերյալ

Ջևդեթ փաշան Հայկական հարցի սկիզբ է համարում Բեռլինի վեհաժողովը և ժամանակի մեծ վեզիր ու արտաքին գործերի նախարար Սաֆվետ փաշային (1814–1883) մեղադրում անհեռատեսության և Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանին (1837–1884) վեհաժողովին հայկական պատվիրակության մասնակցությունը թույլ տալու համար:

Ներկայացնելով Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի վարած քաղաքականությունը՝ Ջևդեթ փաշան երկու էջի սահմաններում անդրադառնում է նաև Հայկական հարցին ու հայ ազգային կուսակցություններին: Նա մասնավորապես գրում է, որ «Թեպետ անգլիացին անհանգստանալով վերջին պատերազմի ընթացքում¹⁶ ռուսաստանցիների՝ Քուրդիստանի ճանապարհով դեպի Բելուջիստան¹⁷ գնալու Ռուսաստանի մտքից՝ Քուրդիստանում սեփական ազդեցության տակ կառավարություն ստեղծելու համար հայերին էլ էր նկատի ունեցել, հետո հասկացել էր, որ դատարկ միտք է: Բայց, երբ ռուսաստանցին Թաբերիստանի¹⁸ կողմից մինչև թուրքմենական հայրենիք մուտք գործեց և արագորեն երկաթգիծ կառուցելով¹⁹ Աֆղանստանի սահմանին հասավ, պարզվեց, որ անգլիացիները չէին դադարել

¹⁵ YEE, 38/95, 1:

¹⁶ Նկատի ունի անգլո-աֆղանական երկրորդ պատերազմը 1878–1880 թթ.:

¹⁷ Շրջան Իրանի հարավ-արևելքում:

¹⁸ Իրանի Մազանդարան գավառի պատմական անվանումն է:

¹⁹ Խոսքը 1880 թ. անգլո-աֆղանական երկրորդ պատերազմից հետո կառուցված երկաթգծի մասին է:

կարևորել Հայկական հարցը: Որոշ ժամանակ անց այս հարցը կրկին բերանները գցեցին և հայկական կոմիտեներին²⁰ այն աստիճանի կարևորություն տվեցին, որ Վանի ու Բիթլիսի կողմերում առաջ եկած առօրեական բաներին մեկին հազար ավելացնելով՝ սկսեցին աշխարհին անհանգստություն պատճառել²¹:

«Ինչ վերաբերում է Հայկական հարցին,- գրում է նա,- դրա սկիզբը հայտնի է. Բեռլինի վեհաժողովի կազմակերպման ժամանակ հայոց պատրիարք եղած Ներսեսը թույլտվություն է խնդրում հանգուցյալ Սաֆվեթ փաշայից՝ ներկայացուցիչների պատվիրակություն Բեռլին ուղարկելու համար, և նա, որպես օրավարձով աշխատող²² ու անհեռատես մարդ, թույլտվություն է տալիս և մի քանի փչացնողների՝ Ներսեսը ներառյալ, ուղարկում [Բեռլին]»²³: Այս որոշումը որակելով որպես «մեծագույն սխալ», որը կարող էր աննախադեպ հետևանքներ ունենալ, Ջևդեթն այն համարում էր հայերին տրված արտոնություն, որով նրանք առանձնացվում էին մյուս հպատակներից: «Ինչ մեծ սխալ է, ինչ մեծ անուշադրություն. ինչ է՝ Օսմանյան պետության ներկայացուցիչները չէ՞ն բավականացնում,- նշում է նա,- որ հպատակների մի դասի կողմից սեփական իրավունքները պաշտպանելու համար մեծ պետությունների ժողովին ներկայացուցիչներ են ուղարկվում, և այդ պարագայում չի՞ նշանակում, որ նրանց հատուկ արտոնություններ են տրվում»²⁴: Թիրախավորելով մեծ վեզիրին՝ Ջևդեթը նրան համեմատում է թանզիմաթի ճարտարապետ, մեծ վեզիր Մութաֆա Ռեշիդ փաշայի (1800–1858) հետ, որին նա երկար տարիներ մտերիմ է եղել՝ սկսած 1846 թ., երբ սկսել է աշխատել որպես մեծ վեզիրի

²⁰ Նկատի ունի հայ ազգային կուսակցությունները:

²¹ YEE, 38/95, 2.

²² Նման արտահայտություններ հաճախ են հանդիպում ժամանակի պաշտոնյաների գրություններում:

²³ YEE, 38/95, 3.

²⁴ YEE, 38/95, 3.

խորհրդական՝ նոր օրենքները նախագծելու համար²⁵, և ում ազդեցությամբ էլ ներգրավվել է քաղաքական ու վարչական ծառայությունների մեջ²⁶, և Մեհմեդ Ալի (1815–1871) ու Ֆուադ (1814–1869) փաշաների հետ դարձել բարենորոգումների նախաձեռնողներից ու իրականացնողներից²⁷: Փաստորեն, Ահմեդ Ջևդեթ փաշան Հայկական հարցի առաջ գալը պայմանավորում է սուկ Մեծ Բրիտանիայի դրդմամբ հայերի բարձրացրած բողոքով, որն օսմանցի բարձրաստիճան պաշտոնյաների թողտվությամբ ներկայացվեց Բեռլինի կոնգրեսում և, որպես պետական գործիչ, անտեսում է հայ ժողովրդի՝ հայկական նահանգներում բարեփոխումներ իրականացնելու իրավացի պահանջը: Ավելին, դրա մեջ տեսնում է կայսրության ամբողջականությանը սպառնացող վտանգ:

Ահմեդ Ջևդեթը հայերի մասին

Նույն զեկուցագրում Ջևդեթն անդրադառնում է նաև հայերին²⁸ ու հայ ազգային կուսակցություններին: Նա մասնավորապես նշում է, որ հայերն օգտվելով իրենց տրված արտոնությունից, այն է՝ Բեռլինում բարենորոգումների հարց բարձրաձայնելուց, որոշեցին բարեփոխել իրենց դպրոցները և երիտասարդ սերնդին կրթել անջատողական գաղափարներով: «Չգիտես ինչու,- գրում է նա,- հայերն էլ հենց այդպիսի մի առիթ գտան, տարվեցին իրենց արտոնություններն ընդարձակելով: Եվ անմիջապես նախաձեռնեցին հայկական դպրոցների բարեփոխումը, որով իրենց ցանկացած կողմը կշրջեին կրթվող երեխաների միտքը»²⁹: Ջևդեթն այս հարցում

²⁵ Aliye 1995, 39–42.

²⁶ Aliye 1995, 42–3.

²⁷ Ortayli 2014, 423.

²⁸ Պատմագիտական աշխատություններում հայերին անդրադարձի վերաբերյալ տե՛ս **Սաֆրաստյան** 1961, 225–319: **Շիրոյան** 2011, 156–168: **Սահակյան** 2015, 51–64:

²⁹ YEE, 38/95, 3.

մեղադրում է հայ մեծահարուստներին ու պետական պաշտոնյաներին, որոնց մեծ մասն ազգային-ազատագրական գաղափարներ սերմանելու և ինքնավարության հասնելու համար «հնարավոր ամեն ջանք գործադրեց ու գումարներ ծախսեց»³⁰: Նա գտնում էր, որ որոշ ժամանակ հետո հայերի շարքերում ի հայտ եկան և ստվարացան «վտանգավոր գաղափարներ» ունեցողները, որոնք հարմար պահին սպասելու փոխարեն նախընտրեցին «անմիջապես եվրոպական պետությունների միջամտությունը գրավելու գործեր նախաձեռնել, և մի քանի տարի անց նրանք ավելացան, և այս գաղափարի վրա հիմնված կոմիտեները»³¹ սկսեցին ինտենսիվ գործել ներսում և դրսում»³²: Շարունակելով խոսքը հայ ազգային կուսակցությունների մասին՝ Ջևդեթն օսմանյան կառավարությանը մեղադրում է հայերի նկատմամբ ցուցաբերած «քաղաքավարության և փափկության» համար, որը հայերի կողմից ընկալվել է որպես պետության «թուլություն և վախ իրենց նկատմամբ», և նրանք սկսել են Կ.Պոլսում «անկարգությունների չափ փչացածություն ու ոտնձգություններ» անել³³: Այդ պարագայում Ջևդեթ փաշան որպես միակ լուծում տեսնում է սուլթանի միջամտությունը և նրա ակտիվ ջանքերով ու վերահսկողությամբ բարեփոխումների իրագործումը: «Վերոնշյալին նայելով՝ առկա դեպքերի քաղաքավարությունն ու կարևորությունը չի կարող հերքվել: Այդուհանդերձ, չի կարելի ասել, թե միջոցներ ձեռնարկելն էլ շատ դժվարին է: Բարձրյալ տիրակալի ջանքերով ամեն տեսակ դժվարության լուծումը հնարավոր է: Սակայն դա հնարավոր է միայն [սուլթանի] անձնական վճռական ջանքերով և կամքով», - նշում է նա և խոսքն ամփոփում սուլթան Աբդուլ Մեջիդ I-ի (1839–1861) պալատում Եգիպտոսի նախկին կառավարիչ Մու-

³⁰ YEE, 38/95, 3.

³¹ Նկատի ունի հայ ազգային կուսակցությունները:

³² YEE, 38/95, 3.

համեդ Ալի փաշայի (1769–1849) զրույցից մի հատվածով, որտեղ խոսելով բարեփոխումների մասին՝ փաշան նշել էր, որ «սպասավորները կարող են կանգուն ջրաղացը շրջել, բայց թեքվածը չեն կարող ուղղել, թեքվածը միայն տիրակալները կարող են ուղղել»³⁴:

Ջևդեթ փաշան իր զեկուցագիրն ամփոփում է բարեփոխումներում սուլթանի ջանքերից զատ նաև իրականացնողների՝ նախարարների և այլ պաշտոնյաների մասին խոսելով: Գտնելով, որ, քանզի սուլթանը չի կարող առնչվել ամեն գործի մարդկանց հետ, պիտի պատրաստված գործիչներ ունենա, նա օգտագործում է հետևյալ համեմատությունը՝ «Գեղագիրն ինչքան էլ գեղեցիկ տեքստ գրի, թերություն ունեցող գրչով չի կարող գեղեցիկ գրել: Ուստի [պարզ չէ], մարդը լավ գեղագիր է լինում ու սովորում լավ մատիտ սրել, թե լավ մատիտ է սրում ու դառնում կատարյալ գեղագիր»³⁵:

Եզրակացություններ

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում XIX դ. երկրորդ կեսին գրված բազմաթիվ զեկուցագրերի մեջ հատուկ տեղ ունի Ահմեդ Ջևդեթ փաշայի՝ Աբդուլ Համիդ II-ի ցանկությամբ գրի առած լյայիհան, որում Հայկական հարցը ներկայացվում է երկու տեսանկյունից՝ իբրև պետական գործիչների անհեռատեսության արդյունք և Արևելյան հարցի մի մաս: Ըստ Ջևդեթի՝ օսմանյան բարձրաստիճան պետական պաշտոնյաների անհեռատեսության հետևանքով հայերն իրենց բողոքները կարողացան հասցնել մինչև Բեդլինի վեհաժողով, իսկ եվրոպական տերությունները, Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ, օգտագործեցին այդ առիթը՝ Հայկական հարցի միջոցով Օսմանյան կայսրության հետագա մասնատումն արագացնելու նպատակով:

³³ YEE, 38/95, 3.

³⁴ YEE, 38/95, 3.

³⁵ YEE, 38/95, 4.

Որպես պետական գործիչ Ջևդեթ փաշան շահագրգռված էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմամբ և ազգային-ազատագրական շարժումներն ընկալում էր որպես անհնազանդություն ու կենտրոնական իշխանությունների համար սպառնալիք: Նա կայսրության հպատակ ազգերի, այդ թվում հայերի, նկատմամբ վարվող բռնությունների քաղաքականությունն ու նրանց բողոքների պատճառներն անտեսելով՝ ստեղծված իրավիճակի լուծումը տեսնում էր բարեփոխումների գործընթացը սուլթանի կողմից վերահսկվելու և դրանց իրագործման ուղղությամբ ջանքեր գործադրելու մեջ:

Ահմեդ Ջևդեթ փաշայի գեկուցագիրը Հայկական հարցի և հայերի վերաբերյալ օսմանյան վերնախավի տեսակետը հասկանալուն նպաստող արժեքավոր աղբյուր է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան Ա. 2008, Ահմեդ Ջևդեթի «Մարուզաթը» որպես թանգիմաթի ուսումնասիրման աղբյուր, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, Երևան, էջ 78-84:

Շիրոյան Կ. 2011, Պատմագիր Ահմեդ Ջևդեթ փաշան Սսի կաթողիկոսության մասին, Թյուրքագիտական և Օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, Երևան, էջ 156-168:

Շիրոյան Կ. 2011, Օսմանյան «Բարեփոխումների հանձնախումբը» Ջեյթունում 1865-1867 թթ. (ըստ թուրք պատմագիր Ահմեդ Ջևդեթ Փաշայի «Ջեկուցագրեր» աշխատության), Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հ. VII, էջ 233-241:

Սահակյան Կ. 2015, Օսմանյան կայսրության հարավարևելյան շրջանների (Կիլիկիայի) բարենորոգումը (1865-1867 թթ.), Արևելագիտության հարցեր, հ. X, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 51-64:

Սաֆրաստյան Ա.Խ. 1961, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հ. 1, Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., Երևանի համալսարանի հրատ., էջ 225-319:

Ahmed Cevdet Paşa 1980, Ma'rûzât, hazir. Halaçođlu Y., Istanbul, 270 s.

- Aliye Fatma** 1995, Ahmed Cevdet Paşa ve Zamani, Bedir Yayınevi, İstanbul, 111s. Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), Yıldız Esas Evrakı/BOA, YEE 38/95.
- Bowen H.** 1960, Ahmad Djewdet Pasha, The Encyclopaedia of Islam, vol. 1, ed. by H.A.R. Gibb, J.H. Kramers etc., Leiden-London, Brill-Luzac, p. 284–286.
- Gül M.** 1995, Elviye-i Selâsenin Osmanlı Devletine İadesi ve Bazı Uygulamalar, Ankara Üniversitesi Türk İnkılap Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi, s. 367-380.
- Hülagü M.** 2003, Metin, Sultan II Abdülhamid'in sürgün günleri, 1909–1918: hususi doktoru Âtîf Hüseyin Bey'in hatıratı, Pan Yayıncılık, İstanbul, 374 s.
- İlber Ortaylı** 2014, "Tanzimat Adami ve Tanzimat Toplumunu", (Ed. Halil İnalcik-Mehmet Seyitdanliođlu), Tanzimat- Deđişim Sürecinde Osmanlı İmparatorluğu, 4. Baskı, Türkiye İş Bankası Kültür Yayınları, İstanbul,
- Karaca A.** 1993, Anadolu İslahatı ve Ahmet Şakir Paşa (1838–1899), İstanbul, 258 s.
- Karal E.Z.** 1946, Selim III'ün Hatt-i Hümayunları: Nizam-i Cedit 1789–1807, Ankara 210 s.
- Kütükođlu B.** 2012, "Vak'anüvis", TDV İslâm Ansiklopedisi, c. 42, 457–461.
- Kütükođlu M.S.** 1998, Osmanlı Belgelerinin Dili (Diplomatik), İstanbul, 616 s.
- Kütükođlu M.S.** 2003, "Layiha", TDV İslâm Ansiklopedisi, Ankara, C. 27, s. 116–117.
- Mardin Ebül'ula** 1947, Medenî hukuk cephesinden Ahmet Cevdet Paşa (1825–1895), İstanbul Üniversitesi Hukuk Fakültesi Mecmuası, 13(3), s. 911–940.
- Ođuz M.** 2007, II. Abdülhamid'e Sunulan Layihalar, Ankara Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Basılmamış Doktora Tezi, Ankara, 339 s.
- Ođuz M.** 2009, Osmanlı Devleti'nin durumu hakkında Cevdet Paşa'nın görüşleri, Türklük Bilimi Araştırmaları, 26, Güz, s. 143–159.
- Savaş Ali İbrahim** 1999, "Lâyihâ Geleneđi İçinde VXIII. Yüzyil Osmanlı İslahat Projelerindeki Tespit Ve Teklifler", Bilig, S.9, Ankara, s. 87–114.

**Каролина М. Саакян, Институт востоковедения
НАН РА, научный сотрудник, Докладная записка Ахмеда
Джевдета Паши по Армянскому вопросу**

Резюме

Ахмед Джевдет-паша (1822–1895) был ключевой фигурой реформ Османской империи в XIX веке. Он был интеллектуалом, государственным деятелем и историком, известным своим вкладом в правосудие, управление и образование, а также историографию и политику. С целью пролить свет на отношение Джевдет-паши к армянам в этой статье, мы представляем один из его докладов, написанный высокопоставленным османским чиновником по приказу султана Абдул-Хамида II (1876–1909), в котором наряду с ситуацией в Османской империи упоминается и Армянский вопрос.

Ключевые слова: Армянский вопрос, армяне, лайиха, Абдул Хамид, Ахмед Джевдет, реформа, Англия.

**Carolina M. Sahakyan, Institute of Oriental Studies of
the NAS RA, Researcher, Report of Ahmed Cevdet Paşa
on the Armenian Question**

Summary

Ahmed Cevdet Paşa (1822–1895) was a key figure in the 19th century reforms of the Ottoman Empire. He was an intellectual, statesman and historian known for his contributions to justice, administration and education, historiography and politics. His works reflect his views as a witness and participating statesman on Arme-


nians and the Armenian question. In this article, we present one of the reports written by Cevdet Paşa on the order of Sultan Abdul Hamid II (1876–1909) to shed light on the attitude of a high-ranking Ottoman official towards the Armenians.

Key words: Armenian Question, Armenians, Layiha, Abdul Hamid, Ahmed Cevdet, reform, England.

ԱՐՓԻՆԵ Ռ. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

arpinebablumyan05@gmail.com

 0009-0001-7840-1440

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-35

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ (XIX Դ. ՎԵՐՋ – XX Դ. ՍԿԻՉԲ)*

*Բանալի բառեր*¹ Արևմտյան Հայաստան, Դիարբեքիր, Տիգրանա-կերտ, Բալու, արտագաղթ, իսլամացում, համիդյան կոտորածներ:

Ներածություն

Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության բաղ-կացուցիչ մասն է եղել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ հոգուտ թուրքերի և քրդերի: Դեռևս XVI–XVIII դդ. կայսրության տարածքում իրականացվել է հայերի բռնի իսլամացման քաղաքականություն: Միևնույն ժամանակ, կայսրության ազգային, սոցիալական ու կրոնական խտրական քաղաքականությունը ժամանակի ընթացքում հանգեցնում էր երբեմնի հայաբնակ, հաճախ՝ զուտ հայաբնակ բնակավայրերի հայաթափմանը: Խոսքն ինչպես ներքին տեղաշարժերի մասին է, երբ հատկապես գյուղական, ինչպես նաև համեմատաբար փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող բնակավայրերից հայերը տեղափոխվում էին ավելի խոշոր հայաշատ բնակավայրեր, այնպես էլ՝ արտագաղթի,

* Ներկայացվել է 25.IV.2023 թ., գրախոսվել է 03.V.2023 թ. և 07.V.2023 թ., ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

երկրից դուրս հաստատվելու միտման: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում արտագաղթի հիմնական ուղղությունն ԱՄՆ-ն էր: Արտագաղթի տեսակերի աճին նպաստեցին հատկապես 1894–1896 թթ. համիոյան կոտորածները:

Դիարբեքիի նահանգը, Կ. Պոլսի պատրիարքարանի տվյալների համաձայն, 1882 թ. ուներ 150.000¹, իսկ 1913–1914 թթ., ըստ տարբեր վիճակագրությունների, 100.000–124.000 հայ բնակիչ²: Ինչպես տեսնում ենք, հայ բնակչության թվաքանակը որոշակիորեն նվազել էր, ինչը, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ նահանգի տարածքում ընթացող ժողովրդագրական գործընթացների հետևանք էր: Որոշակի ուրվագծերով ներկայացնենք ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումներն Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգում:

Նախկինում հայաթափված բնակավայրերը. իսլամացման միտումը

XIX դ. վերջերին Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում, այդ թվում և Դիարբեքիի նահանգում, հանդիպում էին բազմաթիվ քրդաբնակ գյուղեր, որոնց անվանումները դեռևս զուտ հայկական ծագում ունեին: Նրանցից շատերում պահպանվում էին կանգուն կամ կիսավեր եկեղեցիներ, մատուռներ կամ խոնարհված սրբատեղիների մնացորդներ: Գարեգին Սրվանձտյանցը, որը 1878–1880 թթ. շրջել է Արևմտյան Հայաստանի բնակավայրերով, Տիգրանակերտի վիճակի տարածքում թվարկում է գյուղերի անուններ, որոնք իր այցելության ժամանակ քրդաբնակ էին, բայց ունեին կանգուն կամ ավեր հայկական եկեղեցիներ: Այդ գյուղերից էին Հաբարմանը, Հասութը, Ախոռները, Հալբաթը, Ս. Թորոսը, Հիլարը, Մալանը, Բալախուն, Թըլխըճորը, Օհահ աղբյուր կամ Բակուրը,

¹ Արարատ 1914, 130:

² Արարատ 1914, 132: Ամենուն տարեցոյց 1921, 261: **Kévorkian, Pabou-djian** 1992, 59.

Վարի գեղը, Ս. Եղիա գեղը, Հերսնին, Կարմիր քարը, Ագրակը, Մանտիքանը, Թըլլատին, Թըլլտումը, Եէի քյոյը, Լաղարին, Խանգեղը, Տողանը, Ալմատինը, Քարթիլը, Կավուր քյոյը, Այլուն, Ղուֆախիրը և այլ բնակավայրեր³:

Դիարբեքիի նահանգի Բալու գավառակում ևս բազմաթիվ էին նախկինում հայաբնակ գյուղերը, որոնք ժամանակի ընթացքում հայաթափվել և դարձել էին քրդաբնակ ու թրքաբնակ: Այդ գյուղերից շատերը պահպանել էին իրենց հայկական անվանումները, օրինակ՝ Օշին, Գոմեր, Սուրբ Սարգիս (քրդական ձևափոխումով՝ Սըմ Սարգիս), Վարդագոմ, Ալիրտուն, Սահման, Ջրափ, Հոսանք, Մերավան և այլն⁴: Տվյալ բնակավայրերի հայ բնակիչները ժամանակին կամ հեռացել ու բնակություն էին հաստատել այլ վայրերում, կամ՝ իսլամացվել: Ավելին, ժամանակի ընթացքում նվազում էին զուտ հայաբնակ վայրերը, շատերում էլ գնալով ավելանում էր թուրք և քուրդ բնակչությունը:

XIX դ. վերջերին ևս հայաթափման ու կրոնափոխության դեպքերի մասին վկայություններ կան, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի: Այս խնդրի վերաբերյալ ահազանգեր են եղել և դա էր պատճառը, որ «կրօնափոխութեան առաջն առնելու համար Պօլսոյ պատրիարքարանի կողմից որոշուած է շրջուն պաշտօնով եկեղեցական այցելուներ ուղարկել վտանգ սպառնացող գաւառները»⁵: Դիարբեքիի նահանգի բնակավայրերը, ամենայն հավանականությամբ, դիտարկվել են «վտանգ սպառնացող»-ների շարքում: Բանն այն է, որ Դիարբեքիին ինքնին անապահով տարածք էր, քանզի հարևանությամբ բնակվում էին բազմաթիվ քրդական ցեղեր, որոնք ժամանակ առ ժամանակ հարձակվում էին հարևան բնակավայրերի վրա, թալա-

³ **Սրուանձտեանց** 1885, 186–187:

⁴ Պատմութիւն Պաղնատան 1966, 17:

⁵ Արաքս 1887, գիրք Ա, 141:

նում ու ավերում ինչ հնարավոր էր: Նման պայմաններում դեռևս առողջ և ձեռներեց մարդկանց մնում էր կրոնափոխվել կամ հեռանալ հայրենի բնակավայրերից:

Բարեբախտաբար, պատրիարքարանի ձեռնարկումներից հետո կրոնափոխության հետ կապված իրավիճակը որոշակիորեն փոխվում է: 1888 թ. հրապարակումներից մեկում մեջբերվում է «Արեւելք» թերթում տպագրված մի հաղորդագրություն այն մասին, որ Տիգրանակերտի վիճակի հայերի մեջ նկատված կրոնափոխության միտումը բավական թուլացել է, իսկ կրոնափոխ եղածները կրկին վերադառնում են Առաքելական եկեղեցու գիրկը⁶: Սակայն համիդյան կոտորածների ընթացքում և դրանից որոշ ժամանակ անց կրոնափոխության հարկադրանքը կրկին դարձավ հայությանը սպառնացող վտանգներից մեկը: Դիարբեքիում բրիտանական փոխհյուպատոս Սեսիլ Հոլուարդը 1896 թ. մարտի 17-ի զեկույցում նշում էր, որ Դիարբեքիի նահանգում շուրջ 25.000 հայեր մուսուլման են դարձել⁷: Իհարկե, որոշ ժամանակ անց կրոնափոխ եղած հայերի մեծ մասը վերադարձավ քրիստոնեությանն ու հայի ինքնությանը, սակայն կրոնափոխության ու կոտորածի վախը մշտադարձ էր արևմտահայության շրջանում:

Գաղթի պատճառները

Դիարբեքիի նահանգում ժողովրդագրական փոփոխությունների հիմնական պատճառներից էր երկրի ներսում բնակչության տեղաշարժը, իսկ XIX դ. վերջերից նաև արտագաղթը, այս շրջանում՝ հիմնականում ԱՄՆ:

Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում արտագաղթի կամ, առհասարակ, տեղաշարժերի հիմնական պատճառներից մեկը հայ բնակչության նկատմամբ տարվող սոցիալա-

⁶ Արարատ 1888, Յունուար, 60:

⁷ Dadrian 1995, 156.

կան ու հարկային քաղաքականությունն էր, որը շատ դեպքերում վերաճում էր բռնությունների, ավազակությունների ու թալանի:

Դեռևս 1889 թ. «Արաքս» պարբերականում հրատարակված մի ծավալուն հոդվածում խմբագիր Ս. Գուլամիրյանցը նշում էր, որ հայության շրջանում «գաղթականութիւնները տեղի են ունեցել զանազան պայմանների տակ, գլխաւորապէս կոտորածից, բռնութիւնից ազատուելու համար»⁸: Միևնույն ժամանակ նա կարծում էր, որ շատերի կողմից իբրև հայերի գաղթականության և պանդխտության պատճառներ բերվող սպանությունները, հարստահարությունները և կյանքի ու գույքի անապահովությունը գաղթի հիմնական պատճառները չեն: Ս. Գուլամիրյանցը գաղթի հիմնական պատճառներից էր համարում արդյունաբերության և երկրագործության հետամնաց վիճակը՝ եզրակացնելով, որ հայերի գաղթելու իրական պատճառները տնտեսական էին⁹: Իհարկե, մասամբ կարելի է համաձայնել Ս. Գուլամիրյանցի մոտեցմանը՝ սոցիալական, տնտեսական խնդիրները համարելով արտագաղթի հիմնական շարժառիթ:

Կարծում ենք, որ տվյալ դեպքում խոսքը պետք է լինի արտագնա աշխատանքի մասին, երբ երիտասարդ տղամարդիկ մի քանի ամսով կամ տարով մեկնում էին աշխատելու այլ, հատկապես խոշոր բնակավայրեր: Հաջողակները որոշ ժամանակ անց վերադառնում էին ծննդավայր, վերանորոգում տունը, գնում հողատարածք, հիմնում սեփական աշխատատեղ: Եվ միայն հեռացողների մի փոքր մասն էր հաստատվում նոր բնակավայրում, որտեղ և տեղափոխում իրենց ընտանիքները: Սա արդեն արտագնա աշխատանքի բացասական հետևանքն էր նախկին բնակավայրի ժողովրդագրական պատկերի վրա: Ամերիկացի միսիոներ Հ.Ն. Բարնումը, գրում էր, որ Չմշկածագի բնակիչներից միայն քչերն էին կարողանում ապրուստի միջոցներ հայթայթել ծննդավայրում և, մեծ մա-

⁸ Արաքս 1889, գիրք Ա, 1–13:

⁹ Արաքս 1889, գիրք Ա, 1–13:

սամբ, յուրաքանչյուր տղամարդ ասրուստի միջոց էր վաստակում Կ. Պոլսում: Նրանք 5–10 տարի անց էին կացնում մայրաքաղաքում, վերադառնում և, ծննդավայրում 2–3 տարի վաստակածը ծախսելով, կրկին մեկնում աշխատելու¹⁰:

Այսպիսով, տնտեսական գործոնի դրդմամբ հեռացողները հիմնականում բավարարվում էին արտագնա աշխատանքով և վերադառնում ծննդավայր, այլ ոչ թե գաղթում ամբողջ ընտանիքով: Նշված ժամանակահատվածում տնտեսական գործոնը հայերին գաղթի դրդող պատճառներից էր, բայց ոչ հիմնականը: Գաղթի կարևոր գործոններից էին նաև արդեն իսկ հիշատակված անապահովությունը, զուտ էթնիկ ու կրոնական պատկանելիության պատճառով հարստահարություններն ու ավազակային հարձակումները, որոնք գրեթե միշտ մնում էին անպատիժ: Անգլիացի ինժեներ Հ. Բարկլին նշում էր, որ Դիարբեքիից ներքև բերրի տարածքներ կան, որտեղ կարելի է հիանալի բերք ստանալ: Սակայն այդ տարածքները մնում են անմշակ: Գյուղացիները չեն մշակում նույնիսկ իրենց տան համար անհրաժեշտ քանակությամբ կուլտուրաներ, քանզի վստահ են, որ այն կթալանվի կամ քրդերի կամ զինվորների կողմից: Նա հավելում էր, որ այդ մարդիկ տանջվում են սովից ու հիվանդություններից, որոնք շատ արագ էին տարածվում՝ ամայացնելով տարածքը¹¹: Նման իրողությունները հատուկ էին հատկապես Դիարբեքիի, մասամբ նաև Խարբերդի նահանգի Դերսիմի գավառի մի շարք բնակավայրերի:

Նշենք նման մի քանի վկայություններ ևս: Դիարբեքիի նահանգի Արղանա Մադեն գավառի Ջերմուկ գավառակում նման դեպքերը եզակի չէին: Ս. Պարսամյանը գրում էր, որ «Սովորական դարձած է հասարակ թուրքի մը հայ վարպետին գործ ապսպրել եւ փոխարժէքը վճարելուն առարկել թէ շատ է, սուղ է. Կէսը վճարել եւ

¹⁰ The Missionary Herald 1871, February, 41.

¹¹ Barkley 1891, 280.

առնել տանիլ, անոր ետեւէն պոռալով»¹²: Նա արձանագրել է ևս մեկ ուշագրավ փաստ, որն արդեն առնչվում է կրոնական խտրականությանն ու հալածանքներին: Նրա հավաստմամբ, Ջերմուկի Առաքելական եկեղեցին հաջողվել էր վերակառուցել միայն 1870-ականների վերջերին, քանի որ մինչ այդ մահմեդականներն արգելք էին հանդիսանում եկեղեցու վերաշինությանը¹³:

Արդանա Մադեն գավառի բնակավայրերից էր նաև Չնքուշը, որտեղ հայ բնակչությունը ենթարկվում էր առավել մեծ հալածանքների: Դեռևս XIX դ. սկզբներին, չդիմանալով քրդական ու թուրքական հալածանքներին ու կողոպուտներին, Չնքուշից մոտ 500 ընտանիք գաղթել էր Սևերակ, Ջերմուկ, Մադեն, Մալաթիա, Խարբերդ քաղաքներ և Շիրո ու Կարկառ գավառակների գյուղեր: Չնքուշում տիրող խտրականությունների մասին է վկայել տեղի Հայ ավետարանական եկեղեցու հովիվ Ս. Նազգաշյանը: Նրա հավաստմամբ, Չնքուշի բնակիչներն առավել, քան այլ բնակավայրերում, պատճառ ունեին գանգատվելու նման դեպքերից: Խոսքը հատկապես աղաների հարստահարությունների և քրիստոնյաներին անպատիժ կեղեքելու սովորության մասին էր¹⁴: Չնքուշի վերաբերյալ ուշագրավ մի աշխատանքի հեղինակ Գ. Գևորգյանի փաստմամբ՝ չնքուշցի ընտանիքների տղամարդիկ ևս հիմնականում վաստակում էին արտագնա աշխատանքով: Նրանք մոտ 8 ամիս աշխատում էին այլ բնակավայրերում, ապա աշնանը վերադառնում Չնքուշ և այստեղ մնում մինչև Ջատիկ¹⁵:

Սակայն միայն արտագնա աշխատանքը չէր կարող ապահովել այդ ընտանիքների ապրուստն ու անվրդով կյանքը: Ս. Նազգաշյանը նկարագրել է դեպքեր, երբ, օրինակ, մահմեդականը բնակվել է գաղթած հայի տանը, սակայն տուրքերը բարդվել են տանտիրոջ

¹² Պարսամեան 1969, 45:

¹³ Պարսամեան 1969, 37:

¹⁴ Աւետաբեր 1879, յունիս 10:

վրա, կամ շատ էին դեպքերը, երբ թուրք աղաները, իբր պարտքի դիմաց, գրավում էին հայերի հողերն ու այգիները, օգտվում դրանց ամբողջ արդյունքից, սակայն հարկերը ստիպում էին վճարել հայերին¹⁶: «Մասիս» թերթում 1880 թ. հոդված է տպվում Չնքուշի մի քանի բեյերի չարագործությունների վերաբերյալ, որոնց դեմ տեղի փոխառաջնորդը և բողոքական ու կաթոլիկ ազգային գործիչները վերոհիշյալ միսիոներ Հ.Ն. Բարնումի միջոցով, հավաքական բողոքագիր են ուղարկում կուսակալին և պատրիարքարան¹⁷: Այս ամենը նպաստում էր հայ բնակչության մշտական տեղաշարժերին:

Բնակչության տեղաշարժերը թեև բնորոշ էին Դիարբեքրի նահանգի տարբեր բնակավայրերի, սակայն հատկապես շատ էին Բալուն լքողները: Մ. Տերոյանցը գրում է. «Պատմության նայելով Բալուն հնումը մօտ 100.000 բնակիչ է ունեցել և Աշտիշատի մէջ ամենամեծ և առաջին քաղաքն է եղած: Նոյն իսկ սորանից 70-80 տարի առաջ Բալուի բնակիչների թիւը յանգելիս է եղել 30.000-ի, ինչպէս որ կը պատմեն տեղացի ծերունիները: Հայ ազգաբնակչությունը օր ըստ օրե նվազում է այստեղ, գաղթող հայերի երրորդ մասին չափ հազիւ թուրքեր կաւելանան, որոնք կը գան նմանապէս Ճապարջուրի շրջակայքից, Խարբերդից և այլ կողմերից: Հայոց թաղերի հարաւային գերեզմանի կողմը դեռ կերևին հազարաւոր տների կիսաւեր պատերը, իսկ արևելեան կողմը Արածանիի եզերքին մօտաւորապէս 40 բոպէի տեղ բոլորովին յայտնի է, որ քաղաքին ստորին մասերն են եղել քիչ ժամանակ առաջ»¹⁸:

Բալուից գաղթելու ազդակները տարբեր են եղել: Գ. Սրվանձ-տյանցը գրում է, որ «Օղն ու ջուրը խիստ ծանր է այս քաղաքին, եւ մարդիկ դեղնած, գրեթէ ճերմակ մազերով մէկը չես տեսներ, քիչեր

¹⁵ Գէորգեան 1970, 84:

¹⁶ Աւետաբեր 1879, յունիս 10:

¹⁷ Գէորգեան 1970, 48:

¹⁸ Արաքս 1897, մայիս, 38:

կան, որ յիսուն տարին լրացնելէն զկնի մեռնին»¹⁹: Ի տարբերությոն քաղաքի՝ գյուղերի բնակիչները, ըստ նրա, լիովին առողջ էին և ապրում էին բնականոն կյանքով: Ծննդավայրը լքելու կարևոր պատճառներից է եղել նաև, ինչպես մյուս բնակավայրերի դեպքում, անապահովությունը: Ժամանակակիցները նշում են, որ այնտեղ գիշեր թե ցերեկ հաճախ հրացանի կրակոցներ էին լսվում, իսկ հետո պարզվում էր, որ կողոպտվել է որևէ հայի տուն, կամ հայ է սպանվել²⁰: Իշխանությունների կեղեքումներն ու ծանր հարկահանությունը ևս Բալուից գաղթի հիմնական պատճառներից էին, ինչի մասին գրում էր նաև Պ. Նաթանյանը. «Բալուայ եւ ամէն գաւառի հայ բնակչաց շատերն՝ որ Պօլիս պանդխտութեան կը դիմեն իրենց ընտանիքինին երեսի վրայ ձգելով, պատճառը այս անտանելի հարստահարութեանց եւ ծանր արքունի տրոց չդիմանալնին է»²¹:

Բալուից պանդխտության մեկնողների հիմնական ուղղությունը եղել է Կ. Պոլիսը: Ըստ Գ. Սրվանձոյանցի՝ «Բալուայ գեղերու հայերը մեծաւ մասամբ թէ ի Պօլիս եւ թէ ի գաւառս ճարտարապետ, հիւսն եւ որմնադիր են, իրենց տեղն ալ այգեգործ եւ երկրագործ, Պօլսոյ ազգայնոց մէջ նշանաւոր անձինք եւ գերդաստաններ կան ծանօթ՝ Բալուայ հովիտէն»²²: XIX դ. 70-ական թվականներից Բալուից ակտիվացած գաղթի մյուս ուղղություններն էին Ադանան, նաև Խարբերդը, Դիարբեքիրը, Սեբաստիան, Մալաթիան ու Քղին և վերջապես՝ ԱՄՆ-ը: Բալուից 1870-ականներից գաղթի, նաև արտագաղթի ծավալների մեծացումը կարելի է պայմանավորել, ինչպես Խարբերդի նահանգից արտագաղթի ծավալների մեծացման դեպքում է, նաև միսիոներների ազդեցությամբ: Խարբերդի հարևանությամբ լինելը և միսիոներների քարոզներն անապահով, բազմաթիվ զրկանքներ կրող բնակիչներին՝ հատկապես գյուղացի-

¹⁹ **Սրուանձտեանց** 1885, 158:

²⁰ **Նաթանեան** 1878, 51:

²¹ **Նաթանեան** 1878, 56:

ներին, ավելի բարեկեցիկ կյանք ունենալու հույսեր էին ներշնչում: Եվ ինչպես խարբերոցիները, Բալու գավառակի հայության մի մասը ևս բոլոր դժբախտություններից փրկվելու ելքը փնտրում էր արտագաղթի մեջ:

Արդեն 1895 թ. հետո կոտորածները դարձան գաղթի և հատկապես արտագաղթի հիմնական պատճառը: Շատ էին ընտանիքներով մեկնողները:

Բազմաթիվ էին դեպքերը, երբ դեռ կոտորածների ժամանակ գյուղերից փախած բնակչությունն ապաստան էր գտնում մոտակա ավելի խոշոր բնակավայրում: Նրանցից շատերը կոտորածներից ամիսներ անց դեռևս վախենում էին վերադառնալ իրենց բնակավայրեր, մի մասն էլ հաստատվում էր նոր բնակավայրում: Այս առումով, քաղաքների հայ բնակչության թվաքանակը կարծես չէր նվազում: Այլ էր վիճակը գյուղական բնակավայրերում: Շատերը հեռանում էին իրենց բնակավայրերից՝ այլ վայրերում անվտանգ կյանքի ու գույքի ապահովություն փնտրելով:

Արտագաղթ

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Դիարբեքիրի նահանգում հայ բնակչության ժողովրդագրական փոփոխությունների պատճառներից էր նաև արտագաղթը՝ հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Դրան մեծապես նպաստել է ամերիկացի միսիոներների գործունեությունը: 1880-ականներից ԱՄՆ արտագաղթողների թիվը սկսեց աճել՝ համիդյան կոտորածներից հետո ստանալով նոր ծավալներ:

Համիդյան կոտորածներն ու դրանց հետևանքները սարսափելի էին ամբողջ Արևմտյան Հայաստանում: Ինչ վերաբերում է կոնկրետ Դիարբեքիրի նահանգին, ապա այստեղ սպանվեցին հազարավոր հայեր, շատերը մահացան կոտորածներից հետո ծայր

²² Սրուանձտեանց 1885, 164:

առած հիվանդություններից, մի մասն էլ մնաց անօթևան՝ առանց գոյության տարրական պայմանների²³: Շուրջբոլորը թալանված, ավերված ու հրկիզված գյուղեր էին: Կոտորածների հետևանքները ծանր էին հատկապես Դիարբեքիր, Բալու, Սևերեկ քաղաքներում ու դրանց շրջակա բնակավայրերում: Դիարբեքիրում բրիտանական փոխհյուպատոս Սեսիլ Հալուարդի տվյալներով՝ Դիարբեքիրում և շրջակայքում կար 60.000 կարիքավոր²⁴:

Եվ սպասելի էր, որ մինչ այդ արդեն սկիզբ առած արտագաղթի ծավալները պետք է մեծանային: Գաղթում էին Երուսաղեմի անցագրերով, Յաֆայում նստում ֆրանսիական շոգենավ՝ անցնելու ԱՄՆ: Ոմանք էլ մնում էին Բեյրութում, Կիպրոսում, Եգիպտոսում²⁵:

1900-ական թվականներին Դիարբեքիրից արված թղթակցություններ կան, որտեղ խոսվում է օրվա կարևոր խնդիր դարձած գաղթականության մասին: Չնայած այն հանգամանքին, որ անցագիր ստանալն արգելված էր, այնուամենայնիվ, շատերը փախուստի էին դիմում, վատնում 20–25 ոսկու չափ գումար, բայց նույնիսկ այդ դեպքում ոչ միշտ էին հաջողության հասնում: Հողվածներում նշվում էր, որ հայերին խեղելը, հայիոյելը, սովորական երևույթ են դարձել, հասել ծայրահեղության: Ահա թե ինչու, երիտասարդությունն արտասահմանի որևէ ազգականի, ծանոթի առաջարկին վստահելով, պատրաստ է ամեն զոհողության՝ գնալու «ազատ երկիր»²⁶:

1906 թ. նոյեմբերի 18-ին թղթակից Վշտակիրը Տիգրանակերտից գրում էր. «Մեկնողներուն տեղը շրջակայքէն կուգան բռնել խեղճ գիւղացիներ, որք քիւրդերու զուլումներէն ազատուելու յուսով

²³ Մանրամասն տես՝ **Բաբլումյան** 2020, Հայագիտության հարցեր 61–75: **Բաբլումյան** 2020, Ցեղասպանագիտական հանդես 45–64:

²⁴ Report America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross 1896, 86.

²⁵ **Մկունդ** 1953, 269–270:

²⁶ Արմէնիա 1907, փետրվար 13:

քաղաք կը դիմեն, անդին իրենց տեղերը պարապ թողլով»²⁷: Տվյալ դեպքում նա գրում էր ժողովրդագրական այն խնդրի մասին, երբ հատկապես փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող բնակավայրերից բնակիչները գոյության միջոցներ գտնելու և հիմնականում ապահովության ակնկալիքով հեռանում էին, հաստատվում ավելի խոշոր, նաև՝ հայաշատ բնակավայրերում: Այս միտման պատճառով է, որ կենտրոնական բնակավայրերում հայերի թվաքանակի նվազեցում հիմնականում չէր նկատվում, մինչդեռ նախկինում հայաբնակ բազմաթիվ գյուղական բնակավայրեր հայաթափ էին լինում:

Հայաշատ քաղաքների, գյուղերի համար արտագաղթողների թիվը, թվում է, էական ազդեցություն չէր կարող ունենալ հայության ընդհանուր ժողովրդագրական պատկերի վրա: Բայց, երբ արձանագրում ենք, որ արտագաղթողների գերակշիռ մասը երիտասարդներ էին, պարզ է դառնում, որ նրանց հեռանալը զգալի պետք է լիներ նույնիսկ հայաշատ քաղաքների ու գյուղերի հայության համար: Ավելին, մի քանի տասնյակ տուն հայություն ունեցող գյուղի համար սա ուներ ժողովրդագրական էական բացասական հետևանքներ:

ԱՄՆ-ում տիգրանակերտցիների կարևոր կենտրոն էր դարձել Ուեսթ Հոփոքըն քաղաքը, որտեղ, ինչպես «Արմենիա» թերթի թղթակիցն էր գրում, 1905 թ. դրությամբ որոշ հայ գաղթականներ արդեն տուն էին գնել, ոմանք էլ փնտրտուքի մեջ էին: Թղթակիցը շեշտում էր, որ կատակով «փոքրիկ Տիգրանակերտ» անվանվող Ուեսթ Հոփոքըն քաղաքը եկեղեցու կառուցումից հետո կդառնա ԱՄՆ-ում տիգրանակերտցիների կարևոր կենտրոն²⁸: Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում հիմնվեցին նաև տիգրանակերտցիների կրթասիրաց, ուսումնասիրաց միություններ, ինչպես օրինակ՝ Տիգրանակերտի Կրթասիրաց ընկերությունը, Բա-

²⁷ Արմենիա 1907, յունուար 9:

²⁸ Արմենիա 1905, նոյեմբեր 15:

լուի Սաքրաթ գյուղի ուսումնասիրաց ընկերությունը և այլ կազմակերպություններ²⁹:

Եզրակացություններ

Դիարբեքիի նահանգի հայ բնակչության տեղաշարժերը՝ այդ թվում գաղթը երկրի ներսում և արտագաղթը, այս շրջանում՝ հիմնականում ԱՄՆ, նաև իսլամացման միտումները, որոնք առկա էին հատկապես համիդյան կոտորածների տարիներին, այն հիմնական պատճառներն էին, որոնց ազդեցությամբ որոշակիորեն փոփոխվում էր տարածքի ժողովրդագրական պատկերը:

Ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերում, այնպես էլ Դիարբեքիի նահանգի բազմաթիվ բնակավայրերում արտագաղթի կամ, առհասարակ, տեղաշարժերի հիմնական պատճառներն էին հայ բնակչության նկատմամբ կիրառվող սոցիալական ու հարկային խտրական քաղաքականությունը, հայ գյուղացիների վատթար տնտեսական դրությունը, սակավահողությունը, բռնությունները, և արդեն 1890-ական թվականներից կիրառվող կոտորածների ու իսլամացման քաղաքականությունը:

XX դ. սկզբներին, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում, այնպես էլ Դիարբեքիի նահանգի բնակավայրերում նվազել էր զուտ հայաբնակ վայրերի թվաքանակը: Բազմաթիվ էին այն գյուղերը, որտեղ ապրում էին հիմնականում փոքրաթիվ հայեր: Օրինակ, Դիարբեքիի շրջակա բնակավայրերից միայն մի քանիսն ունեին ստվարաքանակ հայություն, իսկ մյուսները՝ թեև հայաբնակ էին, բայց ունեին ընդամենը մի քանի տուն հայ բնակիչ: Այնուամենայնիվ, չնայած հայ բնակչության թվաքանակի նվազման միտումներին՝ ինչպես մյուս նահանգներում, Դիարբեքիում ևս հայերը դեռևս զգալի տոկոս էին կազմում:

²⁹ Ամերիկահայ տարեցույցը 1912, 182:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամենուն տարեցոյց 1921, Կ. Պոլիս:

Ամերիկահայ տարեցոյցը 1912, Պոստոն, Կիլիկիա տպարան, 383 էջ:

Արարատ 1914, Թ, Ս. Էջմիածին:

Ավագյան Ք. 2000, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 239 էջ:

«Արաքս» 1887, նոյեմբեր, Ս. Պետերբուրգ, գիրք Ա:

«Արարատ» 1888, յունուար, Ս. Էջմիածին:

Բաբլումյան Ա. 2020, Հայերի կոտորածները Դիարբեքի քաղաքում 1895 թ., «Հայագիտության հարցեր», Երևան, հ. 3, էջ 61–75:

Բաբլումյան Ա. 2020, Արևմտյան Հայաստանի Դիարբեքի նահանգի հայ բնակչությունը համիդյան կոտորածների տարիներին, «Յեղասպանագիտական հանդես», Երևան, հ. 1, էջ 45–64:

Գէորգեան Գ. 1970, Չնգուշապատում: Քննական պատմութիւն հայոց Չնգուշի, Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, Ա հ., 625 էջ:

Գուլամիրյանց Ա. 1889, Գաղթականութեան մասին, «Արաքս», Ս. Պետերբուրգ, գ. Ա:

«Հայք» 1891, յուլիս 15, Նիւ Եորք:

Մկրտչ Տ. 1953, Ամիտայի արծազանգներու վկայակոչումն եւ Բ հատոր, Նիւ Ճէրզի, Ուփհոլքն, 413 էջ:

Նազգաշեան Ա. 1879, յունիս 10, Չնգուշէն նամակ մը, «Աւետաբեր», Կոստանդնուպոլիս:

Նաթանեան Պ. Ծ. Վ. 1878, Արտօսը Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի, եւ Երզնկայլու, Կոստանդնուպոլիս, 202 էջ:

Պատմութիւն Պաղնատան 1966, Պոսթըն, Հայրենիք, 297 էջ:

Պարսամեան Ս. 1969, Յուշարձան Ջերմուկի, Պոսթըն, տպ. Հայրենիք, 144 էջ:

Սրուանձտեանց Գ. 1885, Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ, մաս Բ, Կ. Պոլիս, Տպագր. Գ. Պաղտատլեանի, 488 էջ:

Վշտակիր 1907, յունուար 9, Նամակ Թիւրքիաէն, «Արմէնիա», Մարսէլյ:

Վշտակիր 1907, փետրվար 13, Նամակ Թիւրքիաէն, «Արմէնիա», Մարսէլյ:

Տաճատ 1905, նոյեմբեր 15, Նամակ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, «Արմէնիա», Մարսէլյ:

Տերոյեանց Մ. 1897, Բալու, «Արաքս», Ս. Պետերբուրգ, մայիս:

- Barkley H.** 1891, Ride Through Asia Minor and Armenia, London, John Murray, 350 p.
- Dadrian V.** 1995, The History of the Armenian Genocide, RI & Oxford, Berghahn Books, 452 p.
- Merguerian B.** 2002, The View From the United States Consulate, in Armenian Tsopk / Kharbert, ed. R. Hovannisian, Costa Mesa, California, p. 273-325.
- Report America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, 1896, Washington, printed by the Journal Publishing Company, Meriden, Conn., 125 p.
- Story of Turkey and Armenia, 1896, edited by Rev. J. Pierce, Baltimore, Woodward Company, 500 p.
- The Missionary Herald 1871, February, Cambridge.
- Kévorkian R., Paboudjian P.** 1992, Les Arméniens dans l'Empire ottoman a la veille du génocide, Paris, Arhis, 603 p.

Арпине Р. Баблумян, Институт истории НАН РА, К.У.Н., Причины демографических изменений в провинции Диарбекир Западной Армении (конец XIX – начало XX вв.)

Резюме

Неотъемлемой частью политики Османской империи было изменение демографической картины Западной Армении в пользу турецко-курдских элементов.

К основным причинам, повлиявшим на изменения демографической картины провинции Диарбекир, относятся перемещения армян внутри страны, когда население мигрировало из сельских районов в более крупные районы, заселенные в основном армянами, эмиграция (в этот период в основном в США), а также исламизация, которая была актуальна в XIX веке и особенно в годы гамидовских истреблений. Во многих населенных

пунктах провинции Диарбекир основными причинами миграции были социальная, налоговая и религиозная политика империи в отношении к армянам, экономическое положение армянских крестьян, отсутствие собственности, насилие и массовые истребления с 1890-х годов.

В начале XX века число исключительно армянских поселений в провинции Диарбекир уменьшилось. Было много деревень, в которых проживало небольшое количество армян. Например, в окрестных населенных пунктах города Диарбекир лишь несколько селений имели значительное количество армян, другие – всего несколько домов. Однако, несмотря на тенденцию снижения численности армянского населения, армяне по-прежнему составляли значительный процент в провинции Диарбекир.

Ключевые слова: Западная Армения, Диарбекир, Тигранакерт, Балу, эмиграция, исламизация, гамидовские истребления.

Arpine R. Bablumyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, The Causes of Demographic Changes in Diarbekir Province of Western Armenia (end of XIX – beginning of XX centuries)*

Summary

An integral part of the Ottoman Empire's policy of persecuting the Armenians was to change the demographic profile of Western Armenia in favor of Turkish-Kurdish elements. The movements of the Armenian population of Diarbekir province, including migration within the country, emigration (mainly to the USA at that time), as well as Islami-

zation, which was also actual during the XIX century and especially during the years of the Hamidian massacres, were the main causes that affected the demographic profile of the area.

In other settlements of Western Armenia as well as in many settlements of Diarbekir province, the main reasons for emigration were the social, tax and religious discriminatory policies applied to the Armenian population, the economic situation of the Armenian peasants, the lack of ownership, violence, and the massacres that had been implemented in the 1890s.


At the beginning of the XX century, the number of purely Armenian settlements in Diarbekir province decreased. There were many villages where a small number of Armenians lived. For example, only a few of the settlements surrounding the city of Diarbekir had a significant number of Armenians, while others, had only a few houses with Armenian residents. However, despite the declining trends in the Armenian population, a significant percentage of the population in Diarbekir, as well as in other provinces, were still Armenians.

Key words: Western Armenia, Diarbekir, Tigranakert, Balu, emigration, Islamization, Hamidian massacres.

ՄՅԱՆՆԻԿ Ա. ԵՍՈՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

esoyan-87@mail.ru

 0000-0001-5697-8997

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-52

ԵԳԻՊՏԱԿԱՅ «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (1903–1904)*

Բանալի բառեր¹ ամսագիր, «Ժողովուրդ», Սասուն, եկեղեցապատ-
կան գույք, եգիպտահայ համայնք, Արևմտյան Հայաստան, Մինիե:

Ներածություն

XIX դ. կեսերից սկսած Եգիպտոսում զարգացող արտադրա-
կան հարաբերությունները մեծ աշխուժություն առաջացրեցին այդ
երկրի տնտեսական կյանքում: Եգիպտահայությունը գործուն
նպաստեց Եգիպտոսի տնտեսական ու մշակութային կյանքի զար-
գացմանը: XIX դ. վերջից սկսած այդ երկրում աշխուժացավ նաև
հայ մշակութային կյանքը, ավելացավ դպրոցների թիվը, երևան
եկան մշակութային ու կրթական նոր միություններ և կազմակեր-
պություններ: 1865 թ. Եգիպտոսում հիմնվեց եգիպտահայ անդրա-
նիկ պարբերականը՝ «Արմավենի» լրագիրը: Արդեն XX դ. սկզբին
եգիպտահայ գաղութը հայության մշակութային ամենախոշոր
օջախներից մեկն էր: Այնտեղ համախմբվել էին բազմաթիվ նշանա-
վոր մտավորականներ, որոնք անգնահատելի դեր խաղացին
եգիպտահայության հասարակական-քաղաքական կյանքում ար-
ժանավոր տեղ զբաղեցրած եգիպտահայ մամուլի զարգացման
գործում: XX դ. սկզբի եգիպտահայ պարբերականների շարքում իր

* Ներկայացվել է 28.III.2023 թ., գրախոսվել է 06.IV.2023 թ. և 21.V.2023 թ.,
ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

ուրույն տեղն ուներ «Ժողովուրդ» ամսագիրը, որը 1903–1904 թթ. լույս էր տեսնում Կահիրեում՝ Ավետիս Պալյանի խմբագրությամբ:

«Ժողովուրդ» ամսագրի հիմնական բաժիններն ու նպատակը

«Ժողովուրդն» ուներ ազգային, քաղաքական, մատենագրական, կովկասյան լուրեր և այլ բաժիններ: Այն ազգային ժողովրդավարական ուղղության պարբերական էր¹, որը քննարկում էր հանրային նշանակություն ունեցող խնդիրները, վեր հանում դրանց օգտակարությունն ու վնասակարությունը, չէր զբաղվում անձերով, կարևորում էր գաղափարների ուսումնասիրությունը և կոչ անում համերաշխ գործել: Պարբերականը որակյալ աշխատակիցներ չի ունեցել, և մեծ մասամբ խմբագիրն է տարբեր ծածկանուններով լցրել նրա էջերը²: Ա. Պալյանը պարբերաբար բարձրաձայնել է, որ «Ժողովուրդը» որևէ կուսակցության չի պատկանում: Ամսագիրն ընթացիկ տեղական լուրերով հագեցած պարբերական է եղել և, ըստ Հ. Պետրոսյանի, ավելի շուտ լրագիր էր, քան ամսագիր³:

Եգիպտահայ «Նոր օր», «Արշալոյս» և «Արտեմիս» պարբերականների նման «Ժողովուրդն» անդրադարձել է հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական անմխիթար իրավիճակին և, ի տարբերություն «Արշալոյսի», միջոցներ առաջադրել նրան այդ վիճակից դուրս բերելու ուղղությամբ: Ա. Պալյանն ազգի հիմքը համարել է ընտանիքը: Ըստ նրա, երբ ընտանիք կազմելու բաղձանքը թուլացած է, ապա ազգն այլասերման մեջ է գտնվում և նրա կործանումը ժամանակի խնդիր է: Չնայած ամուրիությունը հայության շրջանում լայն տարածում չուներ, Ա. Պալյանը մտավախություն էր հայտնում, որ ապագայում հայ ամուրիների թիվը կարող է ավելա-

¹ Կիրակոսյան 1970, 286:

² Թովուզյան 1978, 324:

³ Պետրոսյան 1957, 30:

նալ⁴: Եթե եգիպտահայ «Արտեմիս» պարբերականի կարծիքով հայ ազգը քաղաքակիրթ ազգերից է ընդօրինակել նրանց վատթար հատկանիշները՝ այդ թվում ամուրիությունը⁵, ապա «Ժողովուրդ» հայության շրջանում ընտանիք չկազմելու գլխավոր պատճառներից էր համարում մարդկանց նյութական անբավարար ապահովվածությունը: Բացի այդ, ըստ Ա. Պալյանի, բազմաթիվ երիտասարդներ չեն ցանկանում կտրվել ազատ կյանքի հաճույքներից, մինչդեռ իսկական երջանկությունն ընտանիքի՝ տղամարդու և կնոջ փոխադարձ սիրո մեջ է⁶:

XX դ. սկզբի եգիպտահայ պարբերականների էջերում հասարակության, ազգի զարգացման գործում կնոջ դերն ամենաքննարկված թեմաներից է եղել: «Ժողովուրդ» ևս մեծապես կարևորում էր հասարակության զարգացման ու ազգի առաջադիմության գործում կնոջ դերը. «Կինը,- նշվում էր պարբերականում,- լինելով մեր բնական դաստիարակուհին, եթե անեղծ չպահենք նրա արժանապատվութիւնը, իզուր ենք ճգնում որպես ազգ պատուար դիրք գրավել մարդկային հասարակութան շրջանում⁷»: Ամսագիրը եգիպտահայ բարձր խավի կանանց առաջարկում էր Կահիրեում հիմնել մարդասիրական հաստատություն, որը կգբաղվեր չքավոր եգիպտահայերի հոգսերով և նրանց, այդ թվում կանանց, կապահովեր աշխատանքով՝ փրկելով ստորացումից. «Հրապարակ իջի՛ր, սիրելի հայուհի՛ ու գթութեան ձեռք կարկառէ անոնց⁸», - կոչ էր անում ամսագիրը: Կանանց փորձելով մասնակից դարձնել հանրօգուտ աշխատանքին՝ «Ժողովուրդ» ձգտում էր նրանց ազատագրված տեսնել նախկին ավատատիրական կապանքներից⁹:

⁴ «Ժողովուրդ» 1904, № 3, 36–39:

⁵ «Արտեմիս» 1902, № 7–8, 198–201:

⁶ «Ժողովուրդ» 1904, № 3, 36–40:

⁷ «Ժողովուրդ» 1903, № 5, 68:

⁸ «Ժողովուրդ» 1903, № 3, 45:

⁹ Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922, 2017, 357:

Եգիպտահայ պարբերականը ողջունում էր Բաքվում 1900 թ. սկզբին հիմնված «Աշխատության տուն» հաստատության գործունեությունը: Դրանում 1900 թ. գործում էին կարուճակի, ուռկաններ գործելու բաժանմունքներ, լվացքատուն, ատաղձագործարան, որտեղ աշխատում էր 784 մարդ՝ այդ թվում 114 ամուսնացած կին, 155 այրի ու 525 տղա: Ամսագիրը կոչ էր անում հայաբնակ այլ վայրերում ևս հիմնել նման հաստատություններ և հայության մի մասին դուրս հանել թշվառ վիճակից¹⁰: Այն եգիպտահայությանը մասնավորապես խորհուրդ էր տալիս 10–15 ոսկի ներդնել և հիմնել լվացքատուն, որտեղ կկարողանան աշխատել 10–15 հայուհի՝ 1–2 ֆրանկ օրավարձով: Ամսագիրը գտնում էր, որ մի քիչ ավելի գումար հատկացնելով՝ լվացքատանը կից կարելի էր բացել արդուկատուն, և նշում, որ Կահիրեում շահութաբեր կլինի նաև հանդերձատուն բացելը, քանզի բազմաթիվ պանդուխտներ, ամուրիներ ու բազմազբաղ կանայք հագուստները նորոգելու և նորերը պատվիրելու կարիք ունեն: Պարբերականը եգիպտահայությանը կոչ էր անում օգտվել կենցաղային ծառայություններ մատուցող հայկական կազմակերպություններից¹¹:

«Ժողովուրդ» ամսագիրը դժգոհում էր, որ հայ ազգը միայն կրոնական տոներ ունի, որոնք հիմնականում եկեղեցիներում են նշվում, մինչդեռ հայության մեծ մասն անտարբերությամբ է վերաբերվում այդ տոներին: Իր ազգային-ոռմանտիկական տրամադրությունները չթաքցնելով՝ ամսագիրն առաջարկում էր Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի առթիվ ազգային տոն սահմանել. «Տոներնք 61-րդ յօդվածը, վասնզի անկէ լաագոյնը չունենք, տօներք այն, վասնզի երկար տարիներ գեղածիծաղ յոյսեր ներշնչեց մեզ¹²»:

¹⁰ «Ժողովուրդ» 1903, № 5, 73–74:

¹¹ «Ժողովուրդ» 1903, № 4, 52–53:

¹² «Ժողովուրդ» 1903, № 6, 85–88:

«Ժողովուրդն» արևելահայության և արևմտահայության դրության մասին

«Ժողովուրդը» մեծ տեղ էր հատկացնում արևելահայության և արևմտահայության դրության լուսաբանմանը: Նրանում արևելահայությանը վերաբերող տեղեկատվությունը հիմնականում վերաբերում էր հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումից հետո հայության մղած պայքարի լուսաբանմանը՝ այդ օրենքը համարելով ռուսական իշխանությունների կողմից հայ եկեղեցու կալվածքների և գույքի նկատմամբ ոտնձգություն: Պարբերականը եկեղեցական գույքի բռնագրավման մասին օրենքի իրականացումը որակել է հայ ժողովրդի համար աղետ՝ յուրաքանչյուր հայի պարտքը համարելով պայքարել այն չեղարկելու համար և կոչ է արել չհուսահատվել, համախմբվել Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի շուրջն ու օրենքի շրջանակներում շարունակել պայքարը: «Ժողովուրդն» օրենքի ընդունման հիմնական նպատակը համարում էր հայ եկեղեցու՝ որպես կառույցի ոչնչացումն ու հայ ժողովրդին ձուլելը: «Ռուսաստանի՝ ռուսահպատակ ազգերի քաղաքականությանը քաջաձանոթ յուրաքանչյուր ազգ կհաստատի այդ ճշմարտությունը¹³», - նշում էր պարբերականը:

1896 թ. հայկական դպրոցների փակման դեմ Հայ առաքելական եկեղեցին ակտիվ պայքար չմղեց, ինչն աղետալի հետևանք ունեցավ հայության համար: Արդարև, պետք է նշել, որ ժողովրդի ցուցաբերած անբացատրելի անտարբերությունից հետո կաթողիկոսը չէր կարող ակտիվ պայքարել ազգային դպրոցները փակելու որոշման դեմ: Այս կապակցությամբ ամսագիրը պասիվ գործունեության համար քննադատում էր Մկրտիչ Խրիմյանին՝ միևնույն ժամանակ ընդգծելով, որ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումից հետո կաթողիկոսը վճռական քայլեր է իրականացնում: Ա. Պալյա-

նը մեծապես ոգևորված էր, որ ազգային դպրոցների փակման հանդեպ դրսևորած անտարբերությունից հետո հայության կողմից ցուցաբերվում է ակտիվ նմանատիպ շարժում: Ամսագիրն ուրախությամբ նշում էր, որ արևելահայերի տներում արգելված էր ռուսերենը, բոլորը հայերեն էին խոսում, ռուսական թատրոնները դատարկ էին մնում, ոչ մի հայ չէր գնում ներկայացում դիտելու¹⁴: «Ժողովուրդը» հույս է հայտնում, որ հայության մղած պայքարը կավարտվի հաջողությամբ, քանզի Նիկոյայ II կայսրը նկատի կունենա, որ հայ ազգը մշտապես ծառայություններ է մատուցել ու հավատարիմ եղել ռուս ազգին¹⁵:

Եկեղեցապատկան գույքի բռնագրավման մասին օրենքի հրապարակումից հետո Կահիրեում ու Ալեքսանդրիայում տեղի ունեցան բողոքի ցույցեր, որոնց ընթացքում ելույթներ ունեցան Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդարանի դիվանապետ Նազարեթ Աղազարմը, Մ. Տամատյանը, Տ. Բեքարյանը և ուրիշներ: Պարբերականը մանրամասն ներկայացնում էր այդ ելույթները, որոնցում դատապարտվել էին օրենքն ու հայությանը հորդորվել՝ ամեն միջոց կիրառել դրա կիրառումը խափանելու համար¹⁶:

Ամսագրին վրդովեցնում է Էջմիածնի վանքի մերձակայքում ռուսական եկեղեցի կառուցելու համար տեղ հատկացնելու կաթողիկոսի որոշումը¹⁷: Ըստ պարբերականի, նա իրավունք չուներ միայնակ որոշում կայացնել ու եկեղեցապատկան կալվածքներից հող տրամադրել ռուսական եկեղեցի կառուցելու համար, քանի որ այդ կալվածքների իսկական տերը հայ ժողովուրդն է¹⁸:

¹³ «Ժողովուրդ» 1903, № 10, 159:

¹⁴ «Ժողովուրդ» 1903, № 12, 191–192:

¹⁵ «Ժողովուրդ» 1903, № 9, 133–137:

¹⁶ «Ժողովուրդ» 1903, № 10, 167:

¹⁷ «Ժողովուրդ» 1903, № 9, 133–137:

¹⁸ «Ժողովուրդ» 1903, № 10, 153–161:

«Ժողովուրդն» իր երկու համարներում տպագրել է հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքի տեքստն ու իր ընթերցողներին ծանոթացրել դրա բովանդակությանը, իսկ «Արմենիա» թերթից արտատպել է Մկրտիչ Խրիմյանի՝ ռուսաց ցարին հղած խնդրագրերն ու հեռագրերը¹⁹:

Եգիպտահայ մյուս պարբերականների նման «Ժողովուրդ» պարբերականին ևս մտահոգել է Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը: Ի տարբերություն եգիպտահայ «Փինիկ», «Արշալոյս», «Ազատ բեմ» պարբերականների, որոնք խիստ քննադատել են օսմանյան իշխանությունների հայահալած քաղաքականությունը, «Ժողովուրդը» բավարարվել է միայն արևմտահայության դրության վերաբերյալ որոշ տեղեկություններ հաղորդելով: Անդրադառնալով Սասունի 1904 թ. ապստամբությանը՝ ամսագիրը նշում էր, որ 1894–1896 թթ. կոտորածների նման Սասունում նոր կոտորած է տեղի ունենում, որը սպառնում է նաև Էրզրումի և Վանի անզեն ու անպաշտպան հայությանը²⁰: Բացի այդ, ամսագիրը ներկայացնում էր Սասունի կոտորածից հետո Մուշում տիրող ծանր դրությունը, որտեղ հաստատվել էին շուրջ 20.000 որբ, ծեր ու այրի հայեր²¹:

Հղում անելով «Արմենիա» թերթին՝ ամսագիրը տեղեկացնում էր, որ 1904 թ. հուլիսի սկզբներին 60 արևելահայերից բաղկացած խումբն արցախցի խմբապետ Թուման Թումանյանի գլխավորությամբ Արևմտյան Հայաստան անցնելու ճանապարհին շրջափակվել է ռուս սահմանապահների կողմից: Խումբը չի դիմադրել և անձնատուր է եղել՝ հույսը դնելով ռուս սահմանապահների ողորմածության վրա: «Աւաղ,- գրում էր «Ժողովուրդը», - չի օգնում մեր մի բուն հայրենասերների այդ խոհեմութիւնը. սկսում են կոտորել

¹⁹ Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922, 2017, 358:

²⁰ «Ժողովուրդ» 1904, № 12, 177–181:

²¹ «Ժողովուրդ» 1904, № 17–19, 284:

ինքնայոժար կերպով զինաթափ եղած հայերին²²»: Արդյունքում խմբի 38 անդամներ սպանվում են, իսկ մյուսները՝ ձերբակալվում²³:

«Թավրիզի հայ համայնքը» հողվածում «Ժողովուրդը» որոշ տեղեկություններ էր հաղորդում այդ համայնքի մասին: Ըստ այդ հողվածի, 1904 թ. Թավրիզում տարբեր տվյալներով հաշվվում էր 700–800 հայ ընտանիք, որոնք կենտրոնացված էին քաղաքի Լիլավայ և Ղազա թաղամասերում: Ղազա թաղամասում գտնվում էին Արամյան ու Աննայան հայկական երկսեռ վարժարանները, որտեղ սովորում էր շուրջ 250 աշակերտ: Հայկական եկեղեցին ու Թամարյան ուսումնարանը գտնվում էին Լիլավայ թաղամասում²⁴:

«Ժողովուրդի» անդրադարձը եգիպտահայ հասարակական ու մշակութային կյանքին

Եգիպտահայ այլ պարբերականների նման «Ժողովուրդն» ուշադրության կենտրոնում էր պահում եգիպտահայ համայնքի հասարակական ու մշակութային կյանքի կարևոր իրադարձությունների լուսաբանումը: Պարբերականը հայտնում էր, որ 1903 թ. դեկտեմբերի 25-ին Ալեքսանդրիայի հայկական թատերախումբն ազգային նվագախմբի մասնակցությամբ Կահիրեում հանդես է եկել իր անդրանիկ ներկայացմամբ: Ըստ «Ժողովուրդի», հայության համար այդ ներկայացումն իսկական անակնկալ է եղել և, հակառակ հայկական ներկայացումների հանդեպ եգիպտահայերի անտարբերությանը, այդ երեկո Կահիրեի ազգային թատրոնը լեփ-լեցուն է եղել: Պարբերականը նաև հայտնում էր, որ այդ օրերին հայկական նվագախումբը Կահիրեի որոշ սրճարաններում մի քանի օր հիանալի նվագել է հայկական, իտալական, ֆրանսիական, անգլիական, հունական և եգիպտական քայլերգեր ու մեծ ոգևորություն պարզևել Կահիրեի հայերին: Ամսագիրը նրանց անունից հրապա-

²² «Ժողովուրդ» 1904, № 17–19, 270–271:

²³ «Ժողովուրդ» 1904, № 17–19, 270–271:

²⁴ «Ժողովուրդ» 1904, № 7, 103–106:

րակավ շնորհակալություն էր հայտնում հիասքանչ կատարումների համար և հույս հայտնում, որ հայկական թատերախումբն ու նվագախումբն այսուհետ ևս կշարունակեն նմանատիպ փայլուն ներկայացումներով հանդես գալ և հաճելի օրեր պարգևել եգիպտահայությանը²⁵:

Եգիպտահայ համայնքի մշակութային կյանքում տեղի ունեցած հաջորդ կարևոր իրադարձությունը, որին անդրադարձել է «Ժողովուրդը», 1904 թ. փետրվարին եգիպտահայ արվեստագետ Վարդան Մախոխյանի նկարների ցուցահանդեսն էր Կահիրեում, որը դիտել էին Եգիպտոսի հազարավոր քաղաքացիներ: Ամսագիրը հիացմունքով նշում էր, որ Երվանդ Դեմիրճյանից հետո Վարդան Մախոխյանը շարունակում է բարձր պահել հայ արվեստագետի անունն ու նպաստել Եգիպտոսում արվեստի զարգացմանը²⁶:

Ամսագրի ուշադրությունից չի վրիպել 1903 թ. Թորոս Թավուգյանի հետ կապված դեպքը, երբ նա իսլամ ընդունելու համար դիմել էր Մանսուրյայի քաղաքապետարան: Նրան այնտեղից 10 օր ժամանակ էին տվել խորհելու և վերջնական որոշում կայացնելու համար: Ամսագիրը նկատում էր, որ Թ. Թավուգյանը թշվառ վիճակում գտնվելով բազմիցս օգնության համար դիմել էր Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդարանին, սակայն միշտ մերժվել: Բացի այդ, «Ժողովուրդը» տեղեկացնում էր, որ այդ լուրը տարածվելուց հետո եգիպտահայ ազգասերներ Պողոս բեյ Յակուբյանն ու Բարսեղ Բալդճյանն ի նպաստ Թորոս Թավուգյանի հանգանակություն են ձեռնարկել: Ամսագիրը քաջալերում էր եգիպտահայությանը՝ բարեգործությամբ օգնելու հայ համայնքի թշվառության մեջ գտնվող անդամներին²⁷: Թ. Թավուգյանի հետագա ճակատագրի մասին «Ժողովուրդը» այլևս տեղեկություն չի հաղորդում:

²⁵ «Ժողովուրդ» 1904, № 1, 11–14:

²⁶ «Ժողովուրդ» 1904, № 5, 73–75:

²⁷ «Ժողովուրդ» 1903, № 4, 62:

Ամսագիրն ուրախությամբ հայտնում էր, որ Պողոս Նուբար փառալուծի տիկինը խոստացել է 1904 թ. հունվարից սկսած յուրաքանչյուր ամիս 15 ոսկի նվիրել Ալեքսանդրիայի Աղքատախնամ ընկերությանը, և նշում, որ ի նպաստ Ձեյթունի արհեստանոցի Մինաս Չերազի բացած հանգանակության մասնակից եգիպտահայ բարերարների թվաքանակն օրեցօր ավելանում է: Մասնավորապես, Մկրտիչ Անդրանիկյանը նվիրաբերել էր 50, իսկ Բարթիկ Նահապետյանը՝ 25 ֆրանկ²⁸: Պարբերականը նշում էր, որ Պողոս Նուբարը պարբերաբար նվիրատվություններ է կատարում եգիպտահայ համայնքին: Մասնավորապես, իր անդրանիկ որդու պսակադրության կապակցությամբ 1904 թ. նա 1000 ոսկի էր նվիրել Կահիրեի Գալուստյան վարժարանին²⁹, իսկ ի հիշատակ վաղամեռիկ որդի Ասլանի՝ 1904 թ. աշնանը 100 ոսկի էր ընծայել Կահիրեի Ս. Աստվածածին եկեղեցուն³⁰: «Ժողովուրդ» հուսով էր, որ Պողոս Նուբարի և վերոնշյալ բարերարների մարդասիրական օրինակին կհետևեն բազմաթիվ եգիպտահայեր:

Եգիպտահայությանը 1904 թ. հուզող ամենահրատապ խնդիրներից էր Կահիրեում ազգային նոր վարժարանի կառուցումը, ուստի, եգիպտահայ համայնքի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Հովսեփ Այվազյանն օժանդակության համար հատուկ ուղերձով դիմել էր եգիպտահայությանը: Ամսագիրը ևս եգիպտահայությանը կոչ էր անում նեցուկ լինել ազգային նոր կրթարան հիմնելու գործին³¹: Պարբերականի համաձայն, եգիպտահայ համայնքն արագ արձագանքել էր Հովսեփ Այվազյանի կոչին: Մասնավորապես, Տիգրան Աբրոյանը տրամադրել էր 300, Գ. Գանչելերը՝ 200, Գ. Թո-

²⁸ «Ժողովուրդ» 1904, № 2, 30:

²⁹ «Ժողովուրդ» 1904, № 3, 46:

³⁰ «Ժողովուրդ» 1904, № 22, 352:

³¹ «Ժողովուրդ» 1904, № 8, 126–128:

փայլանը՝ 200, Մ. Անդրանիկյանը՝ 100, Յուսուֆ բեյ Ազիզը՝ 50 ոսկի և այլն³²:

«Ժողովուրդը» եգիպտահայ համայնքի մշակութային կյանքում կարևոր իրադարձություն էր համարում 1904 թ. Տիգրան Երկաթ միության ընթերցասարահի բացումը: Այն ստեղծվել էր Հնչակյան և Դրոշակյան ընթերցասարահների միավորմամբ: Ընթերցասարահը կահավորելու համար եգիպտահայ համայնքը հանգանակություն էր կազմակերպել, և ամսագիրը եգիպտահայությանը քաջալերում էր ակտիվ մասնակցել դրան³³:

«Ժողովուրդը» եգիպտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչների մահվան ու կիսանդրիների տեղադրման կապակցությամբ տեղեկություններ էր հաղորդում նրանց կյանքի ու գործունեության վերաբերյալ: Օրինակ, 1904 թ. փետրվարին Եգիպտոսի վարչապետի պաշտոնը 4 անգամ զբաղեցրած Նուբար Նուբարյանի կիսանդրու պատվանդանի տեղադրման կապակցությամբ «Ժողովուրդը» ներկայացնում և արժեքավորում էր նրա անցած ուղին³⁴: Բացի այդ, պարբերականը մանրամասն նկարագրել է Հովսեփ Այվազյանի 1904 թ. հունիսի 5-ին տեղի ունեցած հուղարկավորության արարողությունը, որին մասնակցել էին բազմաթիվ եգիպտահայեր, Ալեքսանդրիայի կառավարիչը, Եգիպտոսի խզիվի ներկայացուցիչը, Եգիպտոսի քրիստոնեական համայնքների առաջնորդները, բազմաթիվ հասարակ եգիպտացիներ³⁵: Ամսագրի հաղորդմամբ 1904 թ. նոյեմբերի 15-ին տեղի էր ունեցել Տիգրան Աբրոյանի հուղարկավորությունը, որին ևս հոծ բազմություն էր մասնակցել³⁶: Ամսագրի համաձայն, Տ. Աբրոյանը Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդարանին կտակել էր 50.000 ֆրանկ, իսկ նրա

³² «Ժողովուրդ» 1904, № 9, 142:

³³ «Ժողովուրդ» 1903, № 1, 16:

³⁴ «Ժողովուրդ» 1904, № 4, 49–52:

³⁵ «Ժողովուրդ» 1904, № 12, 185–186:

³⁶ «Ժողովուրդ» 1904, № 21, 329–330:

ընտանիքն ավելի քան 10.000 ֆրանկ էր նվիրել եգիպտահայ աղքատ զանգվածին, հայկական նվագախմբին և եգիպտահայ այլ կազմակերպությունների³⁷:

Պարբերականը տեղեկություններ էր հաղորդում նաև Վերին Եգիպտոսում ապրող հայության մասին: Պարզվում է, որ XX դ. սկզբին 12 հայ ընտանիք բնակվում էր Յասիուֆ բնակավայրում: Մինիե գյուղաքաղաքում ևս բնակվում էին հայ ընտանիքներ: Այստեղ հաստատված 4 հայ ընտանիք, իրենց աշխատասիրության շնորհիվ, ձեռք էին բերել ընդարձակ կալվածքներ ու շինություններ: Վերին Եգիպտոսի 14 այլ բնակավայրերում ևս 15 հայ էր ապրում: Պարբերականը ցավով նշել է, որ Վերին Եգիպտոսի ոչ մի վայրում տեղի հայերի կողմից գեթ մեկ մատուռ կամ նախակրթարան չի հիմնվել³⁸:

Եզրակացություններ

Լինելով ազգային ժողովրդավարական ուղղության պարբերական՝ «Ժողովուրդ» անդրադարձել է հայ ժողովրդի սոցիալական, տնտեսական ու քաղաքական անմխիթար վիճակին և նրա դրությունը փոխելու միջոցներ առաջադրել: Ամսագիրը ուշադրության կենտրոնում էր պահում եգիպտահայ համայնքի հասարակական ու մշակութային կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների լուսաբանումը՝ պարբերաբար կոչ անելով եգիպտահայ աղքատ խավին ապահովել աշխատանքով: Բացի այդ, ամսագիրը մեծ տեղ էր հատկացնում 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումից հետո հայության մղած պայքարի լուսաբանմանը՝ կոչ անելով համախմբվել կաթողիկոսի շուրջն ու պայքարը շարունակել օրենքի շրջանակներում: Եգիպտահայ պարբերականը նաև մտահոգվելով Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակով՝ մասնավորապես, տեղե-

³⁷ «Ժողովուրդ» 1904, № 21, 335–337:

³⁸ «Ժողովուրդ» 1904, № 4, 57–59:

կությաններ էր հաղորդում Սասունի 1904 թ. ապստամբության վերաբերյալ: Ի տարբերություն եգիպտահայ այլ պարբերականների, որոնք խիստ քննադատում էին օսմանյան իշխանությունների հայահալած քաղաքականությունը, «Ժողովուրդը» բավարարվում էր արևմտահայության դրության վերաբերյալ միայն որոշ տեղեկություններ հաղորդելով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

«Արտեմիս», Կահիրե, 1902, № 7-8:

«Արեգ», Կահիրե, 2011, № 16: (արաբերեն)

«Ժողովուրդ», Կահիրե, 1903, №1, 2,3,4,5,6,7,8,9, 10, 11, 12, 1904, №1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22:

Թոփուզյան Հ.Խ. 1978, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 359 էջ:

Կիրակոսյան Ա. 1970, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967), Երևան, 622 էջ:

Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922, հ. 2, Երևան, 2017, 787 էջ:

Պետրոսյան Հ. 1957, Հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիա (1900–1956), հ. 2, Երևան, 623 էջ:

Мясник А. Есоян, *Института истории НАН РА, к.и.н., доцент*, **Армяно-египетское издание «Жоговурд» (1903–1904)**

Резюме

Являясь периодическим изданием национально-демократической направленности, «Жоговурд» обратил внимание на плачевное социально-экономическое и политическое положение армянского народа и предложил способы выхода из него. В центре внимания издания находилось освещение важных событий, происходящих в общественной и культурной жизни армянской об-

щины Египта, также в журнале периодически звучали призывы обеспечить трудоустройство бедных слоёв египетских армян. Кроме того, данное издание уделяло большое внимание освещению борьбы армян после принятия закона 12 июня 1903 года и призывало объединиться вокруг католикоса и продолжить борьбу в рамках закона. Египетско-армянское периодическое издание было озабочено также существующим в Западной Армении положением, передавая сообщения о Сасунском восстании 1904 года. В отличие от других египетско-армянских общественно-политических изданий, резко критиковавших антиармянскую политику османских властей, «Жоговурд» довольствовался лишь сообщением некоторых сведений о положении западных армян.

Ключевые слова: журнал, «Жоговурд», Сасун, церковная ответственность, египетско-армянская община, Западная Армения, Миние.

Myasnik A. Esoyan, Institute of History of the NAS of RA, PHD in History, Associate Professor, Egyptian-Armenian Periodical “Joghovurd” (1903–1904)

Summary


As a periodical with a national democratic orientation, “Joghovurd” referred to the deplorable social, economic and political situation of Armenian people and proposed measures to get them out of that situation. The magazine focused on the coverage of important events in the social and cultural life of the Egyptian-Armenian community and regularly called for the employment of poor Egyptian-Armenians. In addition, the magazine focused on the struggle of the Armenians after the adoption of the law of 12 June 1903, calling on them to unite around the Catholicos and continue the struggle within the law. The Egyptian-

Armenian periodical was also concerned with the situation in Western Armenia, reporting on the Sasun uprising in 1904. Unlike other Egyptian-Armenian socio-political periodicals, which severely criticized the anti-Armenian policy of the Ottoman authorities, "Joghovurd" was content to report only some information about the situation of Western Armenians.

Key words. magazine, "Joghovurd", Sasun, church property, Egyptian-Armenian community, Western Armenia, Minie.

ՀԱՍՄԻԿ Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. թ.
amirjanyan.hasmik@rambler.ru

 0009-0002-4363-0961

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-67

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1915 Թ. ԱՊՐԻԼ-ՆՈՅԵՄԲԵՐ)*

Բանալի բառեր¹ հայկական կոտորածներ, ռուսական կառավարություն, Արևմտյան Հայաստան, թուրքական կառավարություն, Ամենայն հայոց կաթողիկոս, պետական գործիչներ, Հայկական հարց:

Ներածություն

Օսմանյան Թուրքիայում իշխանության եկած երիտթուրքերի կառավարությունը որդեգրել էր 1894–1896 թթ. հայկական ջարդերի կազմակերպիչ սուլթան Աբդուլ Համիդ II-ի (1876–1909) հակահայկական քաղաքականությունը: 1908 թ. երիտթուրքերը իրականացրել են պետական հեղաշրջում: Իշխանությունը զավթել են պատերազմի նախօրյակին:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը (1911–1930), որը մեծ գործունեություն էր ծավալել 1912–1914 թթ. Հայկական հարցի վերաբացման ուղղությամբ, 1912 թ. սկսած տարբեր աղբյուրներից տեղեկություններ էր ստանում Արևմտյան Հայաստանում հայերի կոտորածների վերաբերյալ: Հայ գործիչներն ու տար-

* Ներկայացվել է 06.IV.2023 թ., գրախոսվել է 16.IV.2023 թ. և 20.IV.2023 թ., ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

բեր կազմակերպությունները կաթողիկոսին իրավիճակը ներկայացնելով, նրանից ակնկալում էին կտրուկ գործողություններ՝ կանխելու արևմտահայության զլխին կախված աղետը: Դեռևս 1912 թ. սեպտեմբերի 4-ին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին կաթողիկոսին գրում էր, որ անգամ թուրքական սահմանադրության¹ ընդունումից հետո հայերի նկատմամբ վերաբերմունքը ոչ մի էական փոփոխություն չի կրել: Նա Ադանայի հայերի 1909 թ. կոտորածը համարում էր դաժանությամբ լի նոր ժամանակաշրջանի սկիզբ: 1912 թ. սկսած Վանից, Ախթամարից, Բիթլիսից, Մուշից և այլ վայրերից հեռագրերը գուժում են նոր սպանությունների, կանանց ու անչափահասների առևանգման, բռնի իսլամացման և այլ հալածանքների մասին: Եվ այդ ամենը կատարվում էր թուրքական կառավարության հովանավորության, թողտվության կամ անտարբերության պայմաններում, ինչի նպատակն էր երկրի երեսից հայերին վերացնելը: Պատրիարքն ահազանգում էր, որ եթե հայերի պաշտպանության համար շտապ իրական միջոցներ չձեռնարկվեն, ապա բնակչությունը կոչնչանա, քանզի, ըստ լուրերի, նորից կոտորածի վտանգ կա: Պատրիարքը հույս էր հայտնում, որ կաթողիկոսը կանի հնարավոր ամեն ինչ՝ վիճակը բարելավելու համար²:

Գևորգ Սուրենյանցի դիմումները ռուսական պետական գործիչներին՝ կանխելու հայկական կոտորածները

Կաթողիկոսն, իր հերթին, փորձում էր վտանգի մասին տեղեկացնել մեծ տերությունների ղեկավարներին և ռուսական պետական գործիչներին:

¹ Երիտթուրքերը 1908 թ. հեղափոխությունից հետո վերահաստատեցին 1876 թ. սահմանադրությունը և հայտարարեցին դրա դրույթների կենսագործման մասին:

² Ալեքսանյան, Էվոյան, Սարգսյան 1965, N 1 (10), փաստ. 108, 85–86, Геноцид армян в Османской Империи 1982, док. 108, 228–229:

Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովին նրա 1915 թ. մարտի 14-ի պաշտոնագիրն արտահայտում էր հայ ժողովրդի հետազա ճակատագիրը պատերազմում ռուսական զորքի հաղթանակի հետ կապելու մասին միտքը³: Նա ապրիլի 7-ին Ս. Սազոնովին հայտնում էր Էրզրումի, Դերջանի, Ջեյթունի և մերձակա վայրերի անպաշտպան հայերի սպանդի, Բիթլիսում, Վանում, Մուշում, Ակնում ու Կիլիկիայում արյունահեղ բախումների ու տեղի հայ բնակչության տնտեսական քայքայման մասին: Կաթողիկոսը խնդրում էր այդ օրհասական պահին հովանավորել ու պաշտպանել հայ ժողովրդին, «...փրկել ԿԱՅՍԵՐԱԿԱՆ (ընդգծումը հեղինակին է – Հ.Ա.) կառավարությանից կախումաճ բոլոր միջոցներով անմեղորեն զոհող քրիստոնեաներին»⁴: Նա խնդրում էր նույնը հաղորդել ԱՄՆ-ում և Իտալիայում ռուսական դեսպաններին:

In 1930–1940s Soviet Armenians had some relations with Spanish communists who took refuge in the USSR. Some of them were stationed in the Caucasus, including José Díaz (1895–1942), who died in mysterious circumstances in Tbilisi⁴⁷.

Spanish communists and the Civil War heroes, especially Dolores Ibárruri, la Passionaria (1895–1989), were a source of inspiration for Soviet peoples, including Armenians. Arnold Aghababov’s film “Where Were You, Man of God?” (1992), which portrays life in a Soviet Armenian village in the 1930s, recalls how a couple wanted to name their newborn son José Díaz after the aforementioned Spanish revolutionary; in their everyday conversations people remember the Civil War.

The same moods also appear in the story “That Amazing Khaki Color” by Elda Grin. The hero, Marlen Yeghishevich, an Armenian from Tbilisi, says that there have been many phases in his life, one of which was Spain:

“When I was studying at the pilot school in Tbilisi, they were bombing Madrid,” he said. The radio announcer reported: *Itsvi Madridi, itsvi Madridis quchebi*, which means in Georgian: *Madrid is on fire, the streets of Madrid are on fire*. He said he had seen Dolores Ibárruri at the Tbilisi airport and asked her for an autograph as a souvenir. And Dolores hurriedly wrote one word on a slip of paper (while boarding the plane), ‘Cordialmente’, which means: cordially.

⁴⁵ Արուեստի լրատու, «Խորհրդային Հայաստան» (Երևան), 1 սեպտեմբերի, 1937:

⁴⁶ See **Շաղգամյան, Հարությունյան** 1936: **Բլազոյևա** 1938: **Օսիպով** 1938:

⁴⁷ **Сагомонян** 1998, 138.

“The fiery Dolores Ibárruri! Pasionaria!... Amor a primera vista! Love at first sight,” cried Marlen Yeghishevich.⁴⁸

In 1936, an author under the pseudonym Gugaruni published a poem, without any literary value, dedicated to Ibárruri in the Soviet Armenian sports press⁴⁹. In 1937, the poet Gegham Sarian (1902–1976) published the poetry book “Young Heroes of Spain,” while the writer Lucy Targul (1905–1955) published “To Spain,” a book in which she asked for help to the Spanish rebels with volunteer detachments.

Agassi Ayvazyan (1925–2007) combined the story of his Spanish studies and the 1988 earthquake in Armenia in his short story “The Spanish Language.” It begins with his memory of learning the language from his Spanish friend Saturnino in Tbilisi during the Second World War. Saturnino was the son of a Republican, who had left Spain and escaped to the Soviet Union and later returned to Spain⁵⁰.

Conclusion

Summarizing the material presented, we can state that the participation of Armenians in the Spanish Civil War (1936–1939) is a historical fact. At least one hundred Armenians from different countries (France, USA, Canada, Bulgaria, Turkey) participated in that war on a completely voluntary basis, forming part of the so-called International Brigades. These Armenians, who became stateless due to the xenophobia and genocidal policies of the Ottoman Empire, simply could not tolerate the outbreak of fascism in another part of the world and joined the struggle against fascism, sometimes at the cost of their lives. The names of Vahe-Azat Atamian and captain Vahan Chrkayan deserve special mention.

⁴⁸ Գրին 2004, 190:

⁴⁹ Գուգարունի 1936:

⁵⁰ Այվազյան 1990, 3-6:

As for the Soviet Armenians, several servicemen were officially sent by the USSR to support the Spanish communists. Armenian citizens, like all peoples of the Soviet Union, were obliged to express their support for the Spanish people through donations and raising awareness about Spain by organizing various events, publishing books about Spain, etc. The Spanish Civil War and its heroes became a source of inspiration for some Armenian writers.

BIBLIOGRAPHY

- Աղամյան Վ.-Ա.** 1988, Ողջ կյանքը պայքար է (հուշապատում), Երևան, «Հաստան», 1988, 126 էջ:
- Աթթուլյան Մ.** 1937, Առ Սաթուրնինո Րիգ, «Նոր գիր» (Նիւ Եորք), Ա տարի, թիւ 12, յունուար:
- Ահարոնեան Վ.** 1936, Ալքազարի եօթանասուն օրերը, «Հայրենիք» (Պոսթըն), 22–29 հոկտեմբերի:
- Այվազյան Ա.** 1990, Իսպաներեն լեզուն, «Նորք» (Երևան), թիվ 1:
- Անդրեասեան Ա.** 1937, Սպանական ազատամարտը, «Նոր գիր» (Նիւ Եորք), Ա տարի, թիւ 12, յունուար:
- Առնակ** 1936, Մատրիտ, «Հայրենիք» (Պոսթըն), 27 դեկտեմբերի:
- Ասատուր** 1936, Հերոս Ալքազարը, «Հայրենիք» (Պոսթըն), 2 հոկտեմբերի:
- Ասատուր** 1936–1, Օգնում ենք Իսպանիայի, «Հայրենիք» (Պոսթըն), 17 նոյեմբերի:
- «Արագ» (Պոսթըն) 1 յուլիսի, 1937:
- Բախչինեան Ա.** 2021, Իսպանիայի քաղաքացիական պատերազմը եւ հայերը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հատոր 41, Պէյրոս, էջ 83–94:
- Բլազոս Ա.** 1938, Իսպանիայի ժողովրդական տրիբունը: Դոկտրինա Իբարրուրի (Պասիոնարիա): Ռուս. թարգմ. Հ. Հայրապետյան: Երևան, Տպարան Պետհրատի, 37 էջ:
- Գուգարունի** 1936, Դոկտրինա Իբարրուրուն, «Կարմիր սպորտ» (Երևան), 31 դեկտեմբերի:
- Գրին Է.** 2004, Երազների տիեզերք, Երևան, «Մաշտոց», 245 էջ:
- Ընկեր Վահրամ Գեորգեան կը գրէ հերոսական Սպանիայէն, «Նոր ուղի» (Լոս Անճելըս), 11 յունիսի, 1937:

- Թուլայան Ե.** 2019, Կավոսշ-Նամէ, աշխ.՝ Հենրիկ եւ Արծուի Բախչինեաններ, Ստանպոլ, «Արաս», 598 էջ:
- Թորանեան Թ.** 2004, Երկիրներ եւ մարդեր: Վէպ բազմահարկիւր հերոսներով, Հալէպ, ա. հ., 390 էջ:
- Իսպանական երաժշտությանը նվիրված երեկո, «Խորհրդային արվեստ» (Երևան), 1 հունվարի, 1937:
- Իսպանիայի պրոլետարիատի համար, «Խորհրդային Հայաստան» (Երևան), 10 հունվարի, 1935:
- «Խորհրդային Հայաստան» (Երևան), 26 փետրվարի, 1925:
- «Խորհրդային Հայաստան» (Երևան), 12 հոկտեմբերի, 1936:
- Կարսիա Լորգա Ֆ.** 1937, Պարերգ լուսնային, «Նոր գիր» (Նիւ Եորք), Ա տարի, թիւ 12, Յունուար:
- Կելին Ֆ.** 1936, Իսպանական թատրոն, «Խորհրդային արվեստ» (Երևան), 1 նոյեմբերի:
- Կէօրկիզեան Վեր. Ա.Ա.** 1947, Ֆրանքոյի Սպանիան եւ աշխարհի խաղաղութիւնը, «Լրաբեր», Նիւ Եորք, 18, 21, 28 յունուարի:
- Կը պատասխանեն Սպանիայի հայ կամաւորներու դիմումին, ի նշան երախտագիտութեան, «Լրաբեր» (Նիւ Եորք), 13 յուլիսի, 1939:
- Հայ կամաւորներ... Սպանիոյ մէջ, «Արագ» (Պուրթէ), 14 մայիսի, 1937:
- Ճեպէճեան Ռ.** 1999, Ինքնակենսագրութիւն. յուշեր եւ գործունէութիւններ, Հալէպ, «Վիոլէտ Ճեպէճեան Գրադարան», 518 էջ:
- Մ.Դ., Կատալոնիայի հերոսները, «Խորհրդային արվեստ» (Երևան), 1 նոյեմբերի, 1936:
- Մըզըրեան Ջ.** 1979, Սփիւռքահայ քաղաքական խմորումներ համաշխարհային Բ պատերազմի նախօրեակին (1933–1939 թթ.), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուս, հատոր Է., էջ 85–110:
- Նիկոլին Լ.** 1936, Էլ Պրադօ Թանգարանը, «Խորհրդային արվեստ» (Երևան), 1 նոյեմբերի:
- Նուրիկեան Բ.** 1937, Սպանիա, «Նոր գիր» (Նիւ Եորք), Ա տարի, թիւ 12, յունուար:
- Շաղգամյան Գ., Հարությունյան Գ.** (խմբ.) 1936, Հերոսական Իսպանիա: Հողվածների և նյութերի ժողովածու, Երևան:
- Շահինեան Կ.,** Քոնֆերանս Սպանիո (sic) օգնելու, «Լրաբեր» (Նիւ Եորք), 7 մայիս, 1940:
- Սիմոնեան Հ.** 1968, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում (Երևան), «Հայաստան», 673 էջ:

Սպանիոյ հայ կամաւորները, «Արագ» (Պուքրէշ), 25 յուլիսի, 1937:

Օգնութիւն Իսպանիայի, «Արագ» (Պուքրէշ), 5 նոյեմբերի, 1936:

Օգնութիւն Իսպանիայի մարտնչողներուն, «Յուսաբեր» (Գահիրէ), 26 յունուարի, 1935:

Օսիպով Ս. 1938, Իսպանական պրոլետարիատի առաջնորդը: Ռուս. թարգմ.՝ Հ. Հայրապետյան: Երևան, Տպարան Պետհրատի, 13 էջ:

Օտար զինուորներ Սպանիոյ մէջ, «Արաքս» (Ալեքսանդրիա), 10 ապրիլ, 1937:

Stephens D.P. 2000, A memoir of the Spanish Civil War: an Armenian-Canadian in the Lincoln Battalion. Canadian Committee on Labour History, 2000, 119 p.

Сагомонян А.А. 1998, Попытки развертывания партизанского движения в Испании (1944–1948 гг.). «Вопросы истории» (Москва), но 6.

Севунц А. 2020, Когда шутит Хронос. Ереван, «Коллаж».

Արծվի Հ. Բախչինյան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ք.գ.թ., Քաղաքացիական պատերազմը Իսպանիայում և հայերը

Ամփոփում

Իսպանիայի քաղաքացիական պատերազմին (1936–1939) հայերի մասնակցության պատմությունը գրեթէ չի ուսումնասիրվել: Այդ պատերազմին կամավոր մասնակցել է առնվազն հարյուր հայ տարբեր երկրներից (Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա, Բուլղարիա, Թուրքիա և այլն)՝ միանալով Ինտերնացիոնալ բրիգադներին: Նրանք, լինելով հիմնականում նախկին թուրքահպատակներ, որոնք զաղթական էին դարձել օսմանյան իշխանությունների պալատյացության և ցեղասպան քաղաքականության պատճառով, չէին կարող համակերպվել աշխարհի մեկ այլ մասում ֆաշիզմի բռնկման հետ և, ի թիվս այլ ազգությունների, միացել էին դրա դեմ պայքարին, երբեմն՝ իրենց կյանքի գնով: Հատկապես հիշարժան են Վահե-Ազատ Ադամյանը և կապիտան Վահան Չրքայանը:

Բացի այդ, մի քանի հայազգի ռազմական գործիչներ ԽՍՀՄ կառավարության կողմից պաշտոնապես ուղարկվել էին Իսպանիա՝ սատարելու տեղի կոմունիստներին: Խորհրդային Հայաստանի քաղաքացիները ևս ստիպված էին նվիրատվություններով իրենց համակրանքը հայտնել իսպանացիներին, նաև կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ, հրատարակվում Իսպանիայի վերաբերյալ գրքեր և այլն: Իսպանիայի քաղաքացիական պատերազմը և նրա հերոսները ոգեշնչման աղբյուր են դարձել մի քանի հայ գրողների համար:

Բանալի բաներ՝ Իսպանիայի քաղաքացիական պատերազմ (1936–1939 թթ.), կամավորներ, սփյուռքահայեր, Ինտերնացիոնալ բրիգադներ, Խորհրդային Հայաստանի աջակցությունը, Վահե-Ազատ Ադամյան, իսպանական թեման խորհրդահայ գրականության մեջ:

Арциви Г. Бахчинян, *Институт истории НАН РА,*
к.ф.н., *Гражданская война в Испании и армяне*

Резюме

История участия армян в гражданской войне в Испании (1936–1939) не была достаточно изучена. Не менее ста армян из разных стран (Франция, США, Канада, Болгария, Турция) участвовали в этой войне на совершенно добровольной основе в составе специальных военных подразделений, известных под названием «Интернациональные бригады». Эти армяне, преимущественно родом из находящейся в составе Османской империи исторической Армении, ставшие беженцами из-за ксенофобии и геноцидной политики турецких властей, не могли смириться со вспышкой фашизма в другой части света и присоединились к борьбе против фашизма, иногда ценой собственной жизни.

Имена Ваге-Азата Атамяна и капитана Ваана Чркаяна заслуживают особого упоминания.


Кроме этого несколько военных деятелей-армян были официально направлены СССР в поддержку испанских коммунистов. Граждане Советской Армении были обязаны выражать свою симпатию испанскому народу путем пожертвований, а также организации различных мероприятий, публикаций книг об Испании и т.д. Гражданская война в Испании и ее герои стали источником вдохновения для некоторых армянских писателей.

Ключевые слова: Гражданская война в Испании (1936–1939 гг.), добровольцы, армяне диаспоры, Интернациональные бригады, поддержка Советской Армении, Ваге-Азат Атамян, испанская тема в советско-армянской литературе.

ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

gugvard57@gmail.com

 0009-0002-9858-5926

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-134

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1946–1960)*

Բանալի բառեր՝ Հայաստան, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, միջին մասնագիտական, բուհ, տեխնիկում, վերակառուցում:

Ներածություն

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ կուսակցական-պետական ղեկավարությունը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց ժողովրդական տնտեսության վերակառուցման և զարգացման ուղղությամբ: Նոր պայմաններում, երբ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում էր արտադրության նոր ճյուղերի կազմակերպմանն ու զարգացմանը, անհրաժեշտ էր բարձրացնել բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ կադրերի որակը ու նրանցով համալրել տնտեսության տարբեր բնագավառներ:

1920–1930-ական թթ. ստեղծված բարձրագույն և միջին մասնագիտական կրթական համակարգերը կարևոր դեր էին խաղացել հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ երկրի ռազմական արդյունաբերությանը տալով անհրաժեշտ կադրեր: Խորհրդային ղեկավարությունը 1946 թ. անհրաժեշտ համարեց ստեղծել Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության մի-

* Ներկայացվել է 07.IV.2023 թ., գրախոսվել է 28.IV.2023 թ. և 15.V.2023 թ., ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

նիստրություն, որի վրա դրվեց համապատասխան կրթական հաստատությունների ուսումնական գործընթացի կառավարման, ուսումնամեթոդական պլանների ու ծրագրերի կազմման և այլ գերատեսչությունների հետ աշխատանքների համակարգման պատասխանատվությունը:

Կուսակցական-պետական ղեկավարությունը չորրորդ և հինգերորդ հնգամյակների ընթացքում (1946–1955) ընդունեց մի քանի կարևոր որոշումներ, որոնք նպատակաուղղված էին վերակառուցելու և բարելավելու այդ ոլորտի աշխատանքները:

Բանն այն էր, որ 1920-ական թթ. վերջից սկսած՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացվել էր կրթական հաստատությունների քանական աճին՝ ձգտելով արտադրական հիմնարկները և գյուղատնտեսությունն ապահովել մասնագետ կադրերով: Մեծ հայրենականի տարիներին բազմաթիվ մասնագետներ և սովորողներ զինվորագրվեցին հայրենիքի պաշտպանությանը: Նրանցից շատերը զոհվել էին, իսկ մի մասն էլ, մնալով թիկունքում, իր ներդրումն էր ունեցել ռազմական արդյունաբերության զարգացման և երկրի պաշտպանունակության ամրապնդման գործում:

Հետպատերազմյան տարիներին ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարության ուշադրությունը կենտրոնացված էր խաղաղ պայմաններին համապատասխան՝ ժողովրդական տնտեսության վերակառուցմանը: Հանրապետության ղեկավարությունը կարևոր ուշադրություն էր հատկացնում ծանր արդյունաբերության զարգացմանը, նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցմանը և որակյալ բարձրագույն ու միջին մասնագիտական կրթությամբ կադրերով դրանց համալրմանը: Դա հատկապես վերաբերում էր ռազմական արդյունաբերությանը: Պատերազմի հաղթական ավարտից հետո Գերմանիայից մեծ թվով գործարանների սարքավորումներ, իրենց տեխնիկական փաստաթղթերով, տեղափոխվեցին Խորհրդային Միություն, այդ թվում՝ Խորհրդային Հա-

յաստան: Մեր հանրապետություն դրանց տեղափոխման գործում մեծ է Երևանի ինդուստրիալ (արդյունաբերական) տեխնիկումի նախկին սան Գուրգեն Չոլախյանի ներդրումը: Նա այդ ժամանակ Հայաստանի մշտական ներկայացուցիչն էր միութենական կառավարությունում: Գ. Չոլախյանի ղեկավարած հանձնաժողովը մեծ աշխատանք կատարեց Գերմանիայում: Հայաստան տեղափոխվեց 5 ձեռնարկության 1092 միավոր սարքավորում¹:

Հանրապետությունում այդ ժամանակաշրջանում շարք մտան նոր՝ էլեկտրամեքենաշինական, էլեկտրասարքավորումների, քիմիական և թեթև արդյունաբերական գործարաններ: Նախկինում գործող մի քանի գործարաններ, որոնք հիմնականում արտադրանք էին տալիս ռազմական արդյունաբերության համար, վերակառուցվեցին խաղաղ պայմաններին համապատասխան: Դրանցում ստեղծվեցին նոր արտադրամասեր: Միայն հետպատերազմյան երկու հնգամյակների ընթացքում շարք մտան Երևանի էլեկտրամեքենաշինական, կոմպրեսորային, կաբելի, ավտոդողերի, հիդրոտուրբինային գործարանները, Քանաքեռի այլումինի և Կիրովականի (Վանաձոր) ազոտի գործարանները: Կառուցվեցին նոր հիդրոէլեկտրակայաններ՝ Սևանի, Սևան-Հրազդան կասկադը և այլն²:

Տեխնիկումների վերակառուցումը հեղապտերազմյան տարիներին

Չորրորդ և հինգերորդ հնգամյակների ընթացքում երևանեկան մի շարք դժվարություններ՝ կապված կադրերի հետ: ՀԿ(Բ)Կ Կենտկոմը մի քանի անգամ քննարկեց արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կադրերի պատրաստման ու որակավորման հարցը: Միայն չորրորդ հնգամյակի ընթացքում՝ 1946–1950 թթ.,

¹ **Խաչատրյան** 2015, 147–150:

² **Григорьянц** 1966, 236.

ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար անհատական-բրիգադային և այլ մասնագիտական դասընթացների ուսուցմամբ պատրաստվեց 59,6 հազար բանվոր-ծառայող, այդ թվում 51,8 հազար բանվոր, մոտ 7,8 հազար վարպետ, հաշվապահներ և այլ մասնագիտության աշխատողներ³: Եթե բանվորների տեխնիկական գիտելիքները հնարավոր էր բարձրացնել տարբեր մասնագիտական-տեխնիկական ուսումնարանների, դասընթացների և բրիգադային ուսուցման միջոցով, ապա բուհական և միջին մասնագիտական որակյալ կադրերի պատրաստման հարցն առավել բարդ էր: Հանրապետությունում 1950–1959 թթ. ընթացքում գործել են՝

Ու. տարի	1950/51	1954/55	1955/56	1956/57	1957/58	1958/59
Բուհական հաստատություններ	15	13	12	12	11	11
Ուսանողների թիվը	15,1	19,2	19,4	20,2	20,0	20,1
Միջին մասնագիտ. կրթական հաստատություններ	44	45	45	44	39	37
Սովորողների թիվը	10,3	15,7	17,0	16,4	14,7	14,0

Բերված թվերը ցույց են տալիս, որ հանրապետությունում բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պատրաստումն ընթացել է համաչափ⁴: Այնինչ, անհրաժեշտ էր, որ մեկ բուհ ավարտողին արտադրությունում միջին հաշվով ընկներ մի քանի միջին որակավորման մասնագետ: Արդյունաբերական ձեռ-

³ Հարությունյան 1982, 130–131:

⁴ Народное хозяйство Армянской ССР 1957, 149. Экономика и культура Армении к 50-летию Великого Октября 1967, 336–337. Հուրիխանյան 1969, 239:

նարկություններին հատկապես անհրաժեշտ էին միջին որակավորման մասնագետներ, որոնք պետք է կազմակերպեին աշխատանքները ստորին և միջին օղակների հետ:

1950-ական թթ. կեսերին տեխնիկումներում սովորողների քանակը փոփոխական էր, քանի որ տեղի էր ունենում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միավորում կամ վերակառուցում:

Գիտատեխնիկական առաջընթացը պահանջում էր նոր մասնագիտությունների գծով որակյալ կադրերի պատրաստում: Մի քանի միջին մասնագիտական կրթական հաստատություններ ընդլայնեցին իրենց գործունեությունը: Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումում կազմակերպվեցին նոր բաժիններ՝ «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ», «Արդյունաբերական ձեռնարկությունների էլեկտրասարքավորումներ» և այլն: 1952 թ. կազմավորվեցին տեխնիկումի Հայէլեկտրամեքենաշինական և Հայէներգո գործարաններին կից մասնաճյուղերը⁵: 1945 թ. հիմնադրվեց Երևանի մեքենաշինական տեխնիկումը, որը միջին մասնագիտական կադրերով էր ապահովում հանրապետության մեքենաշինական ձեռնարկությունները:

Երևանի թեթև արդյունաբերության տեխնիկումի հիմքի վրա կազմակերպվում է նոր տեխնիկում՝ Լենինականի (Գյումրի) թեթև արդյունաբերության տեխնիկումը (1954 թ.): 1947 թ. բացվում են նաև Երևանի ֆինանսական-տնտեսագիտական, առևտրի, ակումբա-գրադարանային տեխնիկումները, բժշկական ու մանկավարժական ուսումնարանները և այլն: Չորրորդ և հինգերորդ հնգամյակների ընթացքում Երևանի շինարարական տեխնիկումի մասնաճյուղեր են բացվում Կիրովականում, Լենինականում ու Քաջարանում⁶:

⁵ Հուրիխանյան 1975, 97:

⁶ Հուրիխանյան 1975, 10:

Մի շարք դժվարություններ կային կապված բուհերի և միջին մասնագիտական կրթական հաստատությունների շրջանավարտների նշանակումների հետ: Լուսավորության մինիստրությունը մի քանի անգամ քննարկում է հանրապետության տարբեր շրջաններում ուղեգրերով տեղաբաշխված մասնագետների հարցը: Միայն 1946 թ. հոկտեմբերին նշանակված մասնագետների տեղաբաշխումը կատարվել էր ընդամենը 60%-ով⁷: Դա վերաբերվում էր նաև մանկավարժական ուսումնարանները և դասընթացներն ավարտած մասնագետների նշանակմանը: Բուհերի կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների մի մասը տարբեր պատճառներով մնում էր քաղաքում՝ խուսափելով աշխատանքի մեկնել շրջաններ:

Հանրապետության միջին մասնագիտական կրթական համակարգը գտնվում էր տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ: Տեխնիկումների զգալի մասը հանրապետական, իսկ մյուս մասը՝ միութենական մինիստրությունների ենթակայության ներքո էր: Միայն մանկավարժական թեքումով ուսումնարաններն էին, որ ուղղակի ենթարկվում էին լուսավորության մինիստրությանը: Դա լուրջ դժվարություններ էր ստեղծում ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգված աշխատանքների կազմակերպման գործում:

Բերենք մի քանի օրինակ: Հայաստանի կոոպերատիվ տեխնիկումը ֆինանսավորվում էր Հայսպառմիության մշակութային ֆոնդից: Այդ տեխնիկումի ֆինանսավորումը, մանկավարժների աշխատավարձերը և սովորողների կրթաթոշակները տրվում էին բավականին ուշացումով⁸: ԽՍՀՄ լեռնամետալուրգիական մինիստրությանը պատկանող Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումի մասնաշենքի և հանրակացարանի կառուցումը ձգձգվում էր տարի-

⁷ ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 213, թ. 1-2:

⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 27 գ. 111, թ. 13:

ներ շարունակ⁹: 1940-ական թթ. վերջին հանրապետության ֆինանսների մինիստրության ենթակայության ներքո էին գործում Երևանի ֆինանսական տեխնիկումը և Համամիութենական հեռակա ֆինանսական-վարկային տեխնիկումի Երևանի ուսումնական մասնաճյուղը: Մինիստրության կոլեգիան մի քանի անգամ քննարկում է ֆինանսական տեխնիկումի հարցը: Պարզվում է, որ «տեխնիկումի տնօրինությունը թույլ է տվել ընդունելության վերաբերյալ սահմանված հրահանգի կոպիտ խախտում: 1950–1951 ուս. տարում տեխնիկում ընդունված 60 հոգուց 25%-ը մեկ առարկայից կտրվել են, 7 հոգի 7-ամյա դպրոցի ավարտական վկայականի փոխարեն ներկայացրել են տեղեկանքներ: Մի շարք շրջֆինբաժինների վարիչներ (Աղին, Ղուկասյան, Ախուրյան, Բասարգեչար (Վարդենիս), Վեդի, Ազիզբեկով (Վայք), Սևան) միանգամայն անբավարար աշխատանք էին կազմակերպել իրենց շրջանի միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ ավարտած երիտասարդությանը ֆինանսական տեխնիկումում ընդգրկելու ուղղությամբ, որի հետևանքով նշված շրջաններից և ոչ մի հոգի 1950 թ. չի գործուղվել այդ տեխնիկում սովորելու, չնայած որ այդ ֆինբաժինները մեծ կարիք ունեին միջին որակի ֆինանսական մասնագետ կադրերի»¹⁰: Մինիստրությունը միջոցառումների մեծ ծրագիր է մշակում, որի համաձայն պետք է բարելավեր ուսումնական գործընթացը տեխնիկումում¹¹:

Առավել բարդ էր մասնագիտական դասագրքերի հարցը: Ինդուստրիալ տեխնիկումի տնօրեն Հովակիմյանը 1951 թ. հունիսին դիմում է ՀԿԿ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Ա. Մնացականյանին, նշելով, որ «Հայկական ԽՍՀ-ում գործող մոտ 50 տեխնիկումների ուսանողությունը հնարավորություն չունի օգտվելու Ն.Պ. Տարասովի «Բարձրագույն մաթեմատի-

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 207, թ. 35

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1, ց. 31, գ. 136, թ. 34–36:

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 31, գ. 136, թ. 38–39:

կայի դասընթաց» բուհերի և տեխնիկումների համար դասագրք-քից»¹²: Նա խնդրում է այդ դասագիրքը ռուսերենից թարգմանել հայերեն և մտցնել թեմատիկ պլանի մեջ: Դասագրքերի թարգմանման և հրատարակման գործում նախաձեռնություն են հանդես բերում նաև տարբեր գերատեսչություններ: ՀԽՍՀ ֆինանսների մինիստրության կոլեգիայի որոշման համաձայն՝ ֆինանսական տեխնիկումի տնօրեն Չոբանյանին հանձնարարվել էր ռուսերենից հայերեն թարգմանել և հրատարակության նախապատրաստել Ա. Շավրինի «ԽՍՀՄ պետբյուջե» ուսումնական ձեռնարկը՝ նպատակ ունենալով ֆինանսական տեխնիկումում, ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում և այլ ուսումնական հաստատություններում բարձրացնել ուսումնական գործընթացի որակը¹³:

Մեր հանրապետությունում գյուղատնտեսության բնագավառում կադրերի պատրաստման գործում կային զգալի դժվարություններ: Այս ոլորտի միջին մասնագիտական և միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունները գտնվում էին գյուղատնտեսության մինիստրության իրավասության ներքո: Դրանց գործունեության արդյունավետությունը բավականին ցածր էր, նյութատեխնիկական բազան աղքատիկ, բավարար չէր մասնագետների պատրաստման որակը, մասնագետների տեղաբաշխումը շատ հաճախ կատարվում էր ոչ մասնագիտական կողմնորոշմամբ:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1953 թ. սեպտեմբերի որոշման համաձայն՝ գյուղատնտեսական թեքումով միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունները հանձնվում են բարձրագույն և միջին մասնագիտական կրթության մինիստրության կազմում գործող մասնագիտական-տեխնիկական կրթության պետական կոմիտեին: Գյուղատնտեսության մինիստրության ենթակայության միջին մասնագիտական կրթական հաս-

¹² ՀԱԱ, ֆ. 1, ց. 31, գ. 180, թ. 95:

¹³ ՏԵՄ ՀԱԱ, ֆ. 1, ց. 31, գ. 136, թ. 16:

տատությունները պետք է ակտիվորեն համագործակցեին կրթական այդ գերատեսչության հետ¹⁴:

Հանրապետության կուսակցական-պետական ղեկավարությունը վերոհիշյալ որոշման հիման վրա վերակառուցում է գյուղատնտեսական տեխնիկումների աշխատանքը: 1954 թ. հունիսին ՀԿԿ Կենտկոմը որոշում է ընդունում գյուղատնտեսական տեխնիկումներում կադրերի պատրաստման վիճակը բարելավելու մասին: Դրա համաձայն՝ Երևանի, Կիրովականի և Հոկտեմբերյանի (Արմավիր) գյուղատնտեսական տեխնիկումներում ստեղծվում են պտղաբուծական, հողագործական, մեղվաբուծական, խաղողագործական և պտղաբանջարաբուծական բաժիններ: Երևանի գյուղատնտեսական տեխնիկումին կից բացվում են շինարարական և հաշվային բաժիններ¹⁵:

Արդեն 1950-ական թթ. վերջին հանրապետությունում գործում էր 10 գյուղատնտեսական տեխնիկում, որտեղ միջին որակավորման մասնագետներ էին պատրաստում 13 մասնագիտությունների գծով՝ կրտսեր գյուղատնտեսներ և անասնաբուժակներ, հողաշինարարներ, մեխանիկներ և այլն: Դրանցում սովորողների թիվը հասել էր 3873-ի, որից 1476-ն ավարտել էր հանրակրթական միջնակարգ դպրոցներ¹⁶: Սակայն այս բնագավառի տեխնիկումների մի մասի նյութատեխնիկական բազան դեռևս աղքատիկ էր: Դրանք զուրկ էին մասնագիտական լաբորատորիաներից, փորձարարական հողամասերից ու անասնագոմերից և ապահոված չէին անհրաժեշտ մասնագետ դասախոսներով:

Միայն Երևանի, Կիրովականի ու Լենինականի գյուղատնտեսական տեխնիկումները և Բայազետի (Գավառ) ու Ստեփանավանի անասնաբուծական-անասնաբուժական տեխնիկումներն էին ապա-

¹⁴ Միքայելյան 1978, 106:

¹⁵ «Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր» 1963, 648:

հոված անհրաժեշտ որակյալ մասնագետ մանկավարժներով և որոշ չափով բավարար նյութատեխնիկական բազայով¹⁷:

ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1954 թ. ընդունում է մի կարևոր որոշում, որով քաղաքներում և գյուղական վայրերում գործող միջնակարգ դպրոցներում (8, 9, 10-րդ դասարաններ), միջնակարգ-մասնագիտական ուսումնարաններում, տեխնիկումներում, մանկավարժական ուսումնարաններում և բուհական հաստատություններում վերացվում էր ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1940 թ. հոկտեմբերի որոշմամբ ընդունված ուսման վարձերի գանձումը: Դա նպատակ ուներ առավել մեծ թվով երիտասարդների հնարավորություն տալ սովորելու ուսումնական հաստատություններում:

ԽՍՀՄ սահմանադրության մեջ 1956 թ. կատարվեց համապատասխան փոփոխություն, որով ամրագրվեց կրթական հաստատություններում անվճար ուսուցում ստանալու իրավունքը: Սահմանադրության 121 հոդվածում նշվում էր. «ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն կրթության իրավունք: Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր յոթամյա կրթությանը, միջնակարգ կրթության լայն զարգացմամբ, ինչպես միջնակարգ, այնպես էլ բարձրագույն կրթության բոլոր տեսակների ձրիությամբ (անվճար), բարձրագույն դպրոցում առաջադեմ սովորողներին տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, սովխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում, կոլտնտեսություններում աշխատավորների համար արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ձրի ուսուցում կազմակերպելով»¹⁸: Այս օրենքը կարևոր դեր խաղաց կրթական համակարգի զարգացման գործում: Զգալիորեն ավելացավ միջին մասնագիտական կրթական հաստատություններ դիմող յոթամյա և միջնակարգ

¹⁶ Միքայելյան 1958, 51:

¹⁷ Միքայելյան 1958, 50–59:

¹⁸ Սովետական մանկավարժ 1956, 1:

կրթություն ունեցող երիտասարդների թիվը: Սակայն որակական առումով մասնագետների պատրաստումը դեռևս բավականին հետ էր մնում:

1956 թ. ԽՄԿԿ XX համագումարում դրվեց նաև ԽՍՀՄ-ում կրթական համակարգի արմատական վերակառուցման անհրաժեշտությունը: Այդ հարցը քննարկվեց նաև ՀԿԿ XIX համագումարում: Արձանագրվեց, որ մեր հանրապետությունում «Ժողովրդական կրթության լուրջ թերություններից մեկը դպրոցների ուսումնանյութական բազայի անբավարար վիճակն է: Բավական է նշել, որ ավելի քան 130 միջնակարգ դպրոցներ դեռևս չունեն ուսումնական արհեստանոցներ, իսկ 212 դպրոցներ՝ ֆիզիկայի և քիմիայի լրիվ կահավորված լաբորատորիաներ:

Առանձնապես վատ է դպրոցական շենքերի վիճակը՝ 173 միջնակարգ դպրոցներ դեռևս չունեն տիպային շենքեր, գրեթե բոլոր դպրոցներում պարապմունքերը տեղի են ունենում երկու հերթով, իսկ որոշ դպրոցներում էլ՝ երեք հերթով: Ինքնին պարզ է, որ այդպիսի դրությունը բացասաբար է անրադառնում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի վրա»¹⁹: Անհրաժեշտ էր բարելավել նաև դասագրքերի, ուսումնամեթոդական ծրագրերի և պլանների որակը, բարձրացնել մանկավարժական կադրերի մակարդակը: Բերված փաստերը վկայում են, որ դպրոցական համակարգը որակական առումով բավականին հետ էր մնում, ինչը զգալիորեն ազդում էր միջին մասնագիտական կրթական հաստատությունների գործունեության վրա: Քանի որ կրթության բնագավառում խնդիրները փոխկապակցված էին, դրանց լուծման համար պահանջվում էր համակարգային վերակառուցում:

1958 թ. հոկտեմբերին ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչովը կուսակցության Կենտկոմի նախագահությանը հասցեագրած «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և երկրում

¹⁹ Սովետական մանկավարժ 1958, 2:

ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» նամակում առաջարկեց կազմակերպել կրթական հարցերի վերաբերյալ համաժողովրդական քննարկում: Նամակում նշվում էր, որ կրթական համակարգում կան լուրջ թերություններ, որոնք ազդում են երկրի գիտատեխնիկական առաջընթացի վրա: Դրա հիման վրա՝ ԽՄԿԿ Կենտկոմը կազմեց թեզիսներ, որոնք նույն թվականի նոյեմբերին դրվեցին համաժողովրդական քննարկման²⁰:

Մեր հանրապետությունում այն քննարկվեց տարբեր գերատեսչությունների, նախ և առաջ կրթական հաստատությունների կոլեկտիվների կողմից: Միայն մանկավարժական կոլեկտիվների կողմից ստացվել էին հարյուրավոր առաջարկություններ: 1958 թ. նոյեմբերի 21-ին հանրապետական և Երևանի քաղաքային կուսակցական ակտիվը քննարկեց ու հավանություն տվեց թեզիսներին²¹: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում 1959 թ. ապրիլի 16-ին ընդունվեց «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ՀԽՍՀ-ում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքը:

Նրա երրորդ բաժինը նվիրված էր միջնակարգ մասնագիտական կրթությանը: Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստումը պետք է տեղի ունենար 8-ամյա և 11-ամյա հանրակրթական դպրոցի բազայի վրա: Երեկոյան և հեռակա ուսուցումն ընդլայնվելու էր, որպեսզի երիտասարդները, արտադրությունից չկտրված, բարձրացնեին իրենց որակավորումը: Բարձրորակ մասնագետներ պատրաստելու նպատակով նախատեսվում էր տեխնիկումների նյութատեխնիկական բազան ընդլայնել: Նախատեսվում էր ստեղծել ժամանակակից ուսումնական կաբինետներ և լաբորատորիաներ, արդյունաբերական տեխնիկումներին կից կազմակերպել արտադրամասեր ու

²⁰ Սովետական մանկավարժ 1958, 11:

²¹ «Սովետական Հայաստան» 1958, նոյեմբերի 22, նո. 271:

արհեստանոցներ, իսկ գյուղատնտեսական տեխնիկումներին կից՝ խոշոր տնտեսություններ: Կարևոր էր համարվում սովորողների արտադրական պրակտիկայի կազմակերպումը գործարաններում և այլ հիմնարկներում²²: Հանրակրթական դպրոցների և միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունների վերակառուցումը սկսվելու էր 1959–1960 ուս. տարվանից և ավարտվելու չորս տարվա ընթացքում: Փաստորեն, կրթական համակարգի արմատական վերակառուցումը պետք է տեղի ունենար 1959–1965 թթ. ընթացքում՝ յոթամյա պլանի իրականացման ժամանակահատվածում: Այսպիսով, առաջարկվում էր կրթական համակարգի թռիչքային զարգացման պլան, որի իրագործումը, ներքին և արտաքին անբարենպաստ պայմանների հետևանքով, իրատեսական չէր:

ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը ընդունեց մի շարք որոշումներ, որոնցով բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ղեկավարման մեջ կառուցվածքային փոփոխություններ կատարվեցին: 1959 թ. հուլիսին ընդունվեց «ԽՍՀՄ բարձրագույն և միջին մասնագիտական հաստատությունների ղեկավարման վերակառուցման մասին» որոշումը, որի համաձայն՝ միութենական բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատություններն անցնում էին հանրապետական ենթակայության ներքո²³: Նույն տարվա օգոստոսին ընդունված «Ուսուցման ձևերի և ժամկետների, մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսման որակի բարձրացման մասին» որոշմամբ²⁴, պետք է վերակառուցվեին ուսումնական պլաններն ու ծրագրերը: Այս բնագավառում աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ էր համարվում հանրապետություններում ստեղծել համապատասխան մինիստրություններ և

²² Տե՛ս Սովետական մանկավարժ 1959, 12–13:

²³ Среднее специальное образование в СССР 1962, 20.

²⁴ Среднее специальное образование 1963, 40.

կոմիտեներ: Հիմք ընդունելով այս որոշումը՝ 1959 թ. օգոստոսին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից ստեղծվեց Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտե, որի վրա էր դրվում բուհերի ու միջին մասնագիտական կրթական հաստատությունների աշխատանքների պլանավորումը, կառավարումը և համակարգումը:

Եզրակացություններ

Այսպիսով, մեր հանրապետությունում հետպատերազմյան տարիներին հիմնականում ավարտվեց միջին մասնագիտական կրթական համակարգի վերակառուցումը: Հանրապետությունում զգալիորեն աճել էր միջին մասնագիտական կրթական հաստատություններում սովորողների թիվը: Միջին մասնագիտական կրթական հաստատությունների կողմից ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտների համար միայն 1959 թ. պատրաստվել էր շուրջ 5000 մասնագետ²⁵: Քանակական առումով միջին մասնագետների պատրաստումը տվյալ ժամանակաշրջանի համար կարելի էր համարել բավարար, սակայն հանրապետության արդյունաբերության արագ աճը և գյուղատնտեսության վերակառուցումը պահանջում էին որակական փոփոխություններ կատարել միջին մասնագիտական կրթական հաստատությունների աշխատանքում, բարձրացնել նրանց արդյունավետությունը, ստեղծել նոր որակի կրթական հաստատություններ: Այդ ուղղությամբ կուսակցական-պետական ղեկավարության ձեռնարկած քայլերը դրական արդյունքներ տվեցին: Սակայն անհրաժեշտ էր կրթական որակական համակարգային փոփոխություններ կատարել՝ ապահովելով հանրակրթական դրպրոց - միջին մասնագիտական կրթական հաստատություն - բուհ

²⁵ Հուրիխանյան 1969, 148:

կապը, որը կնպաստեր ժողովրդական տնտեսության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Կ. 2015, Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալրի համակարգում, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 344 էջ
ԽՍՀՄ Կառավարության որոշումների և կարգադրությունների ժողովածու, Մոսկվա, (1938–1944), 1940, նո. 637, էջ 993–994:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 26, գ. 207, թ. 35, գ. 213, թ. 1–2:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 111, թ. 13:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 31, գ. 136, թթ. 16, 34–36, 38–39, գ. 180, թ. 95:

Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր 1963, Երևան, 648 էջ:

Հարությունյան Հ. 1982, Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 157 էջ:

ՀԽՍՀ օրենքների 1961, ԳԽ նախագահության հրամանագրերի և ՀԽՍՀ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու. 1957, Երևան, էջ 20–41:

Հուրիխանյան Փ. 1975, Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության զարգացումը Սովետական Հայաստանում 50 տարում, Երևան, Միտք հրատ., 243 էջ:

Հուրիխանյան Փ. 1969, Միջնակարգ մասնագիտական կրթությունը Սովետական Հայաստանում, Երևան, Երևանի համալսարանի հրատ. էջ 148, 239:

Միքայելյան Ա. 1978, Սովետական Հայաստանի պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոցը, Երևան, Լույս հրատ, 167 էջ:

Միքայելյան Ա. 1958, Գյուղատնտեսական կրթության զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, Հայպետուսմանկիրատ, 93 էջ:

ՍՄԿՊ-ն համագումարների 1955, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, Երևան, Հայաստանի պետական հրատ., հ. 3, 875 էջ:

«Սովետական Հայաստան» 1958, նոյեմբերի 22, նո. 271:

«Սովետական մանկավարժ» 1956, հ. 10, Երևան, էջ 1, հ. 2, 1958, էջ 2: հ. 11, 1958, էջ 1, հ. 5, 1959, էջ 12–13:

- Григорьянц А.** 1966, Формирование и развитие технического интеллигенции Армении (1920–1965), Ереван, АН Арм. ССР, 359 с.
- Среднее специальное образование (техникумы, училища, школы) 1963, Москва, Росвузиздат, 520 с.
- Среднее специальное образование в СССР 1962, Москва, Высшая школа, 266 с.

Гурген В. Варданян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, Реконструкция учреждений среднего профессионального образования в Советской Армении (1946–1960)

Резюме

Научно-технический прогресс предъявлял возрастающие требования к системе образования в целом и к среднему специальному образованию в частности. В связи с этим в послевоенные годы начинается реконструкция среднего специального образования в Советской Армении. Партийно-государственным руководством Армении был принят ряд важных решений по реконструкции техникумов, которые должны были способствовать качественному росту учащихся и появлению новых специальностей.

В послевоенные годы перестройка системы среднего образования в основном была завершена. Количество учащихся в системе среднего образования в республике значительно увеличилось. Только за 1959 год для различных отраслей народного хозяйства средними специальными образовательными учреждениями было подготовлено 5000 специалистов. Этого количества специалистов со средним образованием для данного периода было достаточно. Однако быстрые темпы развития промышлен-

ности и перестроечные процессы в сельском хозяйстве требовали качественных изменений в системе среднего специального образования: повышение эффективности образования и создание образовательных учреждений нового качества.

Действия, предпринятые партийно-государственным руководством в этом направлении, привели к положительным результатам. Однако для развития культурной жизни и народного хозяйства необходимы были качественные изменения в системе образования: установление преемственной связи между образовательной школой, средними специальными образовательными учреждениями и высшими учебными заведениями.

Ключевые слова: Армения, промышленность, сельское хозяйство, среднее специальное, вуз, техникум, перестройка.

Gurgen V. Vardanyan, *Institute of History of the NAS RA*, PhD in History, Associate Professor, **Reconstruction of Secondary Special Education in Soviet Armenia (1946–1960)**

Summary

Scientific and technological progress made increasing demands on the education system in general and on secondary specialized education in particular. For these reasons, the restoration and reconstruction of secondary specialized education in Soviet Armenia began in the post-war years. The party-state leadership of Armenia made a number of important decisions on the reconstruction of technical schools, which were supposed to contribute to the qualitative growth of students and the emergence of new specialities.

The reconstruction of the secondary vocational education system was mostly completed in the post-war years. In the republic, the number of students of secondary professional educational institutions increased significantly. In 1959 alone, 5,000 specialists were trained by specialized secondary educational institutions for various branches of the national economy. This number of specialists with secondary education was sufficient for this period. However, the rapid growth of the republic's industry and the restructuring processes in agriculture required making qualitative changes in the work of secondary professional educational institutions.


The steps taken by the party-state leadership in that direction gave positive results, but it was necessary to make qualitative changes in the educational system to ensure the connection between public school, secondary professional educational institution and university, which would contribute to the development of the national economy and culture.

Key words: Armenia, industry, agriculture, secondary professional, university, college, reconstruction.

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դրոցենսկ

r.azizbekyan@mail.ru

 0009-0004-4095-0809

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-152

«ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՍՀՄ ՓԼՈՒՂՈՒՄԸ (1985–1991)*

Բանալի բառեր¹ ԽՍՀՄ, Մ.Գորբաչով, վերակառուցում, բարենորոգումներ, ազգամիջյան հիմնախնդիրներ, փլուզում, ԱՊՀ:

Ներածություն

ԽՍՀՄ-ը 1980-ական թթ. երկրորդ կես թևակոխեց հետզհետե հասունացող սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի պայմաններում: Արտադրանքի զուտ քանակաճի ճանապարհով զարգացող խորհրդային տնտեսությունն աստիճանաբար սպառում էր իր առաջընթացի հնարավորությունները: Արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը: Կառավարման վարչահրամայական ուժն ազատ սպառել էր իրեն և, այլևս ի վիճակի չլինելով խթանել արտադրողական ուժերի զարգացումն ու մարդկային գործոնի ակտիվացումը, խոչընդոտում էր նաև գիտատեխնիկական առաջընթացին: Բնակչության սոցիալական ապահովության ոլորտում լուրջ դժվարություններ էին ստեղծվել՝ հանգեցնելով նրա կենսամակարդակի անկմանը: Դրան զուգընթաց ընդլայնվում էին կուսակցական, պետական, տնտեսական ղեկավար մարմինների պաշտոնյաների արտոնությունները: Նման պայման-

* Ներկայացվել է 25.V.2023 թ., գրախոսվել է 12.VI.2023 թ. և 01.VI.2023 թ., ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

ներում խախտվում էին օրենքները, ոտնահարվում էր սոցիալական արդարությունը, ծաղկում էր կաշառակերությունը, գրեթե համատարած էին պետական ունեցվածքի հափշտակումները: Աշխատանքն աստիճանաբար արժեզրկվում էր ինչպես նյութապես, այնպես էլ բարոյապես: Այդ ամենի հետևանքով ԽՍՀՄ ազգաբնակչության շրջանում հետզհետե խորանում էր անվստահությունը երկրի ղեկավարության նկատմամբ¹:

Վերակառուցման քաղաքականության հռչակումը

1985 թ. ԽՄԿԿ Կենտկոմի մարտյան արտահերթ պլենումում կուսակցության գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Գորբաչովը: Նա հասկանում էր, որ երկիրը լուրջ տնտեսական ու քաղաքական բարենորոգումների կարիք ունի, ուստի իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ պետական կառավարման ու տնտեսվարման նոր ձևերի որոնմանը: ԽՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումը հասարակության համակողմանի և արմատական վերակառուցման քաղաքականության ուղեգիծ ընդունեց, որն ամրապնդվեց կուսակցության XXVII համագումարի (1986 թ.) որոշումներով²: Սակայն, ինչպես կյանքը ցույց տվեց, «վերակառուցումը» վաղուց իրեն սպառած քաղաքական համակարգի գեղահարդարման «վերևից» կարգավորվող ծրագիր էր, որն իրականացվում էր կոմունիստական կուսակցության վերահսկողությամբ:

Սկզբնական շրջանում շեշտը դրվեց ոչ թե հասարակության քաղաքական, այլ զուտ տնտեսական բարենորոգումների վրա: 1985–1987 թթ. ծնվեցին ու լայն տարածում ստացան բարենորոգումների նշված ուղուն համապատասխանող կարգախոսներ՝

¹ Տե՛ս **Ազիզբեկյան** 2004, 143:

² Տե՛ս Материалы Пленума Центрального Комитета КПСС. 23 апреля 1985 года 1985, Материалы XXVII съезда Коммунистической партии Советского Союза 1986:

«արագացում», «հասնել գիտատեխնիկական առաջընթացի համաշխարհային մակարդակին» և այլն: Սակայն այդ ուղղությամբ ձեռնարկված հիմնականում քարոզչական միջոցառումները չնպաստեցին տնտեսական ճգնաժամից երկրի դուրսբերմանը: Չունենալով տնտեսական հստակ ծրագիր՝ վերակառուցման նախաձեռնողներն «արագացման» ձախողումից հետո ձեռնամուխ եղան տնտեսության կառավարման մեխանիզմների կատարելագործմանը, փորձեցին ազատություն տալ տնտեսվարողներին: Դա արտացոլվեց ԽՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունիսյան պլենումում տնտեսական բարենորոգումների մասին ընդունված որոշման մեջ³: Այն որոշակի ինքնուրույնություն տվեց ձեռնարկություններին, որոնք անցան տնտեսաշվարկի և ինքնաֆինանսավորման: Վերափոխվեցին տնտեսության կենտրոնացված կառավարման ու պլանավորման ձևերը, ֆինանսավարկային գործող մեխանիզմները: Սկսեցին կիրառվել կառավարման համեմատաբար ժողովրդավարական սկզբունքներ, լայն տարածում ստացավ ինքնակառավարումը: Սակայն դա գոյություն ունեցող ամբողջատիրական կուսակցական և ռազմաքյուրոկրատական վարչահրամայական կառավարման կառույցները կատարելագործելու անհեռանկարային փորձ էր: Նույնիսկ ընդունված ճիշտ և առաջադիմական օրենքներն ու որոշումները հիմնականում պետք է իրագործեին իրենց անընդունակությունն ու անարդյունավետությունը վաղուց ապացուցած հին կառույցները: Բարենորոգումներ նախաձեռնողները, ձևավորվելով կուսակցական քյուրոկրատական միջավայրում և կրելով նրա կնիքը, չհամարձակվեցին հրաժարվել տարիների ընթացքում արմատավորված տնտեսվարման վարչահրամայական գործելակերպից: Մինչդեռ կյանքի հրամայականն էին դարձել նոր, ճկուն ու արդյունավետ կառույցների ստեղծումը, ազատ գործող շուկայի ու ապ-

³ Ст'я Материалы Пленума Центрального Комитета КПСС. 25–26 июня 1987 года 1987:

րանքադրամային հարաբերությունների զարգացումը, իրական մրցակցության ծավալման անհրաժեշտությունը: Տնտեսական բարենորոգումներն այդ ամենը չէին ապահովում ուստի բնական էր, որ ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական կացությունը ոչ միայն չբարելավվեց, այլև 1980-ականների վերջին ավելի վատթարացավ: Զգալիորեն պակասեցին լայն սպառման ապրանքները, շարունակ բարձրացվում էին մեծածախ ու մանրածախ գները, ռուբլին օրըստօրե արժեզրկվում էր: Բնակչության կենսամակարդակի անկումն արտահայտվում էր նաև նրա դրամական եկամուտների, մասնավորապես աշխատավարձի ոլորտում: Այդ ամենին զուգընթաց բարգավաճում էր «սովետային տնտեսությունը», աճում էին կազմակերպված հանցագործությունը, կաշառակերությունն ու կոռուպցիան: Այս երևույթները խոր հիասթափություն առաջացրին խորհրդային մարդկանց մոտ, որոնք սկզբնական շրջանում մեծապես հավատում և աջակցում էին վերակառուցման քաղաքականությանը: Տնտեսական ճգնաժամի խորացումը և վերակառուցման մասին սոսկ քարոզչական բնույթի կարգախոսների ծավալումը սրեցին հասարակության և իշխանության միջև հակասությունները:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով առաջ քաշվեց քաղաքական բարենորոգումների ծրագիրը: 1988 թ. ԽՄԿԿ XIX համամիութենական կոնֆերանսում հասարակական կյանքի ժողովրդավարացման վերաբերյալ համապատասխան որոշումներ ընդունվեցին⁴: Սակայն ժողովրդավարությունն անհամատեղելի էր ամբողջատիրության հետ, ուստի և ընտրվեց հասարակության թվացյալ ժողովրդավարացման տարբերակը: Շրջանառության մեջ դրվեցին «հրապարակայնություն», «ժողովրդավարություն», «դեպի խորհուրդների լիիշխանություն և սոցիալիստական իրավական պետության ստեղծում» կարգախոսները, որոնց ոգուն համապատաս-

⁴ Ст'я Материалы XIX Всесоюзной конференции Коммунистической партии Советского Союза. 28 июня – 1 июля 1988 года 1988:

խան էլ որոշ քայլեր ձեռնարկվեցին: Մասնակիորեն նվազեցին այլախոհների նկատմամբ հետապնդումները, կալանավայրերից ազատ արձակվեցին մեծ թվով քաղբանտարկյալներ: Լայն թափ ստացան երկրի պատմության մինչգորբաչովյան ժամանակաշրջանի «սպիտակ էջերի» լրացումն ու համակողմանի լուսաբանումը: Որոշակի ազատություն ստացան զանգվածային լրատվության միջոցները: Սովորական դարձան վարկաբեկված բարձրաստիճան պաշտոնյաների հրապարակային քննադատությունը և օրինազանց տեղական իշխանավորներին պատասխանատվության ենթարկելը: 1989 թ. սկզբներին երկրի պատմության մեջ առաջին անգամ այլընտրանքային սկզբունքով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններ անցկացվեցին: Սակայն իշխող կուսակցական պետական բյուրոկրատիան ընտրությունների մասին օրենքում հաշվի էր առել սեփական շահերը: Ըստ այդմ՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների մեկ երրորդն ընտրվում էր հասարակական կազմակերպություններից: Ընդ որում, ոչ թե համաժողովրդական քվեարկությամբ, այլ այդ կազմակերպությունների համագումարներում, կոնֆերանսներում և պլենումներում⁵: Հենց նման ճանապարհով ընտրված պատգամավորներն էլ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարներում և երկրի Գերագույն խորհրդի նստաշրջաններում կազմում էին այսպես կոչված «ազդեցիվ հնազանդ մեծամասնության» միջուկը, որի վրա հենվում էր կուսակցական բարձրագույն ղեկավարությունը: 1989 թ. մայիսին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում Մ. Գորբաչովն ընտրվեց երկրի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, իսկ 1990 թ. մարտին՝ երրորդ արտահերթ համագումարում՝ ԽՍՀՄ առաջին և երկրի պատմության մեջ վերջին նախագահ:

⁵ Տե՛ս «Սովետական Հայաստան» 1988, 4 դեկտեմբերի:

Այսպիսով, իշխանության վերին օղակներում գտնվողների մեջ արմատավորված ամբողջատիրական մտածողությունը նրանց թույլ չտվեց լիարժեք իրականացնել բարենորոգումներն ու հիմնովին վերափոխել կոմունիստական կուսակցության միջոցով ամրապնդված քաղաքական համակարգը: Դրան հակառակ, արտասահմանից տնտեսական օգնություն ստանալու ակնկալիքով, վճռական քայլեր ձեռնարկվեցին արտաքին քաղաքականության բնագավառում: 1988 թ. սկսվեց խորհրդային զորամիավորումների դուրսբերումն Աֆղանստանից: Միաժամանակ, հաջողությամբ պսակվեցին ԱՄՆ-ի հետ միջուկային, ռազմավարական սպառազինությունների ու ընդհանրապես ռազմական ուժերի կրճատման վերաբերյալ բանակցությունները, ինչի շնորհիվ վերջ տրվեց «սառը պատերազմի» դարաշրջանին, և Արևմուտքի երկրների (առաջին հերթին ԱՄՆ-ի) հետ հաստատվեցին բնականոն միջպետական հարաբերություններ: 1990 թ., Մ. Գորբաչովի անմիջական ջանքերով, վերամիավորվեցին Երկրորդ աշխարհամարտից հետո տարանջատված գերմանական երկու պետությունները՝ ԳԴՀ-ն ու ԳՖՀ-ը: ԽՍՀՄ-ը սկսեց իր զորքերն աստիճանաբար դուրս բերել Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներից: Այդ ամենի շնորհիվ Մ. Գորբաչովն արտասահմանում մեծ հեղինակություն ձեռք բերեց, մինչդեռ երկրի ներսում աստիճանաբար ուժեղանում էր դժգոհությունը նրա գլխավորությամբ իրականացվող «վերակառուցման» քաղաքականությունից, որը Խորհրդային Միությանն աստիճանաբար փակուղի էր մտցնում:

ԽՍՀՄ փլուզման գործընթացի սկիզբը

Միության ազգաբնակչության զգալի մասն աստիճանաբար համոզվեց, որ իշխող կուսակցական-պետական բյուրոկրատիան ոչ միայն ի վիճակի չէր իրականացնելու արմատական վերակառուցման քաղաքականություն, այլև շարունակ խոչընդոտներ էր հարուցում նույնիսկ «վերևից» սահմանված չափավոր ժողովրդավարու-

թյան կենսագործման փորձերի առջև: Այդ իսկ պատճառով երկրի տարբեր տարածաշրջաններում պաշտոնական իշխանությունների կողքին առաջացան բազմազան հասարակական կազմակերպություններ, միություններ ու ընկերություններ, որոնք, առանձին հանրապետություններում վերածվելով լայն սոցիալական շարժումների, դարձան եթե ոչ ընդդիմադիր, ապա առնվազն այլընտրանքային ժողովրդական իշխանություններ: Կարճ ժամանակամիջոցում այդ ժողովրդական շարժումները երկրի ժողովրդավարացման ուղղությամբ արձանագրեցին շատ ավելի նշանակալից նվաճումներ, քան ձեռք էին բերվել «վերակառուցման» շրջանի նախորդ տարիների ընթացքում: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այդ շարժումների ծագման համար ազդակ հանդիսացան տվյալ հասարակական-քաղաքական միջավայրի առջև ծառայած ամենակենսական խնդիրները: Մերձբայթյան հանրապետություններում դա ժողովրդագրական տագնապալի վիճակից բխող անհանգստությունն էր, Ռուսաստանում՝ կենսոլորտի, Բելառուսում, Ուկրաինայում և Մոլդովայում՝ մայրենի լեզվի և ազգային նկարագրի պահպանման մտահոգությունը, իսկ Հայաստանում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծման հասնելը⁶: Այդ ժողովրդական շարժումներն

⁶ 1988 թ. փետրվարին սկիզբ առած արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը հանգեցրեց Հայաստանում աննախադեպ համաժողովրդական շարժման ծավալման՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծման պահանջով: Եթե սկզբնական շրջանում Արցախյան շարժումն ուներ զուտ ազգային բնույթ, ապա իրադարձությունների հետագա զարգացման թելադրանքով այն աստիճանաբար ազգայինից վերածվեց ազգային-ժողովրդավարականի: Արդյունքում, դեռևս 1988 թ. մայիսից Հայաստանում շարժումը գլխավորող Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի նախաձեռնությամբ՝ 1989 թ. նոյեմբերին ստեղծվեց Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) հասարակական կազմակերպությունը: Այն դարձավ հանրապետության ամենահզոր կազմակերպությունը: Վերջինիս գործունեության ծրագրում Ղարաբաղի հարցի հետ մեկտեղ, հիմնականում ընդգրկված էին հին վարչակարգի տապալման, Հայաստանի ինքնիշխանության խրաջան (հետագայում նաև անկախ պետականության հաստատման), քա-

աստիճանաբար խորացրին խորհրդային կայսրությունից ազատագրվելու միտումները՝ ընդգրկելով նաև Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները: Վերջիններում մեկը մյուսի հետևից տապալվեցին կոմունիստական վարչակարգերը, և այդ երկրները հեռացան ԽՍՀՄ ազդեցությունից: Դա հանգեցրեց սոցիալիստական երկրների տնտեսական փոխօգնության խիստ ինտեգրված համակարգի քայքայմանը, ինչի հետևանքով էլ ավելի վատթարացավ խորհրդային Միության տնտեսական կացությունը: Այնուհետև մերձբալթյան հանրապետություններն առաջ քաշեցին տնտեսական ինքնիշխանության գաղափարը, որը շուտով վերածվեց լիակատար անկախության շարժման՝ դառնալով նրանց պետական քաղաքականության հիմնական ուղեգիծը: Այդ գաղափարը որդեգրեցին նաև մի շարք այլ միութենական և ինքնավար հանրապետություններ ու մարզեր, որոնք, մեկը մյուսի հետևից ընդունելով «ինքնիշխանության» կամ «անկախության» հռչակագրեր, սկսեցին վարել սեփական շահերից բխող քաղաքականություն: Սկսվեց ԽՍՀՄ քաղաքական քայքայման գործընթացը, որն աստիճանաբար կազմալուծեց երկրի կենտրոնացված տնտեսական համակարգը:

Այսպիսով, թերարժեք բարենորոգումները ոչ միայն չնպաստեցին ԽՍՀՄ տնտեսության կայունացմանը, այլև հանգեցրին Միության փլուզման գործընթացի ծավալմանը: Կենտրոնական իշխանությունների՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգամիջյան հարաբերությունների ոլորտներում կուտակված հիմնախնդիրները լուծելու անկարողությունը խորացրեց առաջինների հանդեպ խորհրդային Միության ժողովուրդների անվստահությունը: Դրան հակառակ, մի շարք հանրապետություններում (Լիտվա, Լատվիա, Էս-

ղաքական ու տնտեսական կառուցվածքների համակարգային փոփոխությունների, ժողովրդավարության հաստատման, պատմական անցյալի վերագնահատման, հայոց լեզվի ու հայկական դպրոցների զարգացման խնդիրները:

